





28 282

282



Վ Ա Ր Բ

Ե Օ Ո Վ Ի Ո Ս Ի

Հարազրեալ հեղինակն 'ի Մարտինոսէ
Բլանուակ (*):

Գ Լ . Ա .

Մանկանք խախտիւք՝ էկայք 'ի հանդէս :
 * ԿՈՒՐ Ի ԼՈՐՆ ԻՐ ԴՊՐՈՅ ԻՆԷ ՎՅԷՂ
 ՈՐ ԱՆԲԱՆԻ ԿԱԼԻ ՃԱՌԷՆ ՔԻՔՆԱՊԵՆ,
 ՀԵՐԱԿԱՆՔԷԼ ԸՆԴՈՐԴ յԻՃԱՍԿԱՍ ՊԷՍՊԷՆ :

Ըստ գիտան մարդիկ գեղեցիկ քննե-
 լով մարդկային գործողութիւնները
 և անպատասխանութեանց պատճառները՝ ջա-
 նացին աշխատեցան, որ ետքի եկօղները
 պէսպէս խրատներով կրթեն և բարեկար-
 գեն : Բայց Եզրբոս քան զամենը գերազան-
 ցեց . որուն գործքին մէջ ամենէն աւելի կը

(*) Բլանուայ Մարտինոս էր Յոյն կրօնաւոր, որ
 հին բաներու գեղեցիկ ըլլալով Փիլիսոփաներուն
 սրամտորները ծուռլէն է գիրք ըրաւ յետոյ ԵՂ .

36420
16198

փայլն խնաստասիրութիւնը և բարոյական հանձարը . որ գրեթէ վերին դորութեն շարժելով զարմանալի աւանդեց մարդկանց այսչափ գեղեցիկ և օգտակար կանոններ բարոյականութե՛, որ շատ վեր են երևելի Փիլիսոփաներուն տըւած կանոններէն . որոնք որ մինչև ան ատենը աշխարհք էին եկեր : Իբր զի՝ Եզրբոս չի կամեցաւ առաջ բերել բարակ սահմաններով պատճառներ, և երևելի պատմութիւններէ օրինակներ , որմէս զի կարենայ մարդուս միայն համոզելով բռնագատել՝ որ առաքինութիւն սիրէ, ու մտութե՛ փախչի : Ուրիշ բանով չուղեց մարդկանց վարդապետել, բայց միայն առակով, որ կըսվի Առասպել (*) . որով իբր վախմը կուտայ , թէ թուգունները և այլ կենդանիներն՝ որ խելք ու միտք չունին, միայն բնական հասկացողութե՛ շարժելով շատ բաներէ հեռու կեցան . իսկ մարդիկ՝ որ ունին բանականութիւն , պէտք է ամբշնան երբոր չեն զգուշանար անանկ բաներէն , որ աղ-

Բռնի վարման հին գրեանց մէջն , և հիներուն բերնէն անում շարաբեր . որ գրասուրբն ընդիւր թարգմանած ըլլալով, մենք առաջխորհաբար դարձոյինք : Կերենայ թէ մեր մէջ ալ հին արեւել թարգմանած պիտի ըլլայ . լսան զի հին գրեանց մէջ Եզրբոսին բաներէն ինչ գրելին :

(*) Առասպել իբր լին անանկ առաջներն որ իբր լին եղած, այնչափ ողորմ են . որպէս թէ ինքուին և անշունհ բանը ինչ խօսի : Ասանկ գրասիներ հին ծանանալը շար ինչործածվէին ամեն պիտի մէջ հայոց՝ Յոանայ՝ Արարեացոյ՝ մասնաւոր ճշեից

ուենները, և ուրիշ կենդանիները զգուշանալով ազատեցան մեծամեծ վտանգներէ իրենց ճարտարամիտ խորագիտութե՛ և երբեմն շատ մեծ օգուաներ աշահեցան երբոր տախթը պատահեցաւ : Ուստի Եզրբոս իբր վարքը իբր քաղաքավարութե՛ և խնաստասիրութե՛ սրասիկը մը ձևացնելով գրաւ ամենուն առջին . և ասով Փիլիսոփաներէն երևելի եղաւ , որ առաւել գործքով, քան թէ խօսքով վարդապետեց :

Ծնաւ Եզրբոս Աթորին քաղաքը մեծին Փոխուզից (*), և սնաւ ծառայական վիճակի մէջ : Կտր շատ յարմար կուգայ Պրատն Փիլիսոփային գեղեցիկ խօսքը . որ Կորնիոս ըսված արամախօսութե՛ մէջը ճշմարտութե՛ կը խօսի, թէ || Բնութիւն ու օրէնքը շատ անգամ իրարու հակառակ են || : Վասն

ինչպէս յայտնի է Աճառնէն : Բայց գիտանները երեք րեսով ինչ բաժնէն առասպելը . և Բանական, որ մարդուս բարեւ ինչ յայտնի . և Եզրբոս բանը բարձի պէս ինչ յաւորնէն : Ինչպէս է հէ առաջ Եզրբոսին , և անոր նմանները : Բ Բարոյական, որ անբաներուն բարեբարոյութեւ լիարար ինչ հանէ, ինչպէս է Բ և այլ առաջները Եզրբոսին : Գ Խառն . որ ինչ յաւորնէն, Բէ մարդը ինչ խօսի անբանին հետ . ինչպէս է Ե առաջին, ևն :

(*) Փոխուզիս է գրասուր Ատայի՝ Գաղաթային ու հին Սքանդուլին մէջ պեղը . որ շար ուղորմեր ունի գալի . մէջ ալ է Աթորին ճաղաբը . որ ծնաւ Եզրբոս յայտն աշխարհի 5400, իբր 600 րարի առաջին թուականն . որ հին արեւելի իմեր շար երեւելի եղաւ իբրն առաջները, Բէ

ղի բնութիւնը տրւաւ Եզրբոսին մեծութե ազատ հոգի մը . բայց մարդկային օրէնքը գրաւ զայն ծառայական վիճակի մէջ . սակայն այս օրէնքը չի կրցաւ այլայլել անոր հոգուն ազատութիւնը . երբոր իր գերի վեճակը՝ զինքը մէկ գիէն մէկաւ գիւն նետելով կը չարչարէր . և զանազան վիշտ նեղութիւները՝ ոչ երբէք կրցան զայն իր բնական կարգէն փոխուել :

Բաւական չեղաւ Եզրբոսին գերի վիճակը, այլ և գեղեցիկ սիրտ դարչառեսիւրէր, անանկ որ աշխարհք չէ եկած այնտեղ ազնիւ մարդկան զի գրուին էր սրածայր երկայն, քիւթը տափակ, վիրը հաստ ու կարծ, սպիտակ քր թանձր, զոյնը սեւ, կապուտ . և այս պատճառաւ կըսէին Եզրբոս, այսինքն Էթիօփս . որ կը նշանակէ Եթովպացի (*) : Ասկէ ՚ի զատ փորն էր չամաղանց դուրս, կռնակը

պէս գերի ծնաւ . Բայց ճար ըրաւ Ալէէն գնաց Բարոյանի միւրիւստոյնութիւն սորվեցաւ, որ շաք յարգելի ուսում էր . Բայց փեսաւ որ այն վիճակին մէջ այլը Բան էի կէսար սորվեցնել, սխալ էին գրանիներուն Բերնէն խօսելով այս առաջինը շինել, որ գէթ ստուկարենայ Բարի վարձ սորվեցնել . որ շաք մեծ յարգութիւն ունեցաւ նախ Զոանաց մէջ . որ Սոյրաք փիւրհոգիան սնապենը որանաւոր դարձոց Բուր ստալիները . Եւ յետոյ ա մէն ազգ թարգմանեց արտօքելի ըլլանուն համար :

(*) Եզրբոսին ծնողքը Եթովպիայէն, ի՞նչ ա պէտք է ողբերկն եկած ծախված էին փոխ-գիւնային մէջ . ուստի իրենք որուն որ գերիին էին, Եզրբոս ալ նախ անոր էր . յետոյ ծախվեցաւ որքիւնէրուն :

Տուռ ստպատողն խամզուտ . այնչափ որ ասոր տղեղութիւնը աւելի էր քան զԹերսիստէսին . որ (*) ծիծաղելով կը նկարագրէ հոմերոս : Ամէն բանէն աւելի մեծ պահասութիւն էր դժարախօսութիւնը . որուն խօսքն էր աննշան և ճայր անորոշ (**):

Ահա այս ամէն պահասութիւնէրս յարմարեցան Եզրբոսի ծառայական վիճակին . որ այնտեղ արտարոց բաներու մէջ գանձուցելով այս տղեղ և սնեյարմար մարմնովը ի նշակես կրցաւ իր ծառայական կեանքը վարել թէպէտ ասանկ անշորհք էր դրսի տեսքը, և մարմնը այլանդակ . բայց հոգին Եզրբոսի աղիւն էր սրամտ և քաղաքավար . որ զանազան գիւտերով և խելքով լեցւած՝ չուտով կը գտներ ամէն բանին հնարքը, որչափ խրթին և նուրբ բան ըլլար (***) :

(*) Թերսիսի Զոյնը անանկ գարշապետիւ էր ի առ անշորհ, որ պարտիւնէրը ստալ էին ըրէր . ինչպէս հոմերոս Բանասպետին ալ ծառք ընելու համար անոր կերպարանքը ինչ կարագիւն : Այս պիտէր և սնապարծ մարդէր մը գնաց շերտիւն գաճին գով . անալ մէջ մը յետոյ զարիաժին պէս ընիտուտաւ . իբր 1200 արտիւրէն թոսալանէն ստալ :

(**) Բանասպ այսպէս պիտէր ինչ կարագիւն . Բայց ինչ որ ինքն, թէ Եզրբոսին ինչպէս որ խելք գեղեցիկ էր, անանկ ալ մարմնը, և խիստ յարմար գաղղրայան երաժիշտ էր ավելին վեր :

(***) Շաք առաջինը խառնուեցան Եզրբոսին առաջիններուն հետ . անանկ որ Եզրբոսին առաջ և յետոյ շինասած առաջիններուն շաք Եզրբոսին գործիին մէջ խառնեցին : Այս պարաճառաւ որ ավ

Զբոսարարութի Ելուվբոսի :

Երբորոսին առջև արն որ զննքը գնեք էր՝
 ասանկ կոչտ անշնորհք տեսնելով զայն, միտ-
 քը դրաւ թէ տանը ծառայութիւն չսխտի
 կրնայ ընել . ուստի արար խրկեց որ հոն
 երկիր փորելով աշխատի . բայց Երբորոս հոն
 դացածին սկս սկսաւ անանկ լաւ աշխատել
 սրտանց որ չի կրնայ ըլլալ : Օր մը արը գե-
 նին տունը գնաց անտեղի գործքերը զայելու
 համար . մէկ պարտեղական մը տեսնելով ա-
 նոր գալը՝ ընծայ բերաւ իրեն աման մը խիստ
 ազնիւ և պատուական թուղ, որ սիրով ա-
 ուաւ հաճեցաւ, ու տըւաւ պահելու իր մէկ
 ընտանի ծառային, որ կըսէր Ագաթօրոս
 (*), որպէս զի երբոր բարեկեցէն էլլէ՝ առ-
 ջին բերէ : Այս միջոցիս մէջ պէտք եղաւ որ
 բանիմը համար Երբորոս տունը մտնէ : Ագա-
 թօրոս այս բանն իրեն առիթ ընելով գնաց

Էլեւտի մէջ որ Բարգմանած Կայ, միախեբայ լէ . ու
 բոան մէջ աւելի է, որուն մէջ պահաս :
 (*) Ագաթօրոս ին Բարգմանի բարեկոսն պաշ-
 արտեայ . որ իբրեւնայ ին արագաւարտ աշխոյժ
 մարդ ըլլալով այս անուամբ ին Կուլիբ . և անով
 սիրելի էլաւ էր փերոնն որ համարչախեցաս այս
 զբոսարարութի ընելու Ելուվբոսին լրա :

իր ընկերներուն մէկին ըսաց թէ եկն աս
 թուղերը մենք ուտենք . երբոր մեր արը ու-
 ղէ, Երբորոսին վրան կը ձգենք, թէ տունը
 մանեղու ատենը կերաւ ծածուկ : Այս բա-
 նիս վրա մենք կրնանք շատ սուտեր շինելու,
 որ ճշմարիտ երևնայ, անանկ որ Երբորոս չի
 կարենայ այս զբոսարարութիւն զննքն արդա-
 րացնել . որովհետեւ անոր վկայութիւնը չի
 կրնար դէմ կենալ մեր մէկ խօսքին՝ երբոր
 լաւ հաստատենք . հասաւ ինչպէս պիտի կա-
 ըննայ մեզն սուտով յաղթել . մանաւանդ
 մեզն պատասխան տալու մէկ պատճառ մը
 ցուցմունք մը չունի :

Ասանկ խորհուրդ ընելէն ետե այս ըրած
 միաբանութիւն չար խորհուրդը կատարեցին,
 ու ամէն մէկ թուղն ուտելու ատենը բարձր
 ձայնով կը ծիծաղէին լսելով . || Այն քէջ
 ողորմելի Երբորոս || :

Ելաւ արը բազնիքէն և ուղեց որ թուղը
 բերեն . երբոր լսեց թէ Երբորոսը կերաւ,
 անանկ բարկացաւ, որ մէկէն հրամեց զի-
 մացը հանեն . որ տեսածին սկս կանչեց .
 այ թշուառական, ինչպիս յանդգնեցար մտար
 սեղանատունն ու կերար թուղերն որ ինձի
 համար պահած էր :

Երբորոս լսելով այս յանդիմանութիւն լաւ
 հասկըցաւ բանը . բայց գԺԷարութիւն հոն
 էր՝ որ չէր կրնար խօսքը արտաբերել ու պա-
 տասխան տալ : Այս պատճառաւ շուտով
 յաղթը վեցաւ սուտ վկաներուն խօսքով . և
 տեսաւ թէ չարաչար ծեծ պիտի ուտէ, ըն-
 կաւ տիրոջը ստըը մեծ աղաչանքով խնդրեց,
 որ քէջ մը տանն տայ իրեն : Ուստի վաղեց

կերակուր եփելու տեղն ու քիչ մը տաք ջուր
բերաւ հոն խմեց . յետոյ մատը խօթեց բեր-
նին մէջ սիրտը ետ բերաւ : Կայիս բերնէն
սպառլ ջուր եկաւ . մը զի բոլոր օրը բան չէր
կերած : Ետքը աղաչեց տիրոջն որ հրամայէ
ամբաստանօղ թշնամիներուն, որ անոնք ալ
անտակ ընեն . որպէս զն յայտնի ըլլայ թէ
ո՞վ է կերեր զանոնք, և ուրիշն խօսքով չի
խարվի :

Իսկ Կորնելիոսը զարմանալով անոր սրամիտ ու-
շնունթեր վրա, սպասելէց որ սուտ վկա-
ներն ալ խմեն այն ջրէն իրեն առջին : Անոնք
ալ խմեցին . բայց փոխանակ որկորը պօշաւը
տանելու մատը, գէտ ՚ի ընտելըր տարին, որ
չի փրսխեն : Սակայն հազու թէ խմելը ըն-
ցուցին, ներսերնին աւերելով գանկը մը եկաւ
իրենց, և ահա բոլոր կերած թուղերը դուրս
եկան . որոնց յանցանքը և անօրէն զոտը-
տութիը յայտնի եղաւ ամենուն : Իսկ Կորնելիոսը
հրամայեց մէկալ ծառաններուն, որ զանոնք
մերկացնեն, և լաւ մը ծեծեն : Արոնք ան-
ատենը իրենց վրա փորձելով լաւ հասկը-
ցան այս ճշմարտութիւնը առակին, որ կրտս .
|| Ո՛վ որ նենգութեմ չարութի կը պատրաս-
տէ ընկերին, իր գլխուն կը բերէ այն բո-
ւր չարքէն որ ուրիշին համար կուղեր || (*) :

(*) Եղբայրս այս առջի պէրը ի՞նչնայ թէ
Փոխ-գիտ գնէր եր Եղբայրս Անիէնէն դառնալէն
էրա . իսկ Անիէնէն երկալը ծնօղիին փրոջը հրա-
մանովը պիտի ըլլայ . որ մեռնելէն էրա ստոր ծախ-
ված ի՞նչնայ, իսկ այս մարդը իրա մեծաբան էր,
Բայց անիմաստ ըլլալով Եղբայրս յարգը չէր պէր :

Հիւրասիրտութիւն Եղբայրս :

Սուս օրը Կորնելիոսը քաղաք դարձաւ . և Եղբ-
այրս երկիր փորելով կաշխատէր ինչպէս որ
պատելած էր իրեն : Եղաւ որ Արտեմի-
սին (*) Քուրմերը ուրիշ մարդկանց հետ
գիպածով ճամբայէն մոլորեցան և ժուռ
գալով եկան Եղբայրսին հանգիստեցան . եր-
գումով աղաչեցին, թէ (**) Վանատուր
Գիտին համար ըլլայ քաղաքին ճամբան ի-
րենց ցցընէ : Անալ շուտ մը զանոնք նստե-
ցուց ծառին տակը՝ շուք տեղ մը, և իրենց
քիչ մը ուտելու բան հանեց լաւ մը մեծա-
րեց . յետոյ պատուելով զանոնք առաջնոր-

(*) Արտեմիս լածոսէն մեր մէջ Անասիտ իւ-
նէր . որ հայոց ազգին գլխաւոր իւրաքանչեւ էր . Ու-
նիէնիս լաւ դասնայն տրէր էին անոնք : Առա-
պաշտները իւրեքին, որ այս լածոսէն Գիտին առ-
ջին էր և Ապոլոնիէն իւրեք . որ Բուր Ասիային
պաշտպանը տրէր էին . անոր համար ստոր Քուր-
մերն ալ Շէյխերը ստանի պարտեցան Եղբայրսին :
Տէս մեր ճիւղայրսին 651 համարը :

(**) Գիտիս ի՞նչ Արտեմիս Արտեմիս ծէր լածին
որդին ըլլալով, Բուր լածներուն հայրը ի՞նչ
վէր և անոնուն գլուխը . որ հին իւրապաշտները
անոնի մեծ ի՞նչ տնէին, որ անոր անոնանը ինչ ըն-

դու թի՛ ըրաւ մինչև շտակ ճամբան հանեց։
 Իսկ ճամբորդները ուրախանալով Եզրբոսին
 մեծարանացը վրա, և անոր երախտիքը ճանչ
 նալով՝ ջերմեռանդ սրտով թմեհերին վեր
 ցուցին երկինքն ու աղօթքը ըրին պաղատան
 քով իրենց բարերար Եզրբոսին համար։ Ե
 զբոս դարձաւ իր տեղը, բայց ճամբուն աչ
 իստանքէն և տաքէն յոգնած ըլլալով սառ
 կեցաւ քնացաւ։ Բայց քունին մէջ երազ մը
 տեսաւ թէ (°) Բաղդը մտեցաւ իրեն, ու
 լեզուն բացաւ • և իրեն տըւաւ զօրութիւն
 խօսելու, և առակներ շինելու։ Ո՛հ ըսաւ
 արթննալով, ի՞նչ անոյշ քնացեր եմ, և ի՞նչ
 բարի երազ տեսայ • ա՛հա ի՞նչպէս զարմա
 նալի դիւրութի՛ կը խօսիմ • ա՛հա առանց
 դժարութե՛ կրնամ ամէն բանին անուանե
 ըր տալ եւ, եւ, Բրիւ։ Գլխէ Երկնաւորն,
 որ այս բարիքն ինձի եղաւ երախտեացս փո

տի՛ր + որ ըւլար՝ հարիւս - Իսպարելու - էր։ Ուստի
 շաք անգամ օգնել փնած հայր ի՛նչ ի՛նչէին, և եր
 Բե՛տի լանսպար, այսինքն ինտմօն։ Տէս Ճէ՛մ. 619։

(°) Որովհետեւ Բաւնապայ այս պատմութիւնը
 Իսպարաշաքեան գրեանց մէջէն հանել է • որոնց
 Գով օպարաշաքեան միւսափրիւն պատիւ օգնութի
 ընէւը՝ շաք մեծ Բան էր • ինչպէս որ ամէն ազգի
 օրէնքն է։ Ուստի Եզրբոսին ըրած Բարեբարութե՛
 մեծութե՛ հասկընելու - հասար, ի՛նչէին՝ թէ Բաղդ
 իրեն հարաւորութե՛ ըրաւ • որոնք թեպէս Իոյր ի՛նչ
 Բան ըրաւ մէ՛ Գով լըս Ինչա՛, որ շաք անգամ
 Գովաւորով Իսպար Բարին անարժանեբարն, և ի
 Գովնէր որ արժանաւորին պայ • Բայց աստի՛ն
 Գարտիին ակէն Գովն, Բարին Գովն ի՛նչ ի՛նչ

խարէնը, որ մտորած օտարականներուն ըրի
 Ուրեմն երբոր մէկը բարեբարութի կընէ,
 պիտի յուսայ թէ հարկաւ իրեն ալ բարի
 կըլայ։ Եզրբոս տեսնելով թէ այս մեծ բա
 րիքն իրեն հանդիպեցաւ՝ ուրախութե՛ լեց
 ւած սկսաւ ալ աւելի հոգ տանելով աշխա
 տիլ անոնի սրտանց, որ չէ եղած։

Գ. 1. Գ.

Վճարումն Եզրբոսի։

Օ կեսս անունով մէկը վերակացու էր
 գեղի տանը, ուր կաշխատէր Եզրբոս։ Այս
 մարդը ելաւ արտը գնաց որ տեսնէ, թէ
 ծառաները հաւատարիմ կաշխատի՞ն ինչ որ
 իրենց հրամայած է։ Տեսաւ որ աշխատող
 ներուն մէկը անհոգութե՛ իր գործքը թո
 ղուցեր չէր աշխատէր, մէկէն վրան վաղց
 սկսաւ սաստիկ ծեծել խեղճը։ Այս ան
 գլութե՛ լը չգլմացաւ Եզրբոս • սիրտը ցա
 ւելով մտեցաւ բաց ինչու համար ասանկ
 չարաչար կը զարնես խեղճ մարդուն, որ
 քեզի գեղութե՛ մը չէ ըրած • դուն այն մար
 դը չէ՞ որ ամէն օր բոլոր տանը մարդկանց
 նեղութիւն և չարչարանք կուտաս առանց
 պատճառի • իրաւ որ ըրածներդ կըսեմ մեր
 տիրոջը։ Չենաս ընելով Եզրբոսին ղուրցած
 խօսքերը շատ զարմացաւ անոր համարձա
 կութե՛ն ըրաւ • ուստի մէկէնիմէկ ինքնիրեն

մտնողտալով կըսէր • Թէ ահա Եզդրոս խօսիլ սկսաւ • ասկէ ետև իմ բանս իխտա դէշ է • մանաւանդ երբոր արս հասկընայ իմ ըրածներս : Ուրեմն պէտք է որ ես Եզդրոսէն առաջ խօսիմ, և ամբաստանու թիւ ընեմ անոր վրան • վերջև արս իմ գործքերս խնայածին պէս զես կը վերջնուէ պաշտօնէս :

Ասանկ մտածելէն ետև ճամբայ ելաւ քաղաք գնաց արը դտաւ, և մօտենալով քովը խուոված երեսով մը բարևեց : Տըր երեսը նայելով հարցուց թէ ի՞նչ պատճառէ եկած է քեզի այդ խուովու թին, որ կերպարանքէդ կերևնայ : Պատասխանեց ջենաս, թէ գեղի տունդ մէկ արտաքոյ կարգի հրէշ մը եղաւ : Ի՞նչ է ըսաւ արը, ծառերուս մէկը ատենէ դուրս պտուղ տըլաւ, թէ ձիերս ցուցանք ծնան : Չէ ըսաց ջենաս, հապա Եզդրոս որ միշտ համր էր չէր կրնար խօսիլ, հինա խիտալաւ կը խօսի : Չայնդ վար քաշէ ըսաւ արը • հրէշի տեղ ես գրեր այդ գիտւածը :

Արկնեց ջենաս, ար իմ ճամբորտ կըսեմ, որ ես լուռ թեմով անցայ, և չեմ պատմեր Եզդրոսին ինձի տըլած նախատինքները : Բայց ատե՛ր թէք և Աճներուն գէմ ըրած հայհոյանքներուն, և յանդրնական խօսքերուն չեմ գիմնար, ահա կըստատմեմ : Այս խօսքերս որ լսեց արը անանկ բարկացաւ Եզդրոսին վրա, որ մէկէն ըսաւ, թէ ահա այն թշուառականը քեզի յանձնեցի, ի՞նչ որ կուզես, ըրէ անոր կուզես ծախէ, կուզես մէկին տուր • ինչպէս սիրտտ կուզէ անանկ ըրէ • վերջև ես բու կամայդ կը յանձնեմ զայն :

ջենաս երբոր բացարձակ ար կըսաւ Եզդրոսին՝ հասկըցուց անոր, թէ իր ազատու թիւ բողբոլին անկէ կը կախվի : Եզդրոս ալ սրտատախան տըլաւ, թէ ինչ որ ձեռքէդ կուգայ ըրէ ինձի • և սր բանն որ հաճոյ է քեզի, իմ անձիս հրամէ : Այս խօսակցութիւնս վրա յանկարծ վաճառական մը եկաւ հոն անատուն գնելու համար • հարցուց ջենասին, թէ ունի՞ն ծախու անատուն : Անալ չէ ըսաց • բայց մէկ գերի մը ունիմ ծախու, որ հոս մօտ է, ուզես կրնաս գնել : Չայս բտելով կանչեց Եզդրոսը առջին : Իսկ վաճառականը երբոր տեսաւ անոր կերպարանքը սկսաւ ծիծաղիլ • Ուստի՞ գտեր էս ըսաւ այս ցուցանքը, որ պտուկի նման է : Մարդ է, թէ ծառի կոճ • թէ որ ձայն ալ չունենար՝ պիտի կարծէի թէ տիկ է հովով լեցուն • ինչո՞ւ ճամբայէս արգելեցիք • ասանկ մէկ այլանդակ մը ինձի ցըրնելու համար : Այսպէս խօսելով սկսաւ երթալ իսկ Եզդրոս ետևէն վազեց • կաղաչէր որ քիչ մը կենայ • վաճառականը բարկանալով կըսէր • գնա՛ կորի՛ր գարշելի : Պատասխանեց Եզդրոս, թէ հապա ինչո՞ւ համար այս գեղս եկար : Եկայ որ ըսաւ վաճառականը՝ ըսաւ քան մը գնեմ • բայց ինձի հարկաւոր չէ ասանկ աղեղ անպիտան մարդը, ինչպէս որ դուն ես : Չես գնէ՛ ըսաց Եզդրոս • և թէ ինձի կատաս, քեղինեղու թի մը չեմ բերեր • և անանկ ըսաւ ծառայութի մը կընեմ, որ մտքէդ ալ չէ անցած : Հարցուց վաճառականը, թէ ի՞նչ օգուտ կրնամ յուսալ քեզ մէ, որովհետև ասանկ կերպարանքի մէջ ես,

ամենուն ատելի և դարչելի կրլաս : Պատասխանեց Եզրբոս, թէ չուզին տանդ մեջ անհանգարտ կանչվըռտող լայկան տղաք . զիս անոնց վրա դիր . որոնք զիս տեսնելով կրբ մէկ զարհուրելի բանէ մը կը վախնան : Խնդաց այս խօսքիս վրա վաճառականը . ետ դարձաւ Զենասին հարցուց , թէ ի՞նչ տամ որ ինձի տաս այս ողորմելին : Անալ ըսաւ երէք դրամ (*) : Վաճառականը հանեց ստակը արւաւ ըսելով թէ ոչինչ արւի , ոչինչ գնեցի : Ուստի երկուքը միասեղ սկսան գնալ , և երբոր հասան վաճառականին տունը , երկու տղաք կային հոն , որ դեռ կաթ կուտէին , տեսածնուն պէս սկսան պօռալ : Տէս ըսաւ Երբօջը ի՞նչպէս խոստմունքս կատարվեցաւ , հիմակուց վախցան տղաքը : Վաճառականը խնդարով պատուիրեց , որ մէկալ ծառաները բարևէ . որոնք տեսնելով զայն կը զարմանային իրարու ըսելով . իրաւ որ այս մէկ մեծ գժբաղգու թի մը կը նշանակէ մեր Երբօջն որ ասանկ անշորհք մարդ գնեց . երևու թը կը ցընէ թէ տանը պիտի բերէ մէկ գէշ ձախորդու թի մը (**):

(*) Գաղտնիքին իւրն է օսու . իսկ Յոնը օսու ըս . որ ինչնախախէ՛լ դրամ Դանի նախարախիք . որ հին Յոնները ին գործածէին այս սպախը . Բայց յայտնի չէ թէ Դանի զոտոտու իարժեք մէ՛կ օսուը , Թեպէք ի՛երանայ թէ յաժ էր գինը :

(**) Որովհետեւ հեթանոսները մօեն բան իսխարդոտութի ին մէկնէին , մնւն բնախան բաներն աւայն մարտը իստանէին . զարօրինախ ալիքն խաղալու ստարտնց դիմայնին էլաժ մարդը , ևն . որ մնւն

Գ. Լ. Ե .

Ճարգարհարոտի Ելուէրոտի :

Քանի մը օրէն ետև վաճառականը կամեցաւ Ատիա երթալ . ուստի ծառաներուն պատուիրեց , որ բեռները կապեն պատրաստ ըլլան որ մէկալ օրը ճամբայ ելլեն : Անոնք ալ ամէն բան կարգաւորեցին ինչպէս որ Խորը պատուիրեք էր , և բաժնեցին իրենց մէջ բեռները ինչ որ ամէն մարդ պիտի տանէր : Եզրբոս կազաչէր որ իրեն թէ թե բեռ տան , որովհետև ամմէնէն ևտքը նորեկամ ըլլալով ասանկ բաներու սորված չէր : Անոնք ալ զինքը պարտաւորեցին որ բան մը չառնէ , և ախատանք չի քաշէ : Պատասխանեց աւնոնց թէ արգարու թի չէ առանց աշխատանքի մնալ . ամէն մարդ պէտք է իրեն բեռը տանէ : Ընկերներն ալ իրեն կամացը ձգեցին . ինչ բեռ որ ուզէ , զայն թող տանի իրեն յարմար : Եզրբոս սագին անգին նայելով կրդիտէր բեռները , ամանները և տօպրակները . աղաչեց որ հացին ամանը իրեն կուտակը տան , որ երկու հոգու բեռ էր . ուստի սկսան ամմէնքը խնդալ վրան ըսելով

Երբօջ
 86/91

հին մարտնները ին պահէն : Ահա Ելուէրոտի ին պարանսին նայելով ալիքն չի սեպեցին , իարժելով , Թէ Դանը խախորդոտութի պիտի բերէ :

ԳՅՅՐԱՍ

ԻՍՏԱՆԻ ԳՅՅՐԱՍ

Թէ այս խեղճ գերիին պէս անխելք մարդկայ արդեօք աշխարհքն մեջ. որ իր յիմաբուժելը ահա ամենուն յայտնի ըրաւ. վասն զի խնդրեց Թէթե բեռն ու ընտրեց առաւ խիստ ծանր բեռը: Սակայն պէտք եղաւ աւոր կամբը կատարել. ուստի բարձուցին վրան բեռը. որ այն ծանրութեամբ տակը աշխատելով ասդին անդին կրգլորէր: Իսկ վաճառականը այնչափ բեռն անոր կռնակը տեսնելով կըզարմանար, Թէ այս ի՞նչ ջանքով կաշխատի Եզրբոս. իրաւ որ կրտէր՝ ահա իր գինը հանեց. զի ձիւ մը բեռ մինակ կրտանի:

Երբոր հասան սանդուղի խօնակ մը, պէտք եղաւ բան ուսել. Եզրբոսին հրաման եղաւ որ ամէն ծառաներուն հաց բաժնէ. անալ որ բաժնեց ամանին կէտը հասաւ կերակրէն ետքը. և բեռին կէտը Թէթեցաւ անանկ որ շատ գիւրուժի կերթար ճամբան: Իրիկունն ալ նորէն բաժնեց ծառաներուն հաց. ուստի մեկալ օրը Եզրբոսին ամանը սրարպէցաւ. որ կռնակը զարկած առանց աշխատանքի կերթար ամենէն առաջ. որոնք չկրտէին ինչ լուսն. մինչև կը տարակուսէին, Թէ իրենցմէ առաջ գացողը Եզրբոսն էր Թէ ուրիշ մարդ. բայց երբ գիտցան Թէ այն է շատ կրզարմանային իրեն ճարտարմութեը վրա. որ անանկ տգեղ աննորհք մարդ ըլլալով ծաղը էր եղեր իրենց, ու այնպիսի խելք բանեցուց հացին ամանն առնելով. զի լաւ գիտէր Թէ այն բեռը շատ չպիտի մնայ իրեն վրան: Իսկ ընկերներն ուրիշ բեռ տանելով չէ կրցան յոյս մը ունենալ, որ բե-

ռէն Թէթեանն ճամբորդութե մեջ. որովհետեւ ծախսելու բաներ էին՝ չէին կրնար պակսիլ ուտելու բանի պէս:

ԳԼ. Զ.

Երբոր Վաճառական Եզրբոսն էր:

Վաճառականը Վսիա հասաւ, և հոն իր գերիներուն շատը ծախեց աղէկ դնով. մի այն երեք հոգի մնացին քովը. մեկը նոտար էաւ ընչ, մեկը երգիչ հանէնքէ, մեկայն ալ Եզրբոս: Վաճառականին մէկ բարեկամը իրեն խորհուրդ կուտայ, Թէ այս երեք գերի ծանր դնով ծախելու համար (*) Սամս կղզին երթայ հոն ծախէ: Երբոր հասաւ հոն աղէկ լալթեր հագցուց նոտարին ու երգիչին, վաճառանցը փառքը հանեց, որ ծախէ: Բայց Եզրբոսին յարմար բան մը չէ գտաւ հագցնելու, որ քիչ մը զարգարվի. որովհետեւ անանկ անճոռնի էր մարմինն՝ որ միայն մէկ քուրճ մազէ հագուստ մը կրցաւ

(*) Սամս կղզի ըստ քճ. սուսամ ատարը է Եթէսոսին Դիմարց Սիպիւսիէն անդին. որ հին աստուծ շէն ըլլալով վաճառականութե փեղ էր և Բնիսիւր անուանի էին. որ խաւ աման շէն է և աստի գրան իւր Գլխիտոս. այս կղզիէն էր Պիւսիսոս փիւսիտոսն:

հագցրնեւ. և անանկ այլակերպ դրաւ ընկերներուն մէջ. որոնք որ կը տեսնէին՝ զարմանալով կըսէին, թէ այս հրէա ուրիշ բանի չի գար, հասա մեկաորնք ալ կաւրէ: Եւ զորոս թէպէտ միտ սասնի ծաղը կըլլար անարգութիւնով ամէն տեսնողներէն. սակայն ամենեւին չէր այլայլէր, և ամենուն ուշ գնելով միակերպ կրնայէր: (*) Քսանդոս Փիլիսոփան անատենը Սամոս կղզին կը բնակէր. որ մը ելաւ վաճառանոցը գնաց. երբոր տեսաւ թէ այն երկու ծառաները լաւ հաբած էին, և Եզրբոս անոնց մէջ անանկ անշնորհք հագուստով շատ զարմացաւ վաճառականին հնարքին լիա, թէ այն այլակերպ մարդը դրեր է մէկաւրնց մէջն, որ անոր անշնորհք երևնալովը մէկաւրնք աւելի գեղեցիկ երևնան:

Ուստի այս Փիլիսոփան մտենալով անոնց՝ հարցուց երգիչին, թէ ինչ տեղէ ես: Անալ պատասխան տրւաւ թէ (*) Կասպագովկացի եմ: Հարցուց թէ ինչ գիտես ընեւ: Անալ

(*) Այս փիլիսոփան Ռեպեպ շաք երեւելի էր, բայց այն իղլիկին մէջ մեծ անուան ունէր. լատին գլխադրին Դաբապանը գլուխն էր, ու շաք աւելեալն էր ունէր, և շաք մեծուրէ. մինչև ամենուս ասովին ցարգելի էր:

(**) Կասպագովկիա ինչովի կայսերի. որուն բնակիչները Դասիբոս ինչովի էին: Արեւնայ Ռեայս գերերն արեւելեան իողմերէն էին. Կասպագովկիա երկար ժամով բան սորվէր է, իմ ծնողքը հոն է. ինչ ծախոված է, և իրենց դասակն ալ գերի ընլաւ լաճառասխանը գնէր է:

ըսաւ, ամէն բան գիտեմ: Այս պատասխանին լիա լիա խնդաց Եզրբոս ակռաները բանալով: Քսանդոսին աչկերաները իրեն հետ ըլլալով Եզրբոսին երեսն որ տեսան անանկ ակռաները բաց, կարծեցին թէ մէկ ցուցանքմը է. որոնցմէ մէկը կըսէր, թէ ան տարակոյս այս մէկ կատղած կենդանի մը սիտի ըլլայ, որ ակռաները բացաւ: Մէկայն ալ կըսէր, թէ արդեօք ինչ բանի համար ծիծաղեցաւ: Մէկ ուրիշն ալ կըսէր, թէ սոսկալով խոժողեցաւ ու գէտիլը ծըռեց, չէ թէ ծիծաղեցաւ: Ուստի ամէնքն ալ ուղեցին հասկընալ անոր ծիծաղին պատճառը, մինչև մէկը մտեցաւ Եզրբոսին հարցուց, թէ ինչո՞ւ համար անանկ խնդացիր: Անալ ըսաց. գնա՛ քովէս ծովու ոչխար: Այս պատասխանս անանկ ամբջուց զայն, որ տաքնալով մէկէն փախաւ:

Իսկ Քսանդոս հարցուց վաճառականին, թէ երգիչին գինը որչափ է: Անալ ըսաւ հազար գահեկան: Քսանդոս տեսաւ որ չափազանց է գինը, գնաց մէկալ գերիին հարցուց. ո՞ր քաղքէն ես: Պատասխանեց, թէ (*) Լիւրպալի եմ: Ի՞նչ բան գիտես հարցուց: Անալ ըսաւ՝ ամէն բան գիտեմ: Եւ զորոս լեւելով՝ նորէն սկսաւ խնդալ: Այս Փիլիսոփային մէկ աչկերաը չկարէր թէ ինչ պատճառաւ կըխնդայ, ուղեց հարցընեւբայց իր ընկերներէն մէկը զինքն արգելեց ըսելով. թէ որ դուն ալ կուզես ծովու նս

(*) Լիւրպալի գին արեւը ազգէին Արիֆիէ գասառին մէջ. որոնցմէ գերի էին ծ է նոպարը:

խաղ կողմը նէ հարցուր: Անտոնը Քսանդոս մտտեցաւ վաճառականին հարցուց թէ քանի՞ է նոսարին գինը: Պատասխան տրւաւ թէ երէք հազար դահէկան:

Այս չափազանց գինը Քսանդոսին սիրտը նեղացուց, ուստի սկսաւ ետ դառնալ: Բայց աշխերաները հարցուցին թէ չի հաճեցա՞ր գերիններուն. հաճեցայ ըսաւ. իմ ուղածս են. սակայն օրէնք դրած է, որ մէկ գերլի համար այնչափ ստակ չի տրուի: Եթէ այդպէս է ըսին՝ օրէնքի դեմ չըլլար, թէ որ տը գեղ գերին գնէ. որ անոնց չափ քեզի ծառայու թի կրնայ ընէլ. և մենք կըլճարենք անոր գինը թէ որ կարժէ: Պատասխանեց Քսանդոս, թէ խէլքի դեմ բան է, որ դուք գնէք՝ ես ծառայի տը ըլլամ: Ո՛ւր թողունք որ իմ ընկերս աւելի զարգարանք և մարդու թի կրտիէ, նայինք կուղէ՞ ասանկ աղտոտ և այլանդակ ծառայ: Անոնք ալ ըսին թէ այս պատճառը չի կրնար խափանել, որ չի գնես այն գերլին. որովհետև առակ մը կայ կըսէ, որ պէտք չէ հնազանդիլ կնկան խօսքին, և անոնց շատ մտիկ ընէլ:

Քսանդոս ըսաւ, թէ քանի որ չենք գնած երթանք նայինք բան մը գիտէ՞. չըլլայ թէ ծովը նետենք տրւած ստակնիս: Ուստի մտտեցաւ Եղբորոսին ըսաց. ուրախ կեցիր: Ինչո՞ւ համար՝ հարցուց Եղբորոս մի թէ ես տրտունմ եմ: Քեզի կըբարեւեմ ըսաւ Քսանդոս. անալ ըսաւ և ես քեզ կըբարեւեմ: Ամենքը զարմացան այս շնորհքով պատասխանին վրան: Հարցուց Քսանդոս, թէ դու՞ն ուստի՞ ես: Ես ըսաց՝ սև եմ: Այն չէ հար-

ցուցածս ըսաւ. ևս կուղեմ իմանալ, թէ մը քաղքէն ես, և ո՞ւր տեղէն: Ես մօրմէս եղեր եմ, ըսաց Եղբորոս:

Այն չեմ ուղեր գիտնալ ըսաւ, հապառուր տեղ ծնած ես: Պատասխանեց Եղբորոս, թէ իմ մայրս չէ պատմած ինձի, թէ ո՞ւր ծնած եմ. տանը վերը, թէ բակը (*):

Ի՞նչ բան գիտեմ հարցուց Քսանդոս: Անալ ըսաց՝ բան մը չկտեմ: Ի՞նչ բան կուղեմ հարցուց: Պատասխան տրւաւ Եղբորոս, որովհետև այս գերլիններն ըսին, թէ պմէն բան գիտենք. ինձի բան մը չի մնաց գիտնալու: Այս խօսքերուս վրա խիտո շատ զարմացան միջխոխային աշխերանները: Իրան որ, կըսէին զարմանալով, այս մարդը յայտնի ըրաւ իրեն խէլքն ու միտքը այս խօսքերովս. ո՞վ կրնայ պարծենալ, թէ ամէն բան գիտեմ. ահա այս է եղեր պատճառն որ կըխնդար և ծաղը կընէր անոնց տրւած պատասխանը:

Նորէն հարցուց Քսանդոս, կուղեն որ քեզ գնեմ. անալ ըսաւ, թէ այս խօսքդ ամեննին ինձի հարցընէլու բան չէ. կուղես գնէ, կուղես մի գներ. քու միտքդ ինչ որ կըվկայէ, զայն ըրէ. պէտք չէ որ մարդս բռնի ակամայ բան ընէ. այս գործքս բողբովին քուկին կամքէդ կըխախլի: Թէ որ կուղես զիս գնել, բայց քսակդ ու ստակ

(*) Հին արեւի իմաստասիրան մէջսովորուիքի էր այսպիսի հարցման քաղաքական ընէլ: Եւրբոս ալ անոնց սովորուիքը նայելով այս ո՞ճ բռնեց. մինչև զարմացուց իմաստասիրը:

Համբէ՛ . և եթէ չես ուղեր գնել, Հանգիստ կեցիր, ալ մի՛ խնդար վրաս : Աշկերաններն կրարու կրակին, թէ ճշմարիտ որ մեր վարսեւտին յաղթեց : Թէ քեզ գնեա՛ ըսաց Քսան գոս, սխտի ջանա՛ն փախչելու : Եզբոս ծիծաղելով ըսաց . եթէ ուղենամ փախչել, քեզն չեմ հարցըներ, խնչպէս որ քեզ ալ պէտք չէ ինծի հարցընել : Լաւ կըխօսիս ըսաց Քսան գոս, բայց խիտ այլանդակ ես : Պատասխանեց Եզբոս, թէ փելիտօփային կըվայէ որ մարդուս խելքին ու հոգուն նայի, չէ թէ գէմբին :

Ան ատենը Քսանգոս գնաց վաճառակա նին հարցուց, թէ այս գերբին գնիր ի՞նչ է : Անալ ըսաց թէ եկեր ես որ իմ գերբներս վտր զարնես, լաւ և գեղեցիկ գերբներս չուղեցիր գնելու . հինա եկեր ագեղ մարդուն ար կելլես . կուղես մէկալ երկուսին մէկը գնէ . ասալ անոնց վրա առ առանց ստըկի : Չէ ըսաւ Քսանգոս, ես սխտի զայս գնեմ : Ուրեմն տուր ըսաց վաթսուն դահէկան : Քսանգոսին աշկերանները շուտով համբրեցին ստաղը, և գնեցին Եզբոս : Մաքսաւորները Բիդապապանէրը եկան քննելու, թէ ո՞վ է ծախօղը, և ո՞վ է գնօղը . բայց երբոր հասկըցան, թէ ոչինչ գնով է ծախվածը, ամբչցան : Իսկ Եզբոս ոտքի վրա ելաւ կանչեց . թէ ահա ես եմ ծախօղը . ահա զիս ծախօղը և գնօղը . թէ որ աստիք ձայն չի հանեն, ես աղատ կըմնամ : Մաքսաւորները ծիծաղելով մաքս չառած ելան գացին :

Գ. Ե .

Եւսէլէոս երեւոյ ի գուն :

Երբոր Քսանգոս տուն դարձաւ պատերեց Եզբոսին, որ դռանը քով սպասէ, որովհետև գիտէր որ կնիկը բանի մը չէր հաւնէր, այն այլանգակն որ տեսնէ՛ չըլլայ թէ բարկանայ, ուղեց նախ անուշ քաղաքավար խօսքերով սիրտը շահէլ, ու յետոյ ներս բերել կոչու Եզբոսը : Քսանգոս ներս մտաւ, մտնեցաւ կնիկանն ըսաց, թէ Տիրուհի ապէ ետև այլ երեսս չես զարներ աղախիններու գաշխատանքը . ահա քեզն ծառայ մը գնեցի, որ իմ առջիտ անանկ աղւոր շնորհքով է, որ այնպիսի սիրուն մարդ չես տեսած . ահա դռանը քով կեցեր է : Երբոր ասանկ կըխօսէր՝ աղախինները վազեցին որ տեսնեն, և կը մամբայային, թէ որերնուն հետ պիտի բարեկամ ըլլայ : Իսկ Տիրուհին հրամայեց, որ ներս գայնոր գերբին : Աղախիններուն մէկը վազեց կանչելու համար, երբոր տեսաւ, գունն էս ըսաւ Եզբոս ծառան . թէ որ դուն ես՝ ներս մի՛ մտներ . վն դեքեզ տեսածնուն պէս ամէնը պիտի փախչին : Մէկ ուրիշն ալ դուրս ելաւ ծաղրը նկելով կրտէր, թէ գէմբոգ փոխէ, անանկ ներս մտիր :

Եզբոս ներս մտաւ գնաց Տիրուհին առ

ըին . որ տեսածին պէս աչքը դարձուց երկանն ըսաց . ո՛ր տեղէն վնտրուեցիր գտար այս ցուցանքս . վերցնուր առջևէս վերցնուր : Կալաչէր Քասնդոս , թէ մի՛ խոռովր . մի անարգէր նոր գերին : Ես ինչպէս կրնամ համբերել կրտէր կինը . ահա ասով հասկըցայ որ գուն զիս քամահրել կուզես , ու կատես . կերևնայ , թէ ուրիշ մը կուզես բերել . անոր համար այս գերին բերիր , որ ես իզմէ երթամ սնէն . ուրեմն տուր իմ բաներս , ես կերթամ :

Քասնդոս տեսաւ որ չըլլոր , սկսաւ անարգելով ըսել Եղբորսին , թէ ամէն բանի սլատասխան կուտայիր , հիմա ինչո՞ւ կնկանս բան մը չես զուրցեր : Պատասխանեց Եղբորս , թէ մէկ փոսի մը մէջ ձգէ կնիկդ : Կտրէ ձայնդ ըսաց , շատ մի՛ խօսիր սիրելի ընկերոջս գէմ : Եղբորս ոտքը գետինը զարնելով կրտէր , թէ ահա Կերին բռնըւած է կնոջմէն : Ո՛վ մեծդ (*) Եւրբրիտէս , չուսիմքու ճարտասանուիդ որ քեզի պէս խօսիմ . խիտ լաւ կըսէիր , թէ || ծոյուն կա-

(*) Եւրբիբիտէս էր Յոյն Բանաստեղծ Էրեսէլ Սաղամիս իղնիէն , ուր ծննա շաք փարի առաջ Վրտի Բոսախանէն . որ մէկ քորած ծայրի խայայել մը մեջ Կաշալ ի ըգրէր իր Բանաստեղծութիւնները , որոնք շաք մեծ յարգումի ռանեցան Յոսեայ մեջ . այս գրեւծ գիններէն մինչև հիմա ի ը գրուելին . Եւրբիբիտէս շաք անգամ ի անանց գործերը Երեսէլու անոնց դէմ շաք առաջարկուր իօսուր եւ լճիտէր ի ըսեր . այնչափ որ անոնը Երբին կանանց թշնամի , սհտ այս Բանէրէն Բերած է Եղբորս այս խօստ :

տաղու թիւ սոսկալի է , գետերուն առատանալը սարսափելի է , կրակին բռնութիւնը աղետալի է , եւ աղքատութիւնը անտանելի խեղճութի է . հազար կերպ սպտահմանքներ կան , որ տրամութի եւ վիշտ կը բերեն . սակայն անդգամ կնիկը ամէն չարութիւններէն աւելի է || : Այս գիտնական բանիս վրա մտածելով մի՛ Տիրուհի , քեզի շատ մեծ բան է որ ասանկ Տիլիսովայի կնիկ ես եղեր . խելքդ դուրսդ ժողովէ , չըլլա թէ ազոր մանուկ ծառայ առնես քեզի , որ անսլատութի մը չի բերես ընկերոջդ :

Այս խօսքս կնկանը խելքը տարաւ , անանկ որ չէր գիտէր ինչ սպտասխան տայ . մինչև գարձաւ Երկանն ըսաւ թէ ուստի՞ դըտար այս շնորհքով գերին . իրան կըսեմ , որ չափ տգեղ եւ պղնդակ է , այնչափ սիրելի եւ անոյշ է . ուրեմն ես հետը կը վարվիմ կուղեմ : Քասնդոս գարձաւ Եղբորսին ըսաւ , թէ ահա Տիրուհիդ քեզի հետ հաշտուեցաւ : Պատասխանեց Եղբորս , թէ ուրեմն այնչափ խեղճ մարդ չեմ եղեր ես . որովհետեւ մէկ կին մը հաշտեցընելը սղօսիկ բան չէ : Չայնդ վարքաչէ ըսաց Կոր . ես քեզ գնեցի , որ ինձի ծառայութի ընես , չէ թէ գիմագարձութիւն :

Պատասխանաբանութի Եզրվեոսի :

Քրիստոսնոր մէկալ օրը հեան առաւ Եզր-
 բոսն ու գնաց պարտեզ մը բանջարեղէն գը-
 նելու համար : Եզրբոս առաւ ձեռքը պար-
 տեզպանին ժողված կանանչեղէնները . Քը-
 սանդոս ստակը տալու ատենը , պարտեզպա-
 նը այս խօսքս ըսաց . Կաղաչեմ , մէկ բան
 մը պիտի հարցնեմ , ինձի պատասխանն սուր :
 Ի՞նչ է տարակիցսդ հարցսր ըսաւ : Չեմ
 հասկընար՝ կրեսր , ինչո՞ւ համար բանջարե-
 ղէն բոյսերն , որ այնչափ հոգ տանելով կը
 անկեմ , կը ջրեմ , ու ասանկ ուշ , և դժեա-
 լաւ առաջ կուգան . և ընդհակառակն՝ ին-
 քիրմէ բուսած խոտերը առանց փորելու և
 ջրելու շուտ առաջ կուգան . ինչ է պատ-
 ճաւոր :

Այս խօսքս թէպէտ Ֆիլիստփայական
 խնդիր է , բայց Քրիստոսն չի կրցաւ լուծե-
 լու . այլ մէկ ընդհանուր պատասխանն մը
 տրուաւ , թէ նայնախախնամու թեան դործքն
 է , որ ամէն բան կը կարգաւորէ (*) :

(*) Կախախնամութիւնը կը սովորեցնէ անհոգութիւնը .
 հին ժիւղիստփանեբը ասով ինձանային անօրոյնիւ
 անախարհութիւն , որ ամէն բան իր նախաձեռնութեամբ
 կը արգատէ : որ իրենց լախճանին կը հասնին : Կր-
 պաշտ ժիւղիստփանեբը էի կըրցան ուրանալ անօրոյնիւ

Եզրբոս ընելով սկսաւ այս պատասխանիս
 վրա խնդալ : Զիս ծաղր կընես , ըսաց փի-
 լիստփան , թէ կը ծիծաղես : Պատասխան տը-
 ւաւ Եզրբոս , թէ իրաւ ծաղր կընեմ , չէ
 թէ հրամանեք . հասաւ քեզն սորվեցնողը .
 վն զի անանկ մէկ հասարակ պատասխանն մը
 տրելի , որ գիտունները ամէն հարցմունքի
 կրնան տալ . որոնք բաւական կը կարծեն ը-
 սել , թէ ամէն բան նոյն նախախնամու թիւր
 կը կառավարէ : Ինձի հրամանն տուր ես պա-
 տասխանսմ պարտեզպանին . անանես թէ
 ի՞նչպէս կը հանդէս սիրող : Ան ատենը Քը-
 սանդոս դարձաւ պարտեզպանին ըսաւ , թէ
 վայելուչ բան չէ , որ ես երեւելի դարձաւու-
 ներու մէջ Ֆիլիստփայու թիւր ըրած եմ , հիմա
 կենամ պարտեզի մէջ բան վարդապետեմ .
 ահա իմ ծառաս ալ կրնայ քու հարցմունքդ
 քակել , թէ որ իրեն զուրյես . վն զի հմուտ
 է ասանկ բաներու պատասխանն տալ :

Կրկնեց պարտեզպանը , թէ բէ՛հ կրնայ ըլլալ
 որ ասանկ անշուրհք կուտ մարդը կարգալ
 բան գիտնայ . որչափ խեղճ՝ բան է ասանկ
 տգեղ ըլլալը : Տեանեք կրնաս իմ տարա-
 կուսանքս լուծել , և սիրտս հանգչեցնել
 այս ըսած բանիս վրա : Եզրբոս սկսաւ ա-
 սանկ պատասխանն տալ . երբոր մէկ կրնմը
 երկու անգամ կը կարգը վի , ու առջի երկը-

նախախնամութիւնը . զի սպեւծողը պէտք է սպեւ-
 ծածնեբը նախաձեռնելով խնամել կընէին : Ահա
 այս մտքով պատասխանն նոսրայ Քրիստոսն . որ
 բուն ժիւղիստփայանն պատասխանն էն , ինչպէս
 Եզրբոսին :

նէն զաւակներ ունի , և առած մարդն ալ առջև կնոջմէն զաւակներ ունի . յայտնի է որ այս կնկանը հարազատ զաւակները հետը բերածնեն են . և էրկանը զաւակները իրեն խորդ են . այս սրտածառաւ տարբեր կերպով զանոնք կը նայի . մեծ հոգ կընէ , որ լաւ սրահէ աղէկ կերցընէ . և մեծ սիրով խնամէ իր ծնածները : Իսկ էրկանը զաւակները չէ թէ միայն այնպէս չի նայիր , հասարակտ անգամ կատէ , և ոտքի տակ կառնէ . տնանկ որ զանոնք կը զըկէ , անոնցմէ կը քաշէ , ու իր զաւակներուն կուտայ . և այն պիտի բնական գուժ մը կը յըջնէ իրեննէրուն , որ կարծես թէ իր մարմինն կտորվանքն են . ասոր հակառակ , մէկայոնք օտարի աչքով նայելով միշտ կը ջրախէ : Ասանկ ալ հողը մայր կը սեսպիլ ամէն բուսած բաներուն . բայց բու տնկածներդ անոր խորդ զաւակներն են . և իր բուսուցածները բուն հարազատ զաւակ ըլլալով աւելի հոգ կը տանի , ու կածեցընէ . ուստի քու տնկածներդ խորդ ըլլալով քիչ սնունդ կուտայ , որ շատ չեն կրնար աճիլ . վը զի օտար են :

Այս սրտաստիպանը անանկ հանգչեցուց սարտեղպանին սիրտն որ մէկէն կանչեց Եղբորին , թէ ես քեզի մեծապէս շնորհակալ եմ , որ մեծ տարակուսանքէս զիս աղատեցիր , և սիրտս հանգիստ ըրիր : Ուստի երթաս բարով , որչափ բանջար պատրաստ կուզես՝ առ գնա՛ առանց սորկի , և որ ժամանակ պէտք ըլլայ՝ եկիր առ . ասկէ ետեւ քու սարտեղեդ պէս պիտի գաս հոս բան առնես :

Գ. Լ. Թ .

Խորանայութի Եղբորս :

Վրանի մը որ անցնէէն ետեւ Քասնդոս բաղնիք գնաց , հին մէկ քանի բարեկամներ գտաւ . պատուիրեց Եղբորսին , որ վաղելով երթայ տուն՝ իրեն ոսպ մը եփէ : Եղբորս մէկէն տուն գնաց , ու սասանու թէ բանեցընելով , մէկ հատ ոսպ մը առաւ պտուկին մէջ գրաւ եփեց : Իսկ Քասնդոս բաղնիքէն ետեւ աղաչեց բարեկամներուն , որ կերակուրը տունն ուտեն , և հասկըցուց , թէ ես մէկ հարկիք մը չունիմ . միայն թէ թե ոսպէ սարուր մը պիտի ուտենք : Ասալ ըսաց , թէ չի վայելը շատ տեսակ կերակուրներով բարեկամ փորձել . հասպա աւելի սէտք է սիրտը նայիլ :

Անոնք ալ Քասնդոսի հարկիքն ընդունեցան , առնը եկան : Տիր կանչեց Եղբորսին , թէ մեզի մէկ բաղնիքի ջուր մը բեր , որ զովանանք քիչ մը : Ապեց Եղբորս գնաց բաղնիքին լըւայված ջուրը բերաւ տիրոջը սրբաւ . երբոր բերանն առաւ , գարշահոտին չգիմանալով ըսաւ . ուստի բերիր այս ջուրը : Բաղնիքէն բերի ըսաց , ինչպէս որ ինձի պատուիրեցիր : Քասնդոս բարեկամներուն առջին բունեց բարկուէն , ու հրամայ Եղբորսին , որ իրեն մէկ կոնք ւէյէն մը բերէ : Ա

նալ բերաւ, ոտքի վրա կեցաւ : Չի լըւանս,
 ըսաց արք. չէ՛, ըսաւ. վնձ զի ինձի ինչ որ
 ըսիր, այն ըրի. թող ըսէիր, թէ ջուր լինց
 կոնքը, ոտքս լըւանս. բեր Տողաթամիներս, և
 բոլոր բաներս : Քսանդոս դարձաւ բարե-
 կամներուն ըսաւ, թէ այս գնած մարդս
 գերի չէ, հասար վարդապետ է : Երբոր սե-
 ղան նստան Քսանդոս հարցուց Եզրբոսին,
 թէ եզրն ոտքը : Եզրբոսն ալ բերաւ գբա-
 լով մէկ ոտքն որ եփեր էր : Տիր բռնեց մա-
 սովը սփակց, ըսաց. թէ լաւ եփած է բեր :
 Եզրբոս լեցուց ջուրն ու բերաւ ամանով
 սեղանը : Հարցուց Քսանդոս, թէ ո՞ւր է
 ոտքը : Քեզի տըւի ըսաց : Ինչ, մէկ հան
 մը եփեցիր : Հրամարես ըսաւ. վնձ զի գուն
 որոշ ըսիր, թէ ինձի ոտք մը եփէ. ոտքեր
 եփէ՛ չքովր : Այս խօսքովս խնտ տաքցաւ
 Քսանդոս. մինչև ըսաց բարեկամներուն,
 թէ թողութի ըրէք ծառայիս յիմարութենը,
 որ մարդը խննթ կը գարձընէ :

Հոս եկոր ըսաց Եզրբոսին անդգամ ծա-
 ռայ. գնա՛ խողի չորս ոտք գնէ. և շուտ մը
 եփէ, որ ուտենք : Եզրբոս գնաց շուտով
 բերաւ. երբոր ոտքերը կեփէին՝ Քսանդոս
 գնաց ծածուկ ոտքին մէկը գտցցաւ Եզրբո-
 սին հոն չեղած ատենը. որպէս զի պատճառ-
 ընեւ լըւան մը ծեծէ զայն :

Քիչմը կանցնի Եզրբոս ալ կուգայ կը
 նայի, որ պտուկին մէջ երէք ոտք կան. կը
 հասկընայ խարէութենը. ուստի վաղէ կեր-
 թայ տանը պահած խողին մէկ ոտքը կըտրէ՝
 քերթէ, կըգնէ մեկալոնց հետ կեփէ : Քը-
 սանդոս կըվախնայ, որ Եզրբոս տեսնելով

ոտքին մէկը պահաս, չըլլայ թէ փոխելու պա-
 հած ոտքը կըբերէ մէջը կը ձգէ : Եփած
 ոտքերն որ առաջ բերաւ, Քսանդոս տեսաւ
 թէ հինգ են : Ինչ է այս ըսաց Եզրբոսին.
 Ես քեզի չքով՝ որ չորս ոտք գնես : Հրամար-
 ես ըսաւ. բայց երկու խողին ոտքերը քա-
 նի կըլլան. ութը. ահա դուն հինգ հատ
 տեսար հոս. երէք ալ վարի խողն ունի, որ
 կըպահէ :

Քսանդոս այս խօսքիս վրա սաստիկ բար-
 կանալով կըտէր բարեկամներուն, թէ ես ի-
 բաւուր չունիմ, որ կըսեմ, թէ այս ծա-
 ռան իմ խելքս գլխէս պիտի տանի : Եզր-
 բոս ուղեց պատճառով խօսիլ տիրոջը հետ.
 Տիր իմ ըսաց, չիտես որ թուարանութեան
 մէջ որչափ հանում ըլլայ քանակութենէ,
 այնչափ ալ յաւելում որ ըլլայ, գումարը
 սխալ չըլլար : Ուստի Քսանդոս չի կըցաւ
 պատճառ մը գտնել, որ Եզրբոսին ծեծ մը
 տայ, սկսաւ սիրտն ինջնիլ (*) :

(*) Եզրբոս երբո՞ւ պատճառաւ այս խաբէու-
 թիները բանեցո՞ւց. նախ ուղեց քերթուց աւել
 վախոցնել, և իր ինչպիսի մարտ ըլլաւ անոր
 հասկընել, որ անորո՞վ երբեք հեք. երբորտ՝
 ուղեց վերծնեցիք ըլլաւ անոր ըրած անարգա-
 նայը. անով հասկընայ, որ եթէ անանոյնի իրեն
 նեղութի պաւ ուղե, մարտու մէջ շինեք ծաղը
 ընելով քեզը ինչ հոնէ :

Վերէնիսիոսի Եղբայրացիներին :

Եղբայրացիք որ Քրիստոսի մէկ աշակերտք մեծ հարկիք մ'ըրաւ իր վարպետին, և բոլոր ընկերներուն : Քրիստոս սեղանին վրա որչափ լաւ և համով կերակուրներ կար, մէյմէկ քիչ կը վերցընէր Եղբայրացիներին կուտար, որ ետին կայնած էր : Աստուծոյ տուն տար կըսէր իմ բարեարտիս տունը : Եղբայրացիք առաւ դնաց, բայց ճամբան ինքիքն մոմրտալով կըսէր, թէ ահա խիստ աղէկ տեղն էկաւ, որ վրէժխնդիր ըլլամ մեր Տիրուհին. որ հասկընայ անանկ իմ վրաս անողորմ խնդալն, ու սիրտ ծակէր՝ երբոր զիս առջի անդամ տեսաւ. Էս ալ հիմա սիրտն, նայինք կը սիրէ՞ սըրտանց մեր Թոր : Երբ տուն հասաւ Եղբայրացիներէն Տիրուհին, և Քրիստոսի տըրած կերակուրները առջին դրաւ ըսաց, ահա աստուծոյ իմ Թոր խրկեց. բայց քեզն չի խրկեց, իրեն բարետիրտ սիրականին խրկեց : Շուտ մը կանչեց սիրովը պզտի շունն որ հոն կը կենար. առ աղարիկ կըսէր, կեր, Թոր հրամայեց, որ քեզն տամ. և այսպէս բոլորը կերցուց շանը : Յետոյ դարձաւ գնաց սիրովը ըսաց, որ աղբի և բոլորն իմ առջիս կերաւ : Ուտեղու ատենը բան մը զուրցէ՞ց, ըսաւ

Քրիստոս : Չէ ըսաց, բայց մտքովը շնորհակալ կըլլար տերու թէր :

Իսկ Քրիստոսի կնիկը աստիկ նեղացաւ, որ ընկերն իրեն բան մը չի խրկեց հարկիքէն. միտքը գրեթէ թէ այս եղած բանը նշան է թէ զինքը աչքէ ձգէր է. և իր սէրը պաղած է. որովհետև հոգ տարաւ աւելի շանը, բան թէ իրեն. ուստի սոսկալի արտունջներ կընէր, և վտանալով բարկաւ նար ու կըսէր, թէ այլ չալիտի նայի երկանն երեսը. և այսպէս իր խուցին մէջ փակված անանկ կուտար, որ աշխարհք կըվերջնէր, և ամեննին չէր ուզէր միտքովը այս ըրած բանին համար :

Բայց հարկիքը լաւ մը շէնցաւ գինին իմելով. երբոր զըւարճու թէ մէջ էին սկսան ամէն մէկը իրարու հետ հակաճառու թի ընել զանազան բաներու վրա : Աստուծոյ մէկը աւելի բարակամիտ և հետաքրքիր ըլլալով հարցուց թէ ո՞ր ատեն կըլլայ աւելի հակառակու թի և անկարգութի մարդկանց մէջ : Եղբայրացիք այս հարցընտղին ետին ըլլալով պատասխանեց, թէ անատենը կըլլայ երբոր մեռնելէրը յարու թի կառնեն. վն զի ամէնքը ինչ որ ունէին (*) աշխարհքիս մէջ մէկ

(*) Կոստանտնուպոլիսի Կոնստանտնուպոլիսի շաքար գիտէին, որ մէկ օր մը մեռնելէրը արտու թի պիտի առնեն. որովհետև ինչոյնին որ աղէկ մարտիկ հոս նեղաւթի ինչպէն մարտիկ, և գիշ մարտիկ լաւ փայտին հարկու աստուծոյ հարկուցում պիտի ըլլայ ինչոյնին. մանաւանդ Պղարտիսի աշխարհքէրը. որոնք Աճաշունը Կոնստանտնուպոլիսի Կոնստանտին :

դմէկէ կըստհանջեն : Քսանդոսի աշկերտները խնդարով այս խօսքիս վրա, միաբան խոստովանեցան, թէ Եզրբոս խիստ մտաւոր մարդ է :

Մէկ ուրիշն ալ հարցուց, թէ ինչու համար երբ մտադործը կըբաշէ ոչխարը չի պռնար, ու խողը սոսկալի կըսուայ : Պատասխան տրւաւ Եզրբոս, թէ ոչխարը սորված է որ կաթը քաշեն, և վրայի բուրդը խողեն . ուստի ձայն չի հաներ, թող կուտայ, որ զինքը բռնեն քաշեն ոտքէն . ինքն ալ լուսուածի կերթայ էտենուն, անտարակոյս գիտէ թէ իրեն նեղութիւն պիտի տան : Բայց խողը ոչ կաթ կուտայ, ոչ բուրդ, ոչ կըկապեն, և ոչ ոտքէն կըքաշեն . գիտէ որ մարմինէն ՚ի զատ ուրիշ բան մը չունի . ուստի այս պատճառաւ կըսուայ, կըկանչէ երբոր իրեն կըդպչի մտադործը : Սկսան այս պատասխանիս վրան ալ խնդալ Քսանդոսի աշկերտները . և մեծ գովեստներ տուին Եզրբոսին :

Կերակուրը ըմնցածին պէս Քսանդոս տուն դարձաւ . հարցուց թէ ո՞ր է կնիկն որ հետը խօսի, ինչպէս սովորութիւն ունէր : Բայց կնիկը ծուռ ծուռ նայելով անոր ըսաց . հեռու գնա . տուր ինձի իմ բաներս, որ երթամ քու անէդ . ասկէ ետքը ես չեմ կրնար քու սանդ մէջ քեզի հետ մնալ . դուն գնա քու շունդ սիրէ, որուն որ հարկիքին բաները խրկեցիր : Քսանդոս խիստ զարմանալով ասանկ անմիտ անարգանացը վրա, չէր գիտէր ի՞նչ ընէ . և ի՞նչ պատասխան ապ . կըսէր թէ առանց կարծեաց Եզրբոս

ալ բանմ' ըրեր է : Ղարձաւ կնկանն ըսաւ, թէ Տիրուհի, ես խմեցի՞ դուն գինովցար . ես այն պատուական բաները որուն խրկեցի . քեզ չի խրկեցիր : Երբու՞մ կընեմ ըսաց կնիկը, թէ ինձի բան մը չեկաւ, հապա չա նը եկաւ : Հոս եկոր ըսաց Եզրբոսին . որուն տըլը այն կերակուրները : Արուն պիտի տամ ըսաւ, քու սիրականիդ տըլի :

Ղարձաւ Քսանդոս կնկանն ըսաւ, թէ դուն բան մը չես առած : Ամենեկն բան առած չեմ ըսաց : Տր իմ, ըսաւ Եզրբոս դուն սիրականիդ չի խրկեցիր : Կանչեց շունն ըսաւ . ահա բարետրտ սիրականդ . որ ամենէն աւելի քեզ կըսիրէ, և քեզի բարի կուզէ : Սկսան զի թէպէտ կինդ կըվկայէ, թէ քեզ շատ կըսիրէ . բայց սրբի բանէ մը նեղացածին պէս, քեզի դէմ կըլէ կըխառով . կըպարտաւէ անարգելով, կըչարանայ, որ քեզ ձգէ : Իսկ շունը թէպէտ ծեծ ուտէ, անտի մնայ, վաճնտիլ, ամենեկն չի վախճիր . բոլորը կըմոռնայ, քեզ կըսիրէ շողբորթելով, և ամէն երախտագիտութե նը շանները կուտայ :

Ուստի պէտք էր որ ըսէիր աէր իմ, թէ կնկանս տուր, չէ թէ բարեսրտիս : Քսանդոս դարձաւ ըսաց կնկանը . կըտեսնեն Տիրուհի, այս պակասութիւն իմն չէ, հապա Եզրբոսին է . ուրեմն համբերէ, հանդարտ կեցիր, ես ծեծով անոր վրէժխնդիր կըլամ : Ես պատասխանը բաւական չեղաւ անոր սիրտը հանգչեցնելու . նայիս ծածուկ մը անէն ելաւ գնաց հօրը տունը : Անտեսնը դարձաւ Եզրբոս ըսաւ տիրոջը, թէ ես քե

դէ չքսի, թէ քու շունդ կնոջմէդ աւելն քեզ կըսիրէ :

Գ.Լ. Ժ.Ա.

Եւրժէոս դարձեցանէ պիկիւնն 'ի գունն :

Քանի մը օր անցաւ Քասնդոս չի կրցաւ կնկանը սիրան առնել ոչ աղաչանքով և ոչ շողջորթելով. ուստի դրաւ իրեն ազգականները խրկեց որ հաշտեցնեն, և մոռնայ սրբալին նեղութիւնը. բայց ամենեւին մոռիկ չըրաւ. ալ աւելն կատղեցաւ : Այս ըրած անդգաւ մոռթիւնը խիստ ցաւցուց Քասնդոսին սիրտը :

Եզրոսու եկաւ քոյն ըսաց մի վշտանարտոր խո, մի արտմիր պարբայ տեղը . ես քեզն խօսք կուտամ, որ կնիկդ վաղը ինքիրեն կուգայ հոս : Քանի մը գրամ առաւ անկէ գընաց գնելու հաւեր՝ թուռուններ՝ որսեր, և այլ հարկաւոր բաներ մեծ հարկիքի մը : Զասնը բերելու ատենը սնէ տուն պըրտեղով կուգար, յետոյ եկաւ Տիրուհիին հօրը տանն առջևէն անցաւ, այս մտքով, որ տեսնեն առած բաները սուսնց իմացնելու, թէ ինքը գիտէ որուն տուն ըլլալը, և Տիրուհիին հոն ըլլալը :

Յանկարծ հանդիպեցաւ անոնց ծառային հարցուց, թէ արդեօք ունին ծախու բաներ հարսնեց հարկիքի համար : Որուն հա-

մար կուղէս ըսաւ ծառան : Պատասխանեց, թէ Քասնդոս ձիւխտիային համար, որ վաղը պիտի կարգըվի : Ծառան շուտով ներս վազեց պատմեց կնկանը. որ առանց ուշա՛նալու մէկէն ելաւ գնաց երկանը տունը : Եւ այնպէս խոտոված անհանգիստ էր, որ արանջեղով կըսէր Քասնդոսին, թէ քեզն կըվայէ՛ կարգըվի ուրիշին հետ քանի որ ես կամ : Ահա այսպէս մնաց երկանը քով Եզրոսին հնարքովը . ինչպէս որ անոր պատճառովը գացեր էր, անանկ ալ եկաւ :

Գ.Լ. Ժ.Բ.

Սդոս Եւրժէոսի :

Քասնդոս ուզեց օր մը իր աշկերտներուն կերակուր ընել. Եզրոսին պատուիւրեց որ երթայ որչափ լաւ պատուական բան կայ զանոնք գնէ : Եզրոսու երթալու ատենը կըսէր թէ պիտի հասկըցնեմ տիրոջս, որ ուրիշ անպամ ինձի ասանկ անիւնք բան չի հրամէ : Ուստի գնաց մէկ քանի խողի լեզու առաւ պատրաստեց հարկիքին համար, և ամենուն առջին դրաւ մէյմէկ լեզու խոր ված համեմով պահարէ : Աշկերտները հաճեցան, որ ձիւխտիայի գործք է առջև կերակուրը լեզու բերել. ինչպէս լեզուն ամէն լաւ խորհուրդները կըլայտնէ : Իսկ Եզրոսու երկրորդ կերակուրն ալ խաշած լեզու-

բերաւ : Երբոր երրորդ կերակուրն ուզեցին, նային լեզու բերաւ : Այս բանիս վերա սրտերնին նեղացաւ . վասն զի լեզու ուսեալով ձանճրացեր էին . մինչև բարկանալով ըսին Եղորոսին, թէ մենք մինչև իրիկուն լեզու սիտի ուտենք : Բայց Եղորոս առանց նայելու անոնց տրտուեցին նորէն լեզու գըրաւ անոնց առջին : Ուստի Քսանդոս բարկանալով կանչեց, թէ ուրիշ բան մը չի կայ որ բերես : Պատասխանեց Եղորոս հանգիստ սրտով մը, թէ չի կայ : Ի՞նչ կըխօսիս թըշուառական կրտէր, ես քեզի չխաբաւիրեցի՞ որ պատուական համով բաներ դասեա . սկսաւ անարգել զինքը վիճակաւաներուն առջին :

Շնորհակալ եմ բաւ Եղորոս՝ ըրած նա խատանրիդ վրա . բայց խնդրեմ՝ լեզուէն ա՛նոյշ և պատուական ի՛նչ բան կայ աշխարհքիս մէջ . ահա ամէն ուսում և խմաստու թի լեզուով կըլլայ . ամէն բան անով կառնենք կուտանք, աղօթք, ատենաբանութի, մարդավարութի, հարսնախօսութի, և ամէն ճոռոմութի լեզուով կըլլայ . քաղաքներ անով կըշինվին . և ամէն մարդ լեզուով կըվճարէ իրեն դործքը : Ուրեմն ես կըհաւատամ և լաւ գիտեմ, թէ լեզուէն դերազանց բան չի կայ աշխարհքիս մէջ : Բոլոր նստողները հաւանելով այս պատճառներուս միաբան մըճոեցին, թէ Եղորոս իրաւունք ունի, և Քսանդոսի բարկութիւն անիրաւ է : Եւ այսպէս ամէն մարդ սուս դարձաւ :

ԳԼ. ԺԳ .

Երբոր սրտս Եւրմոսի :

Քսանդոսի աշխրանները քանի մը օրէն ետև երեսը զարկին ըրած հարկիքը : Անալ անպարտ զինքը ցըցուց ըսելով թէ այդ բանը մորքես ալ չէր անցած . իմ ծառայես չարութիւն անանկ եղաւ . բայց փորձը ախար ամէն բան կըլլայանէ . ահա ձեր առջին իրեն կըպատուիրեմ : Այս խօսքիս վրա Եղորոս ալ հոն եկաւ : Տրն ըսաց որ գնա՛ սրճախ գէշ բան դասեա գնէ, որ հարկիք ընեմ այս պարտներուն :

Եղորոս գնաց նոյնպէս լեզու գնեց, պատրաստեց սեղան բերաւ : Ամէնքը տրտնջալով սկսան իրարու զուրցել, թէ այս ի՞նչ պէս բան է . միշտ լեզուն սիտի ուտենք : Վիչ մը անցաւ, նորէն լեզու բերաւ : Երբորք անգամ ալ լեզու բերաւ սեղանը : Այլ չգիտնացաւ Քսանդոս բարկութեամբ կըսուար . դուն ի՞նչպէս խօսք կըհասկընաս Ե՛ղբ . երբոր քեզի ըսի պատուական կերակուր գնէ, դուն դացիր լեզու գնեցիր . և երբոր պատուիրեցի սնչահան կերակուր գնէ, նոյնպէս դացիր լեզու գնեցիր :

Ճշմարիտ է խօսքդ ըսաց Եղորոս . բայց լեզուէն գէշ բան ի՛նչ կըլնայ դասելով . լեզուն չէ՞ որ աշխարհք կըկործանէ, և սուս

կալի մարդիկ կրկորսնցնէ • Ինչով կըլլան այնչափ սուտերը՝ հայհոյութիւնները՝ անիրաւութիւնները, և խարբէութիւնները • Լեզուով կըլլան : Ասով սրտակեանքը կըբերակվին • Խորութիւններ թագաւորութիւնները կըկործանին • և այլ անհամար չարիք միշտ լեզուն կըպատճառէ, տրամութիւն խեղճութիւն երգում • բամբասանք • որով մարդուս կեանքը լեցւած է :

Ան առեւեր հատորաց մէջէն մէկը կանչեց Քասնդոսին, թէ դպիշ կեցիր՝ այս ծառագրու խելքիդ բան մը կըբերէ • զի կընայիմ որ հոգին ալ մարմինին նման այլանդակ է : Եղբորս մէկէն պատասխան տրուաւ թէ այլանդակ անմիտ դուն ես, որ հետաքրքրութիւն ուրիշ բանին կրխաւնրվիս, և չար խօսքերով կըջանաս անմիաբանութիւն ձգել տիրոջն ու ծառային մէջ :

ԳԼ • ԺԴ •

Հնարագիտութիւն Եղովբոսի :

Քասնդոս Եղբորսին այս խօսքերը լսելով անանկ տաքցաւ, որ պատճառ կըլինար ուէր լաւ մը ծեծելու : Գորշչի ըսաց, որ լովհետեւ դուն իմ բարեկամն պարսաւեցիր, թէ՛ հետաքրքիր ըլլալով ուրիշ բանին կը խաւնրվիս, գտիր ինձի մէկն որ հետաքրքիր չըլլայ : Եղբորս հասկըցաւ բանը, մէ-

կալ օրն էլաւ դնաց վաճառանոցն բազմու • թէ մէջ ուշադրութիւն ամենուն կընայէր • տեսաւ թէ մէկ մարդ մը երկար ժամանակ կեցէր է մէկ տեղ մը : Հասկըցաւ որ խիստ սարգամիտ խեղճ մարդմ' է • մտեցաւ իրեն ըսաց, թէ արա կըհրամայընէ, որ իր տունը կերակուր ուտես : Այս կողմ մարդը առանց հարցնելու, թէ ով էս, և որն ալ նէն եկեր էս, էլաւ դնաց հետը • և աղտոտ կօշիկները ոտքը դնաց անանկ սեղանը նըստեցաւ :

Քասնդոս հարցուց, թէ ով է այս մարդը : Պատասխանեց Եղբորս, թէ առանց հետաքրքրութիւն մարդ է, որ ուրիշ գործքին չի խաւնրվիր : Ան առեւեր Քասնդոս ծածուկ կնկանն ըսաց, որ էս քեզի ինչ բան ըսեմ'նէ՝ հնազանդելով պիտի ընես • որպէս զի պատճառ մը գտնեմ, ու լաւ ծեծ մը տամ Եղբորսին : Ուտի ամենուն առջին ըսաց կնկանն, որ դնա ջուր բեր՝ օտարականին ոտքը լըւա • վտան զի կարծէր, թէ այն խեղճ մարդը չպիտի թող տայ որ Տիրուհին ոտքը լըւա • պէտք է որ մեծ շնորհակալութիւն ընելով հրաժարի : Եւ ասանկ ընելով յայտնի կըլլար, որ հետաքրքիր մարդ է, ոչ թէ անհոգ • Ինչպէս հասկըցեր էր Եղբորս այս բանը կըլլար օրինաւոր պատճառ Եղբորսը պատժելու : Իսկ կնիկը բերաւ ջուրն, ու պատրաստեցաւ որ օտարականին ոտքը լըւայ : Բայց այն թանձրամիտ տեսաւ թէ Տիրուհին իրեն ծառայութիւն կընէ, ինքիւրեն կըսէր, որ ահա զիս կուգէ պատու, ուրիշին ընել չի տար, ինքը կընէ • և

այսպէս երկընցուց ոտքերն, ու կըսէր՝ Ը-
ւա՛ Տիրուհի. որ Ըւացելէն ետև սեղան
նստաւ : Քսանդոս հրամայեց, որ իրեն խմած
գինիէն օտարականին տայ : Գարձեալ կը
մամլտար գեղըուկը, թէ պէտք էր որ ա-
ռաջ իրենք խմեն : Բայց որովհետև այսպէս
հրամայեց բարեսիրտը՝ ինձի չկյնիր . քննել այս
քաղաքաւարուէը . ուստի առաւ խմեց :

Բերին առջին կերակուր մը, որ շատ կը
սիրէր, ու ակորժանքով կուտէր : Տըը կան-
չեց խոհարարը ա՛ճի՛ երեսը զարկաւ, թէ
ինչո՛ւ համար գէշ եփեցիր . և պատկերեց
որ պատժեն ու ծեծեն : Գեղըուկը անհոգ
կուտէր և կըսէր . թէ այս կերակուրս խիստ
պատուական եփած է, մէկ սպիասու թիւն
մը չունի . բայց թէ որ արը իր սիրտը հանդ-
չեցրնէրու համար կուզէ առանց պատճառի
ծեծել խոհարարը, ինքը գիտէ . իմ ի՛նչ վե-
րաս պէտք է, ինչ կուզէ, թող ընէ :

Քսանդոս այս անհոգ մարդուն վրա խիստ
կընեղանար . որ ամենևին հետաքրքրու թիւն
մը հոգ մը չէր ընէր, և բանի մը ետեւէն
չէր ըլլար . բայց կը համբերէր նեղու թիւնը
չէր ցցընէր : Բերին սեղանը կարկանդակ
պողաւ . օտարականը ուտելը չէր գիտէր,
սկսաւ հացի պէս ուտել : Քսանդոսին սիր-
տը սրբամբլելով կանչեց ըսաւ հացեփողին .
յի՛մար, ինչո՛ւ համար կարկանդակին տակը
մեղք ու համամ չի ըլցուցիր, որ քիչ մը հա-
մով ըլլար : Անալ պատասխան տրուաւ, թէ
տէր իմ, թէ որ գէշ եփեցի, զիս պատժէ,
բայց թէ համեմ չէ զրած՝ մեր Տիրուհին
պիտի գիտնայ, իմ բանս չէ, անորն է : Ե-

թէ իմ կինս է պատճառը՝ հիմա ողջ ողջ
կերեմ՝ կըսէր Քսանդոս : Աչք ըրաւ կըն-
կանն որ իրեն հնազանդի . որպէս զի պատ-
ճառ ունենայ Եղբորս պատժելու :

Ուստի բերել տրուաւ փայտի կտորվանք .
որ երբ վառեցան՝ Քսանդոսի Տիրուհին բե-
րին կրակին մօտ, և ձևացուցին, որ մէջը
պիտի ձգեն . նայելով թէ ի՛նչ կընէ օտա-
րականը այս բանիս մէջ, գէթ հոգ տանե-
լով բան մը կը հարցընէ, կամ կարգիլէ որ
չէրի կինը : Բայց այն առանց այլայլելու
հոգ մը չունէր այս սքաւոր բանին վրա . և
իր սովորական անհոգութե՛ք կեցեր կըսէր
մտքովը . թէ որ պատճառ մը չունի բարկա-
նալ ընկերովը գէմ, ինչո՛ւ ասանկ տաքցեր
է : Ելաւ գնաց Քսանդոսին քով ըսաւ, թէ
որ պարտք է ասանկ ընել կանանց, քիչ մը
համբերէ երթամ իմին ընկերս ալ բերեմ,
որ երկուսը միատեղ երես :

Պիլիսոսիան լսելով այս մարդուս խօսքը,
զարմացաւ, թէ ասանկ առանց հետաքրք-
քութե՛ք անհոգ և պարզամիտ մարդ կրնայ
ըլլալ . այնչափ որ այլ չգիտնացաւ կանչեց
Եղբորսին, թէ իրաւ որ գուն պարապ տե-
ղը մարդ չես ճանչար . ահա՛ ճշմարիտ ան-
հոգ անհետաքրքիր մարդ, որ ամենևին բան
մը հոգը չէ . յաղթեցիր Ե՛զոր, և վաստը
կեցար յաղթու թիւ : Ահա՛ ասկէ ետև գոհ
եմ բու վրագ, կըմոռնամ ըրած բաներդ,
կընեբեմ, և ազատ կընեմ . քեզ ծառայու-
թենէդ :

ԳԼ . ԺԵ .

ԽՅԻԿ ԵՂՈՒԲՈՒԻ ԸՆԴ ԴԱՍՏԱՍԻԱՆԻՆ :

Քսանդոս պատուիրեց Եզրբոսին , որ եր-
թայ բաղնիքը նայի , թէ բազմութիւն շատ
կայ . վասն զի կուղէր բաղնիք մտնել : Եզր-
բոս երթալու ատենը ճամբան հանդիպեցաւ
դատաւորին . որ գիտէր թէ Քսանդոսին
մարդն է , հարցուց թէ ո՞ւր կերթաս : Չէյ-
տեմ ըսաց Եզրբոս , ո՞ւր կերթամ : Դատա-
ւորը կարծեց թէ զինքը ծաղր կրնէ , բար-
կացաւ սրւած սրտասխանին վրա . հրամեց
որ բանտը դնեն : Երբոր դարձուցին Եզր-
բոսը , սկսաւ բարձր ձայնով պօռալ : Տէս
կրէր տէր իմ , ահա իմ պատասխանս նայէ
ի՞նչպէս ճշմարիտ ելաւ . ուրեմն իրաւունք
ունէի որ ըսի թէ չկտեմ ուր կերթամ . ես
գիտէի թէ բանտը պիտի երթամ . գիպա-
ծով քեզ տեսայ , որ իմ բանան երթալուս
պատճառ եղաւ :

Դատաւորը զարմանալով անոր խելացի
պատասխանին վրա , թող սրւաւ : Եզրբոս
բաղնիք դնաց տեսաւ որ շատ բազմութիւն
կայ . ամէն մէկին ուշադրութիւն կրնայէր .
բաղնիքին դռանը քով մեծ քար մը տեսաւ
որ ամէն մտնող ելլողին ոտքին դպչելով նե-
ղութի կուտար , որ մէկը չէր վերջընէր ան-
կէ . մէկ մարդ մը ներս մտնելու ատենը

վերցուց անկէ ուրիշ տեղ գրաւ : Եզրբոս
դարձաւ տուն ըսաց տիրոջն , որ խիտ հան-
գիտ կրնաս լըւացվիր . վասն զի ես՝ մինակ
մէկ մարդ մը տեսայ հոն :

Քսանդոս դնաց բաղնիք երբոր տեսաւ
այնչափ բազմութիւն , որ կը լըւացվէին . ի՞նչ
է այս կանչեց Եզրբոսին . դուն ինձի չքոյր
որ մէկ հոգի մը կայ . ճշմարիտ է ըսաց .
բայց տէր իմ տեսայ այն քարը բաղնիքին
դռանը մէջ դրած , ամէն մտնող ելլող անոր
զարնելով կանցնէր , այնչափ բազմութեան
մէջէն մէկ մարդ մը գտնուեցաւ , որ այն
քարը վերջընէ անկէ անդին դնէ : Ահա
այս պատճառաւ ըսի , որ մէկ մարդ մը տե-
սայ այսչափ բազմութե մէջ , ամենէն վեր
դնելով զայն : Քսանդոս ծիծաղելով ըսաց ,
թէ Եզրբոսին պատասխանը խելքով լեցուն՝
միշտ պատրաստ է :

ԳԼ . ԺԶ .

ՀԱՆՃԱՐ ԵՂՈՒԲՈՒԻ :

Երբեմն Քսանդոս իր աշկերտներովը ե-
րևելի հարկիք մը գնաց . երբոր գինին խմե-
ցին հարեցան , սկսան իրարու հարցմունք-
ներ ընել կերպ կերպ բաներու վրա : Քսան-
դոս տաքնալով կը խօսէր գինիին ուժովը .
Եզրբոս քօնը ըլլալով ըսաւ . Ա՛միրայ քեզի

կուզեմ հասկըցնել, թէ (*) Բարոս երեք
 յառկու թի, կի՞ երեք զանազան աստիճան
 ունի . առաջինն է զըւարձու թի . երկրորդն
 է արեցու թի, երրորդը՝ կուի թնամանք .
 դուն ուղածիդ չափ խմեցիր լաւ մը զըւար-
 ձացար, ուրեմն գոհ կեցիր այդ աստիճա-
 նին մէջ, ալ առաջ մ'երթար : Քսանդոս որ
 սկըսերէր գինովլալ, այս խրատս ծուռ
 մտքով հասկըցաւ, որ բարկանալով ըսաւ .
 կտրէ՛ ձայնդ՝ գնա գժոխքին մէջ եղողներուն
 խրատ սուր : Պատասխանեց Նղըզոս, թէ
 կարծեմ դուն պիտի երթամ անոնց քով :

Հոն նստողներուն մէկը տեսաւ որ Քսան-
 դոսի գլուխը տարցեր է . Պարոն, ըսաց, կըր-
 նայ գտվիլ անանկ մարդ, որ բոլոր ծովուն
 ջուրը խմէ : Պատասխանեց Քսանդոս, թէ
 ես մինակ կրնամ խմել : Անալ ըսաց . թէ
 որ չի կրնաս նէ ինչ կուտաս : Բոլոր տունս
 կուտամ ըսաւ : Այս դաշինքս հաստատե-
 լու համար երկուքն ալ հանեցին իրենց մատ-
 նին գրին գրաւ ըռէկին . ետքը ամէն մարդ
 տեղը դարձաւ :

Առաւօտուն Քսանդոս ելաւ լըւացվեցաւ
 տեսաւ, որ մասնին մատը չէ՛ զարմանալով

(*) Բարոս Դիոսփն որդին էր . որ կուսպաշ-
 ները խաղողի և գինիի և՛ ծրբեր էին, ու Դիո-
 նիտոս ի ըսէին . իսկ հայերը Սոյանդարամք կա-
 նուանէին . որովհետև ասոր քօնին օրը շաք ինչ
 դանիներ զուհի ընէին . որոնք արջանն էր ճանո-
 րողայ : Բայց շաք անգամ գրոց մէջ գինիին քեղը
 Բարոս ի ըրնէն . ինչպէս Եղբոս ասգինին ըսե-
 լա՝ քեղը, ի ըսէ Բարոս երեք յափնուի՞ր օտի :

հարցուց Նղըզոսին, թէ ինչ էրաւ : Պա-
 տասխան սըւաւ, թէ չկտեմ . բայց այսչափ
 գիտեմ, որ դուն առնդ կորսնցուցիր : Ին-
 չու համար ըսաւ : Երէկ գինովու թէ մէջ
 պարտաւորեցար, որ ծովը խմես . ասոր հա-
 մար մասնիդ գրաւ գրիր (*) : Պատասխա-
 նեց Քսանդոս, թէ ինչ ընելու է որ այս
 բանէս ազատիմ . իրաւ որ մարդու կարողու-
 թի վեր բան է . կապաւեմ, մէկ խելք մը բա-
 նեցնուր, ու բոլոր խմաստու թիդ և փորձովդ
 ետ առ իմ խօսքս, այս փորձանքէն զիս ա-
 զատէ, որպէս զի իմ՝ սըւած գրաւս ետ առ-
 նեմ՝ առանց անարգանաց : Իրաւ որ անկա-
 բեր է ըսաւ Նղըզոս, որ կարենամ քու
 խօսքդ ետ առնել, բայց կրնամ դաշինքդ
 աւրել :

Երբոր այսօր ամէնքդ մէկտեղ կուգաք՝
 դուն խօսքիդ մըս կեցի՛ր համարձակ, ամե-
 նելին մի վստիսար : Արեցու թէ մէջ ինչ որ
 ըսիր, հոն ալ ըսէ բազմու թէ մէջ, հրամայէ՛
 որ ծովուն քով սեղան դնեն . պատուիրէ՛
 ծառաներուդ, որ աման մը ծովու ջուր բե-
 րեն քնզի խմելու համար : Ար տեսնես որ
 բոլոր ժողովուրդը հոն ժողւած են, հրա-
 մայէ՛ քովի եղողներուդ, որ գաւաթը ծովու
 ջուր լեցնեն՝ ամս . ձեռքդ սու, բարձր ձալ-
 նով հարցնուր դաշինք ընողին, թէ ինչ էր
 միւր պայմանը . անալ պիտի ըսէ, թէ բոլոր

(*) Արովհետև հին իբրիստոսները ժողովուր-
 դին մէջ շաք մեծ յարգութի և գերազանցութեան
 ունէին, անոր համար գինովու թէ մէջ լըած խօսքի
 ալ ընդունելի էր, և եր ասունը անխարելի :

ծովը խմելը Ան ատենը դարձին հասողներուն
ըմէ՛ . Սանոսացիք, դուք գիտէք թէ՛ սրջափ
գետեր կը լեցւին այս ծովուն մէջ . իրաւ
ես պարտաւոր եմ միայն ծովուն ջուրը խմե-
լու , չէ՛ թէ գետերուն . ուրեմն պէտք է որ
այս մտորդս նախ գետերը կտրէ , որ ծովը չի
վաթին , հասցա թէ էս ալ խմեմ ծովը :

Քսանդոս տեսաւ , թէ այս հնարքս ան-
տարակոյս կրնայ դաշինքն աւրել , և մասնին
ես տալ , մեծ յուսով սկսաւ ուրախանալ :
Ուստի երբոր ժողովուրդը ծովուն մօտ դիզ
վեցաւ , բոլոր քաղաքը հոն լեցւեցաւ . որ
այս չի լուսած բանը տեսնեն , թէ ինչպէս
Քսանդոս զինքը պիտի այս բանէն փրցրնէ :
Բայց Քսանդոս ինչ խրատ որ առաւ Եզը-
բոսէն՝ կատարեց ըրաւ ժողովուրդին առ-
ջին : Սանոսացիք զարմոցան Եզրբոսին խել-
քին հնարքին վրա , և մեծապէս դովեցին :
Իսկ դաշինք ընօղը Քսանդոսին ոտքն ըն-
կաւ , խոստովանեցաւ , թէ յաղթըւեցայ , և
աղաչեց , որ դաշինքն աւրէ : Քսանդոս ժո-
ղովուրդին աղաչանքովը յօժարեցաւ աւրել
դաշինքն , ու հաշտուեցաւ անոր հետ :

Գ Լ . Ժ Ի .

Ապերախոսութեան Քսանդոսի ընդդէմ
Եզըբոսի :

Երբոր տուն դարձան , Եզրբոս ըսաց Քսան-
դոսին . Եր իմ քեզի ըրած այս աղէկութեան
դէմ , արժան չէ՞ որ էս ինչպէս քեզ աղա-
տեցի , գուն ալ զիս ազատես գերութէս :
Տըր խոստութիւն վարեալ ըսելով կարծես ,
թէ էս չեմ ուզեր քեզ ազատելու : Ելլը
դուռը նայէ՛ թէ որ երկու ազուաւ միատեղ
կեցած են , բարի նշան է . հասցա թէ մեկ
ազուաւ մը կայ , գէշ նշան է (^h) : Եզր-
բոս երկուսը միատեղ տեսաւ կեցած ծառին
վրա , եկա սպասեց Քսանդոսին . բայց եր-
բոր Քսանդոս ելաւ նայեցաւ , մէկը կար ,
մէկալը թռեր էր : Թշուառական ըսաց Ե-

(*) Հին ապենը հասերոսն և Ռուսաներոսն
ինչաժառ և յայնը որիպետով խախտութիւն իւ-
նէին , ընշած բաները իւ գոռալէին իւրոյ իւրոյ
խաբէութիւն . որ իւստի հաւատանայուին . որ հասե-
րոսն յայնէն և շարժանութիւն իւրոսալէին լա-
որիպի ըլլայ , ինչ գէշ : Եւ երբեմն խոր բանա-
լով աղիտներոսն շարժաժառն և լերդին գոռնէն
գոռալութիւն իւնէին : Ահա Քսանդոս ալ ագ-
ոսաւ նշան դնելով գէշ սեպեց ազապ ընել Ե-
զրբոս . որ է խաբէութիւն :

զորոսին, դուն ինձի երկուք են ըսիր, ուր է: Պատասխանեց, թէ ես ճշմարիտն ըսի, բայց մէկը թուաւ: Անանկ չէ, հասա գարշէլէ դուն զիս ծաղր ըրիր: Բարկութիւն պատկրեց ծառաներուն որ հանդէսընեն Եզորոսն ու ճեճէն: Երբոր կը զարնէին խեղճին, տեղէ մը կանչէցին Քսանդոսն, որ կերակրի երթայ: Սկաւ Եզորոս կանչէ. վայ անբաղդ ողորմելուս, ես որ երկու ադուաւ տեսայ, ճեճի արժանի եղայ. դուն որ մէկ ադուա մը տեսար՝ հարկիք ուտելու կերթաս. ահա իմ փորձս յայտնի ըրաւ, որ ըրած կախարդութիւղ սուս է: Քսանդոս զարմանալով անոր բարակ մտայը վրա դադրեցուց ճեճը:

Գ. Լ. Ժ. Ը.

Փորձէ Եւովէոս գիտնականս:

Եզու որ Քսանդոս կերակրի հրամայուց շատ փիլիսոփաներ և ճարտասաններ. Եզու բոսին պատկրեց, որ դուռը կենայ, և պատիւ ըլլալու համար միայն իմաստուն մարդիկ ներս առնէ. իսկ Եզորոս դուռը գուցեց, ու ներսը կեցաւ. նայիս հրամայուցած մարդուն մէկն եկաւ. դուռը զարկաւ: Եզորոս առանց դուռը բանալու ներսէն հարցուց, թէ շունը ինչ կը շարժէ: Անալ զըրտէն կարծեց, թէ իրեն շուն կըսէ, բարկա-

նալով ձգեց գնաց: Արչափ մարդիկ որ եկան, ասանկ բարկանալով ետ դարձան, կարծէին, թէ զիրենք կը նախատէ. մը զի Եզորոս ամենուն ալ այս հարցմունքը կընէր: Զետոյ մէկն ալ եկաւ դուռը զարկաւ. տնոր ալ հարցուց Եզորոս, թէ շունը ինչ կը շարժէ: Անալ դրսէն պատասխան տըւաւ, թէ պոչն ու ականջները: Եզորոս տեսաւ որ յարմար պատասխան տըւաւ, բացաւ դուռն ու տարաւ ներս տիրոջը քովը, ըսաւ. թէ մէկ փիլիսոփայ մը չեկաւ քու հարկիքդ ասկէ ՚ի զատ:

Քսանդոս սաստիկ բարկացաւ՝ կարծելով թէ մէկալոնք զիւրը ծաղր ընելու համար չէն եկած: Մէկալ օրը բարեկամներն եկան դարոցը, և երեւոյ զարկին Քսանդոսին, որ զիրենք անանկ անարգելով գոնէն ետ ճամբեց. ինչո՞ւ համար՝ կրտէին այն աստիճանը մեզ անարգելցիր. դրիր դուսնը քով այլանդակ գերեզ, որ մեզ թշնամանելով ետ դարձուց: Հարցուց Քսանդոս, թէ քուն էք ի՞նչ էք. իրաւ է ըսածնիդ: Պատասխանեցին ամէնքը մէկ ձայնով. Ճշմարիտ է քեզի ըսածնիս: Ըուս մը կանչեց Եզորոսն հարցուց բարկանալով, թէ ինչո՞ւ համար ասանկ անարգելով ետ դարձուցիր բարեկամներս: Պատասխանեց Եզորոս, թէ դուն չի պարտաւորեցիր, որ յիմար մարդիկ թող չխամ ներս մտնելու. որ միայն գիտուն իմաստուն մարդիկ նստին հարկիքդ: Իրաւ այդպէս է ըսաւ Քսանդոս. բայց ասոնք ամէնքը գիտուն չէն: Պատասխանեց Եզորոս, թէ ես այս գիտեմ, որ դուռը զար-

կած ատենը, ես իրենց կըհարցընէի, թէ շունը ի՞նչ կըշարժէ. մէկը չի կըցաւ հասկընալ, և հարցմունքին պատասխան տալ. ուստի կընայէի որ ազէտ մարդիկ են, դուռը չէի բանար. միայն անոր բացի դուռն, որ ըստ պատասխան տրուաւ :

Եզրբոս խօսքը ըմբոցուց, բայց մէկը չի կըցաւ գէտ խօսիլ. և ամէնքը խոստովանեղան, թէ ճշմարիտ է ըսածը :

Գ. Լ. Ժ. Թ.

Հնարագիտութիւնի Ելու՛մբո՛ւի :

Քսանդոս օր մը Եզրբոսին հետ գերեզմաննոցը գնաց, որ գերեզմաններուն վայելի դովեսաները կարգալով կը զըւարձանար : Եզրբոս տեսաւ, որ մէկ գերեզմանի մը վրա գրած էին այս գրերս Յունաց . α Ύψω . β Αχρω . δ Σελω . ο Ορθοδω , ε Ήρτιε . ρ Թիդω . χ Ιουή : Եզրբոս այս գրերը ցըցուց Քսանդոսին , հարցուց , թէ ասոնք ի՞նչ կը նշանակեն : Քսանդոս ուշադրութեամբ նայեցաւ . բննեց մտախոսաց . չեմ հասկընար ըստ ի՞նչ ըսել կուզէ : Անտոնը գարձաւ Եզրբոս ըսաց . Ա՛միրաց եթէ այս գրերուն ուժովը հոս դանձ գտնեմ, ի՞նչ կուտաս ինձի : Անալ սիրտ տալով ըսաւ , թէ կէտը կուտամ և քեզ ալ կաղատեմ : Եզրբոս այս խոստմունքը լսելով չորս քայլ աքը՛ հեռացաւ անկէ՛ փո-

րեց գանձ գտաւ . տարաւ Քսանդոսին ըսաւ , թէ կատարէ խոստմունքդ . զիս ալ ազատ ըրէ : Պատասխան տրուաւ , թէ քեզի չեմ ազատեր , մինչև որ այն գրերուն զօրութիւնը չի մեկնես ինձի . վի՛ զի ասելի կուզեմ անոնց իմաստը հասկընալ , քան թէ ոսկին ժառանգել :

Եզրբոսն ալ ըսաց թէ ով որ այս գանձը հոս թաղեր է, իմաստուն մարդ ըլլալով այս գրերը փորել տրուեր է. որ կընշանակեն . α Ύψωս գնացեալ . β Αχρωσ քայլս . δ Γεωμετρικα չորս . ο Ορθοσμοս փորեալ . ε Ήρτιε քայլս . ρ Թիդաս քանձ . χ Ιουήրτιε քանակոյ : Քսանդոս ալ ըսաց . որովհետև այսպէս հնարագէտ բան գիտցող ես դուն , յիմար կըլլամ ես թէ որ քեզ աղատեմ : Արկնեց Եզրբոս . թէ որ չընես՝ այս գանձը չես կրնար ժառանգել . վի՛ զի կըրթամ Բիւզանդացոց (*) թագաւորին կիմացը նեմ . որ անոր համար պահած էր : Ուստի՞ գիտես ըսաց Քսանդոս : Ահա՛ գրերը յայտնի կը ցըցնեն ըսաց . α Ύψωս տուր . β Αχρωս քիւն թագաւորին . δ Σελωսիս Գիտնէսիրտս . ο Ον զոր . ε Ήրτιե գտեր . ρ Թիդաս քանձ . χ Ιουήրτιε քանակոյ : Քսանդոս այս բանը լսելով հասկըցաւ որ ձեռքէն սխալ

(*) Բիւզանդիոն իբու՛ի սփամպու՛ Ալիպան Իլիսանին անոսամբը . որ նախ շինեց պալատի՛ քաղաք մը Ապոլոնիոն պարգատմով . յետոյ իսպանութեանոս նորագեց մեծոց . շին պալատն ուս նըստօր թագաւորը ինքսամպեր մօպ էլած իլիպնեբոն . ինչպէս Եզրբոս ալ իլիպանէ :

երթայ . ան ըսաց կէսն , ու ձայն մի հաներ :
 Դուռն չէս ինձի արւօղը ըսաւ Եղորոս . հա-
 պա ոսկին թաղօղը արւեր է : Մտնի գիր
 նայէ ինչ կը նշանակեն գրերը . ա Անէօմէ-
 նի դառեանն . թ Վարդանանդէս գնացեալ . ծ
 Տիէէնէնէ բաժանեցէք . օ Օն զըր . է Խորէ-
 դէ գտիր . Տ Թիսուսըն գանձ . Ճ Խորիսիս
 ոսկոյ :

Եկր տուն երթանք ըսաց Քսանդոս , որ
 բաժնէնք ոսկիները , և քեզ ալ աղատ ընեմ :
 Բայց երբոր եկան՝ վախցաւ Քսանդոս , չը-
 լայ թէ բանը դուրս հանէ Եղորոս . ուստի
 քանտը գնել հրամայ խեղճը : Երբոր բանտը
 կը տանէին Եղորոս կրօնք , թէ փիլիսո-
 փաները այցակէս կըստահեն իրենց ըրած
 խոստմունքը : Չէ թէ միայն չազատեցիր զեւ ,
 որ խոստացեր էիր , հապա բանտն ալ գնել
 կուտաս : Այս խօսքովս սիրտը շարժեցաւ
 Քսանդոսին , շուտ մը սրտուիրեց , որ թող
 տան ըսելով , անտարակոյս երբոր դուռն ա-
 զատիս , զեւ չարչար սխալ բամբասես և
 ամբաստանես :

Պատասխանեց Եղորոս . հիսնս սրչափ գէ-
 շու թն կուղես ինձի ըրէ . բայց գիտնաս որ
 օր մը զեւ ահամայ սխալ աղատես :

ԳԼ . Ի .

Աստուծոյ Եղովնոյ :

Այս ժամանակս Սամոս կղզին զարմանալի
 գիպւած մը սրտահեցաւ . երբոր մէկ չհա-
 նուր երևեց ի տն մը կընէին , յանկարծ ար-
 ծիւ մը ինչաւ բարձրէն իջեց տէրութեան
 մասնին , տարաւ ծառայի մը ծոց ձգեց :
 Բոլոր ժողովուրդը զարմանալով այս սքան-
 չեղեացս վրա , եկան միտքան աղաչեցին
 Քսանդոսին , որ իրենց մէջ խիտ երևեցի
 իջեան , և մեծ փիլիսոփայ էր , մեկնէ ա-
 նոնց , թէ ինչ կընշանակէ այս հրաշալի
 գիպւածս :

Քսանդոս չէր գիտեր ինչ ստոասխան
 տայ , ժամանակ ուղեց որ մտածէ : Երբոր
 տուն դարձաւ միշտ անհանգիստ արտմութե
 մէջ մտալով սկսաւ մտաճոտիլ : Եղորոս տե-
 սաւ թէ իր տըր արտմութի կը մտչի հար-
 ցուց թէ ինչու համար ասանկ արտում էս-
 այս բանս ինձի ձգէ , և արտմութեդ մէկ գի-
 դիր , որ քեզ կը տանջէ : Գննս վաղէ զուրցէ
 Սամոսայինըուն , թէ իմ բանս չէ հրաշք
 մեկնել , և դուշակութի ընել . սակայն ես
 մէկ ծառայ մը ունիմ տունս , որ ասանկ
 բաներու լաւ տեղեակ է , այն կընայ տալ
 ձեզի մեկնութիը գիպւածին , և ձեր տա-
 բակուսանքը քակել : Տէր իմ , թէ որ էս

անոնց տարակոյսը մէրցընեմ՝ բոլոր սպառի-
վը քեզի կըլայ, որ ասանկ բան գիտցող
ծառայ ունիս . թէ որ չի կրնամ, միայն ինձի
կըլայ սպասուանքը :

Քասնդոս մեծ ապէս ուրախանալով գնաց
միւս օրը քաղաքացոց ժողովքը, և անոնց
սպասմեց Եզդբոսին խօսքերը : Անոնք ալ ա-
ղաչեցին . որ շուտով բերել տայ : Երբոր Ե-
զդբոս եկաւ մտաւ Մամոսացոց ժողովքին
մէջ, կերպարանքին նայելով սկսան ամենքը
ծիծաղել, մինչև ծաղը ընելով ըսին, թէ
կրնայ ըլլալ, որ ասանկ այլակերպ կոչտ
մարդը այս հրաշքին մեկնուածիւր տայ : Ա-
սանկ ցուցանքաւոր բերնէն ինչպէս պիտի
բարի բան լսենք . ուստի նորէն սկսան կա-
տակելով խնայալ Եզդբոսին վրան :

Իսկ Եզդբոս ձեռքը շարժելով կաղաչէր
ժողովքին որ լուռ կենան . ո՛վ Մամոսացիք
կըսէր, ինչո՞ւ զիս կանարգէք կերպարանքիս
տգեղ ըլլալուն համար . հոգին պէտք է
նայել չէ թէ կերպարանքը . բնութիւր շատ
անգամ գեղեցիկ հոգին տգեղ մարմինին մէջ
կը դնէ . դուք ամանին ձեռն կրնայիք, թէ
մէջի եղած սպառուական գինիին : Բոլոր ժո-
ղովքին մարդիկը այս խօսքերս լսելով ըսին
որ, եթէ դուն ունիս մեղի օգտակար բան
մը խօսելու, որ կարենայ ամենուս սիրտը
հանգչեցընել, խօսէ : Ան ատենը մեծ համար
ձակուածի մը այսպէս խօսեցաւ Եզդբոս . Ո՛վ
Մամոսացիք որովհետև երբոր Բաղդը սիրէ
երկպառակութիւ և խռովութիւ ցանեւ, կը
դնէ մէկ առիթ մը վառաւորութե տիրոջն
ու ծառային մէջ . եթէ պատահի որ ծառան

իյնի իշխանութե տակը, վիշտ կը բաշէ . և
թէ տիրոջմէն վեր ըլլայ, նոյնպէս վիշտ կը
քաշէ ծեծ կուտէ . անանկ որ բանը որ դին
դառնայ, ծառան նեղուածին պիտի քաշէ :
Դուք մինչև որ զիս ազատ չընէք . իմ սիրոյս
իշխանութեը տակէն չի հանէք, ես համար-
ձակ ձեզի չեմ կրնար յայտնելաւսնց վախու՝
դայն, որուն կը վախաբիք : Այն կետին բո-
լոր ժողովուրդը մէկ ձայնով կանչեց Քասն-
դոսին, թէ ազատ ըրէ Եզդբոսը, կատարէ
Մամոսացոց կամքը . ասով բոլոր քաղաքը
ազատ կընես :

Քասնդոս ստատոսխան չի տըւաւ . Դատա-
ւորը մէկէն կանչեց Քասնդոսին . թէ որ
դուն ժողովուրդին մտիկ չընելով ազատ չը-
նես բու կամքովդ՝ հիմա ես ազատ կընեմ
իմ իշխանութիւս . որ քեզի հաւատար կըլ-
լայ :

Այլ չի կրցաւ դեմ կենալ Քասնդոս՝ ա-
կանց կամքով ազատ ըրաւ . որ փողերով
պարտաներով քաղքին մէջ կրկանչէին, թէ
Քասնդոս փիլիսոսիան ազատ ըրաւ Եզդբո-
սը Մամոսացոց աղաչանքին համար : Եւ այս
պէս կատարեցաւ Եզդբոսին մարդարեւ-
ութիւ . որ Քասնդոսին ըսեր էր, թէ ահա
մայ զիս պիտի ազատ ընես : Եզդբոս ազատ
ըլլալէն ետև սկսաւ ասանկ խօսիլ ժողո-
վուրդին :

Ո՛վ Մամոսացիք՝ ինչպէս գիտէք, (*) օր-
ծիւն է թուրքներուն թաղաւորը . որ իշ-

(*) Աճծիւս, որ է խարցալ Ռուսներ, ինչով
Ռուսներն իրո՞ւ Ռաֆասոր, որ ունի ան ամենէն պարտ-

խանական մտանին վերցուց տարաւ ծառային ծոցը ձգեց . այս բանս կը նշանակէ՝ որ հիմական թագաւորներէն մէկը կը մտածէ , որ ձեր ձեռքովը ձեր իշխանութիւն կործանէ , և ձեզ գերի ընէ եղծանկէով ձեր օրէնքը : Այս խօսքս ահի դողն մէջ ձգեց բոլոր Սամոսացիք :

Քանի մը օրէն ետև Սամոսացիք թուղթ առին Արեսոս թագաւորէն (*) Լիւդիայի . որով իրենց կը պատելիէր , որ ամէն տարի իրեն տուրք տան . եթէ չի տան՝ պատերազմով վրանին պիտի ելլէ . պատրաստ կենան : Այս բանիս վրա ժողովք ըրին որ մտածեն ճամբայ մը գտնեն . վի՛ զի եթէ հնազանդէին , ազատուիլ կը կորսըլէր . և կը վարս-

ւոր եւ սոսիւսի է . ու ամենուն ի՛նչ յաշխէ . նաև Վիտոսին ընծայ եղած է , ինչպէս պիտի բացարբենք :

(*) Արեսոս լիւդիայի Ռաֆաուորն էր 550 րաբի սոսալ քսի Ռոսալանէն . որ Արտային մէջ շաբաբէրոս քիբելով Բուրք Յոնիբեր հարկաբոս բոսայնուտի գանձ մեծութիւն զիւրեք , որ շաբ մեծ եղաւ հարստութիւն : Իմաստուններոս հնախ խօսիլ շաբ ի՛նչ պիբէր . օր մը մեծութիւն լրոս ուրար ճանախով ըստց Սողոմ գիլիստիային , թէ ինչի պէս գոտաւոր մարդ պետած էս : Անուըսաց , թէ մինչև 'ի մահ պեպք լի , որ մարդ իրեն երանի րայ : Յեպոյ Աիբոս Ռաֆաուորն յաղիւընելով ճաղաքի սոտին . երբոր մէկ ուրիւոր մը լրիպանուտաբը լիբոցոսց պիպի պարնէր Արեսոսին , իր պաւն քովը գանընէրաս , որ լիւրան իսպած էր լիբ խօսիբ . սրպին ինիբոտան լիւրան բայ լիբոտաս . մի պարնէր բաց լի

նային Արեսոսին իշխանութիւն տակն իյնիլ . մինչև հարկ եղաւ խորհուրդ հարցընել Եղբ բոսին . և անոր տրած խորհուրդին հետևիլ ամէն բանի մէջ : Անպ պատասխան տըւաւ , թէ Պարսներ ձեր իշխանները խորհուրդ կուտան , թէ տուրք տանք Արեսոսին . և օգտակար է հնազանդիլ անոր , ու պատերազմին թշուառութիւն ազատիլ , ուստի իմ ձեզի տալու խորհուրդս պարսպ է . սակայն բաւական է ձեզի մէկ բան մը պատմել . որ հասկընաք թէ ինչ պէտք է ընել այս բանիս մէջ : Այս աշխարքիս մէջ բաղդը երկու ճամբայ յայտներ է մէկըմէկու հակառակ . մէկն է ազատութիւն ճամբան . որուն սկիզբն է դժւար և խիստ , և վերջը գիւրին ու զըւարձալի : Երկայն է ծառայութեան . որուն սկիզբն է գիւրին և հանգիստ , բայց ետըր դժւար և խիստ : Այս բանս որ լսեցին , ամէնքը մէկ ձայնով պոռաջին թէ մեկը ազատ ենք . ծառայութիւն տակ չէնք իյնիլ : Եւ այսպէս թագաւորին խրկած գեապանը ետ ճամբեցին առանց տուրք տալու : Արեսոս երբոր բանը հասկըցաւ՝ ուզեց Սամոսացոց վրա պատերազմ բանալ . բայց գեապանն իրեն ըսաց , թէ ար իմ , չեմ կարծէր թէ կարենաս անոնց յաղթելով վրա ել

նոտրին . իմ հարցս է Արեսոս : Զ ինոտրը բոնեց քարաս Աիբոս Ռաֆաուորն առնին , որ հրամեց իբալ լառէն ուղ ուղ երեն . իբալին քոն որ բեբին՝ միպն ընիսա Սողոմին խօսքն ու սխաւ ուոտաւ , Սողոմ Սողոմ : Թափաուորը հարցոսց . երբոր իմացաս Սողոմին խօսքը , ուղար ըրոս :

լէս որչափ որ Եզրբոս իրենց քօլն է . վն զի անոր խորհուրդին կը հետեւին , որ ամմէն բա նի տակէն կեղէ . ուստի իմ խորհուրդս այս է , որ ամէն բանէն լաւ կըլլայ . գեսպան խրկէ Սամասացոցմէ Եզրբոսն ուղէ , և խօսք սուր իրենց հետ հաշտութիւն ընելու . պար գեւներ ալ խոստացիր առանց յիշելու տուրքը՝ ձգէ հիմն պատերազմը : Երբոր Եզրբոսը ձեռք ձգես ան տոներ առանց աշխատանաց կը յաղթես անոնց : Կրեսոս հաւանեցաւ այս հնարքին , և գեսպան խրկեց ուղէց Եզրբոսը : Անոնք ալ հաւանեցան խրկելու :

Եզրբոս հասկընալով անոնց միտքը եկաւ ժողովքին մէջ այսպէս խօսեցաւ . Ո՛վ Սամասացիք ինձի մեծ պատիւ է , որ թագաւորին երթամ ոտքն իյնիմ , պատուեմ . սակայն երթալէս առաջ կուղեմ ձեզի առակ մը զուրցել : Հին տոները երբոր կենդանիները համաձայն էին՝ գայլերը պատերազմ բացին ոչխարներուն դէմ . որ շներուն հետ միաբան ըլլալով անոնց ետեւէն կերթային . իսկ շները առաջնորդ ըլլալով կը ծեծկըղէին . անանկ որ գայլերը չէին կրնար մօտեանալ ոչխարներուն : Ուստի գայլերը գեսպան խրկեցին ոչխարներուն , որ հաշտութիւն բայց իրարու հետ սիրով վարվելու համար ուղեցին , որ շները պատանդ ընէին խրկեն : Ոչխարները յիմարութիւն հաւանեցան , և խրկեցին անոնց իրենց շները . գայլերը մեկէն պատուեցին շները՝ եկան ոչխարներն ալ կերան :

Սամասացիք լաւ հասկըցան առակին միտքն ու չուղեցին որ Եզրբոս երթայ իրենց քօ-

վէն . բայց Եզրբոս չուղեց կենալ , ելաւ գեսպանին հետ գնաց թագաւորին :

Գ Ի . Ի Ա .

Եզրբոս հաւերեցողանէ զԼագաւորն :

Երբոր Լագաւոր քաղաքը հասաւ Եզրբոս ելաւ թագաւորին առջին . բայց թագաւորը զայն որ տեսաւ աւելի բարկացաւ : Մեծ ամօթ է ինձի՛ կըսէր , որ սասնկ այլանդակ մարդը զլս արդէլէ , և անանկ մեծ կղզին ձեռքէս հանէ : Պատասխանեց Եզրբոս , թէ ո՛վ մեծ թագաւոր , էս ոչ բանութիւն եկայ հոս , և ոչ վախնայուս . այլ իմ կամքովս եմ եկեր . ներէ ինձի , որ քեզ մը խօսիմ . սակայն մեր բանին վրայ չի խօսած մէկ առակ մը պատմեմ , թողու թիւն ըրէ : Մէկ մարդ մը մարտիս քիչիկ ժողովք կը մեռցընէր . զխաւածով բռնեց ճուղու ճշմարտութիւն մը . կենդանին տեսաւ թէ զինքն ալ պիտի մեռցընէ , սկսաւ աղաչել , թէ զին մի մեռցընէր պարսպ տեղը . վն զի էս ոչ ցորենի միտս ունիմ , և ոչ մէկ ուրիշ զէն մը կրնամ տալ . այլ միայն շարժելով (*)

(*) Այս պեսալ կենդանիներուն յայնք օրէն ին սասնականաց . էն չի լրայի ծախէն օրը ին պար-

մանտրարտիկ մաշկերս որ ունիմ՝ վրաս՝ քաղցր
ձայն կը հանեմ, որ անցնողները և բաները
ները զըւարձանան. ուստի ձայնէս 'ի զատ
բան մը չունիմ, և ուրիշ բան չես կրնար
վրաս գտնել: Այս բանս որ ըսեց, թողուց
որ երթայ:

Ո՛վ մեծ թագաւոր. ահա էս ալ ոտքդ
ընկած կաղաչեմ, զիս փուճ տեղը մի՛ մեռ-
ցրներ. էս մարդու գէշութիւնը քան չեմ. մէկ
յանցանք մ' ունիմ, որ համարձակ կը խօ-
սիմ, և մարդու երեսսալառութիւն չեմ ըներ.
Թէպէտ մարմինս է անշորհք, որ դրսէն
անարգ կ'երևնամ, բայց խօսքս անարգ չէ:
Թագաւորը այս խօսքիս վրա անանկ զար-
մացաւ, որ մեռցընելու մեղքըցաւ. ուստի
կանչեց. Ե՛ղբոս, էս չէ՛, հասցա՛ (*) ճա-
կատագիրը կեանքդ քեզի բաշխեց. խնդրե՛
խամէ ի՛նչ կուզես, քեզի կը շնորհեմ: Ո՛վ
մեծ թագաւոր, ըսաւ Եղբոս, կը խնդրեմ
որ Սամուսացոյ հետ հաշտութիւն ընես: Խիտ
բարե՛լըսաց կրեսոս՝ կը հաշտուիմ: Ան ատենը
Եղբոս ընկաւ թագաւորին ոտքն ու խոնար

նէն մաշկեղէն թեւերուն. և այն մաշկեղան թըր-
թեռաւովը՝ օրը իւր շարժի սաստի՛ խայն իւր հանէ.
շաք մանր ինչդանիներ ասանկ շաքիայն իւր հանէն:

(*) Ծախապագիւր ըսելով հեթանոս գիւլիսոփա-
նէրը ինչմանային ճախաքի վրա գրած ման մար-
դուն գաւիտը. որ գրածը հարկաւ պիտի ըլլար,
ինչ որ ընէս շահ չի կայ իւրեքն: Այս գիրը միայն
ածին երբ իրնային խորտաւ, Բայո լեկն իրնաւ ա-
րել. անոր համար իւրեքն, թե Գիտոս Անի-ղա-
սին մահաւանը վրա խոնար. որ ճախապագրած

հուժի՛ շնորհակալ եղաւ ըրած բարերարու-
թիւնը համար:

ԳԼ. ԻԲ.

Եւրօբոս գրէ զառաջին իւր:

Սըրբոս իր առակաները ան ատենը գրեց,
երբոր կրեսոս թագաւորին քովն էր. որ
մինչև մեր օրը մնացին: Այս առակաները
ընծայ ըրաւ թագաւորին. անալ մեծ շնոր-
հակալութիւն ըուսեց, և Եղբոսին մեծ ու-
թիւն տալով գեսպան ըրաւ, ու թագաւորաւ
կան թղթերով խրկեց, որ երթայ Սամուս-
ացոյ հետ հաշտութիւն խօսի թագաւորին կող-
մանէ, և հասկըցընէ, որ իրեն աղաչանքով
կրեսոս անոնց հետ բարեկամ պիտի մնայ:
Ասկէ 'ի զատ թագաւորը շատ պարգևներ
ընծայ ըրաւ Եղբոսին, և ճամբուն ամեն
բանը հոգաց: Երբոր Սամոս հասաւ, քա-
ղաքացիք անպատմելի ուրախութիւն ըլցեամ,
թագ պատկ տարին իրեն. և քաղաքական
հանգէտներ ըրին, որ մեծ պատիւ ըլլայ Ե-
ղբոսին:

Իսկ Եղբոս թագաւորին թղթերը կար-
դաց բոլոր ժողովուրդին առաջը, հասկըցը-
նելով թէ անոնք ինչպէս որ իրեն աղաւա-

նէր: Բայո ԻԲ խորտապետները ինչմանն ածային
նախախտութիւն՝ որ իւր խոտաւարէ աշխարհոս:

Թի շնորհեցին, ինքն ալ անոր դէմ այս բա-
նով հատուցում ըրաւ. ուստի Թագաւորին
միտքը յայտնեց անոնց և հաշտուած ըրաւ:
Յետոյ ելաւ այս կղզիէն գնաց զանազան
քաղաքներ իմաստուն մարդիկ փնտրուելով
որ հետերնին հակաճառու թի ընէ: Մինչև
ելաւ (*) Բաբելոն գնաց. հոն ալ իր իմաս-
տու թիը յայտնեց, և Ղիգերոս Թագաւորին
ստրատը մտաւ:

Այն Ժամանակի Թագաւորները իմաս-
տու թի վարելով կուխ չունէին, միշտ խա-
ղաղուած մէջ էին. և ասով շատ անգամ
կրարու առակներ, և իր թին բաներ կը-
գրէին հարցմունք կընէին այս պայմանով,
որ երբոր մէկը չէր կրնար պատասխան տալ,
կը պարտաւորէր տուրք տալու մէկալին,
ինչ կերպ որ դաշինք կընէին (**):

Եզրբոս ամեն հարցմունքին և առակնե-
րուն գիւրին պատասխան կուտար, որ Ղի-
գերոս Թագաւորին կը գրէին, և ասով մեծ
համբաւ ունեցաւ Թագաւորը: Բայց որով
հետև մէկալ Թագաւորները չէին կրնար
Ղիգերոսին ինդիլներուն պատասխան տալ,
կը պարտաւորէին դաշնադրու թեան համար
տուրքեր տալ Թագաւորին:

(*) Բաբելոն իսմ Պաղտատ այն Ժամանակը
Ժաղիսաթ ըլլալով գիպոսաներոս ցարգո-ւթիւն իար,
մանասանդ Ղիգերոս Թագաւորին օրը. անոր հա-
մար Եզրբոս հոն գնաց:

(**) Այս իերպ հարցմունքս մնչև հիմա կայ
Ա բաբաջոյ մէջ. որ դրոսի գաղապները շապ ան-
գամ Շէյխերըն Տերվիշները իերբան մեծամեծ-

Եզրբոս որդեգրէ ինքեան Ղեհնոս:

Եզրբոս տեսաւ որ զաւակ չունի. մէկ
աղնուականի մը զաւակ Եննոս անունով ի-
րէն որդի ըրաւ, տարաւ Թագաւորին յանձ-
նեց իր իր հարազատ զաւակը. բայց այս
ապերախտը շատ չանցաւ մեծ անկարգու-
թիներ ըրաւ. Եզրբոսին տանը մէջ: Եզրբոս
հասկըցածին պէս անէն դուրս ըրաւ: Իսկ
Եննոս ոխ պահեց, ու Եզրբոսին վրէժխն-
դիր ըլլալով Թուղթ մը շինեց անոր բեր-
նէն, որ կըգրէ իշխաններուն. որոնք իր թին
առակներ կը խրկէին Ղիգերոսին. և անոնց
կը հասկըցնէ, թէ ասկէ ետև ձեզի հետ
մէկ պիտի ըլլամ Թագաւորին դէմ: Այս
Թուղթը Եզրբոսին մասնիկովը կնքեց տա-
րաւ Թագաւորին ցըցուց:

Թագաւորն որ տեսաւ Եզրբոսին կնքը
Քեհիբը, կարծեց թէ անտարակոյս Եզր-
բոսն է գրեթ այն Թուղթը իրէն դէմ. ուս-
տի բարկուածը հետևելով անանկ տարցաւ,
որ մէկէն հրամայ հերմիլբոսին (*), որ ա-

նէրոսն Բան իը հարցնէն. եթէ պիտան, ին-
պարագաւորին անոնց Բան պաււս:

(*) Հերմիլբոս էր Թագաւորին մէկ հասարակ-

ուանց քննելու մեռցնէ Եզրբոսը իբր մատ
նիչ . Հերմիբրբոս ճշմարիտ բարեկամ ըլլա-
լով Եզրբոսին՝ իրեն բարեկամութիւն յայտ-
նի ըրաւ այս կերպով : Առաւ Եզրբոսը
ասարաւ մէկ գերեզմանի մը մէջ պահէց ա-
մենեւին ծածուկ . և ինքը զգուշութեամբ բան
կը տանէր անոր մարդ չխնայելով : Իսկ Են-
նոս Թագաւորին հրամանովը Եզրբոսին ամ-
մէն բանը յափշտակեց :

Ճամանակ անցնելէն ետև Կէրքէնարոս
Թագաւորը Եգիպտոսացոց լսեց որ սպաններ
են Էզրբոս , Թուղթ մը գրեց Վիգերոս Թա-
գաւորին՝ կաղաչէր որ իրեն մէկ քանի սրա-
միտ ճարտարապետ ֆալֆա խրկէ : որպէս զի
շինեն իրեն անանկ մէկ աշտարակ խաւք մը ,
որ ոչ երկինքին դպչէ , և ոչ գետինին : Կաւ
խրկէ իրեն անանկ մէկ խեղացի շարակ մարդ
մը , որ կարենայ պատասխան տալ խրթին
առակներուն : Թէ որ ըսաց այս բանս կա-
րենաս ընել , ես տուրք կուտամ քեզի . Թէ
չի կրնաս , գուն ինձի պիտի տաս : Այս
Թուղթն որ կարգաց Թագաւորը արտմու-
թեմ պաշարվեցաւ . վե զի մէկը չունէր քովն
որ կարենայ աշտարակին առակը մեկնել .
ուստի սաստիկ ցաւելով Եզրբոսին մահուա-
նը վրա՝ կրէր Թէ անոր մեռնելով իմ աէ-
րութես գլխաւոր սիւնը կործանեցաւ :

Հերմիբրբոս տեսաւ Թէ Թագաւորին կսկի-
ծը սրտանց է , եկաւ աւետիս արւաւ , Թէ
Եզրբոս կենդանի է . վե զի Թագաւորին

բիմ պաշարմադերբէր Հասասպաչը . անոր հա-
մար իրեն պատիւբեց , որ մեռցնէ Եզրբոսը :

օգտին համար չի մեռցուցի . ըսւ գիտէի ,
որ շատ սխտի զըջաս արւած վճարիդ վրա :
Այս բարի լուրը ըսածին պէս Թագաւորը
մեծապէս ուրախացաւ : Ուստի շուտով Ե-
զրբոսը գերեզմանէն դուրս հանեցին , վրան
գլուխը խեղճ աղտոտ հողոտ , մէկէն Թագա-
ւորին գէտը հանեցին . որ զայն անանկ խեղճ
տեսնելով այնպէս սիրաբ ցաւեցաւ , որ
սկսաւ լալ : Հրամայ որ շուտով ըլլան հագ-
ցնեն և ամմեն սրկատու Թիր հոգան : Եզր-
բոս Եննոսին ըրած անօրէնութիւն տուա հա-
նեց , և իր մեծարտու Թիր յայտնի ընելու
համար՝ ներուստ ինգրեց Թագաւորէն , որ
չի մեռցնէ Եննոսը :

Վիգերոս Թագաւորը հանեց եգիպտացոց
Թագաւորին Թուղթը ցըցուց Եզրբոսին , որ
հասկընալով առակին միտքը , սկսաւ ծիծա-
ղել . ետքը Թագաւորին ըսաց , որ ասանկ
պատասխան տայ : Երբոր ձմեռն անցնի՝ քե-
զի բանւորներ կըխրկեմ , որ շինեն ըսած
աշտարակդ : Կաւ կըխրկեմ մէկ գիտուն
մարդ մը , որ ամէն բանի պատասխան տայ
ինչ որ իրեն առարկեն : Անասենը Վիգերոս
ճամբայ գրաւ եգիպտոսի Թագաւորին գէւ
սլանները , և նորէն տըւաւ Եզրբոսին ամէն
մեծութիւն , իրեն ծառայ արւաւ Եննոսն
ամէն ունեցած բարիքովը :

Անյիշատարութիւն և խրատք Եղիշեանի :

Յղջրբոս նորէն տունն առաւ Եննոսը . ա՛մենևին անցած բաները չլիշէլով իր զաւակին սէս կը նայէր, և շատ գեղեցիկ խրատներ կուտար, որ բարև ըլլայ : Որդեակ կըսէր, ամէն բանէն աւելի զած պաշտէ . թագաւորին հնազանդ եղիր, որ քեզ չի նախատեն . խոյ բարեկամներուդ հեզ և խոնարհ, որ միշտ զքեզ աւելի սիրեն : Այօթք ըրէ թշնամիներուդ երբոր խեղճ կըլլան աղքատութիւն և հիւանդութիւն . որ ետքը քեզի տրամուծի չի բերեն : Շատ անգամ ալ բարեկամներուդ առողջութիւնը համար աղօթք ըրէ : Միշտ նայէ որ ընկերոջդ հետ աղէկ սիրով երթաս, որ չըլլայ թէ ցանկութիւն ուրիշ մարդու ետևէն ըլլայ . որովհետև կանայք բնապէս վտարտական և թեթևամիտ են . երբոր կըշտըքորթին, չար բան չեն մտածեր : Անխոհեմութիւն ամէն բանի մէկէն մի՛ հաւատար, քիչ խօսէ, և միշտ քու լեզուիդ տըր եղիր . մի՛ նախանձիր ուրիշներուն բաղջին . առաւել ուրախացիր ուրիշին յաջողութիւնը վրա . վն զի նախանձը աւելի վնաս կը բերէ

քու անձիդ, քան թէ ուրիշին (*) : Հողաբարձուծի ըրէ տանդ . արթուն կեցիր ծառաներուդ վրա, որ քեզմէ վախնան իբրև իրենց մեծէն, և քեզ սիրեն իբրև իրենց բարերար : Մի՛ ամբշնար միշտ աղէկ բաներ սորվելու . մի՛ յայտներ կնոջդ քու ծածուկ բաներդ . վն զի անդադար կըջնայ պատճառ գտնել, որ վրադ ելլէ, և քեզի հրամմէ : Ամէն օր բան ժողովէ քեզի վաղեան համար . զի շատ աղէկէ ունեցած բարիք թշնամուդ ձգել մեռնելէդ ետև, քան թէ ողջութեամբ քարեկամի կարօտ ըլլալ :

Որուն որ հանդիպիս բարևէ պատուով և քաղաքավարութիւն շուրջ պոչը շարժելով երբ կը շողքորթի տըր, պարտական կրնէ որ իրեն հաց տայ : Մի՛ զղջար բարեպաշտ ըլլալու . բամբասօղ մարդը տունդ մի՛ հանդիպցընէր . վն զի դուրս կը հանէ տանդ բանը, և ամէն զուրցածներդ : Անանկ բան չընես որ քեզ անարգանք և տրամուծի բերէ : Մի՛ խոտովիր աշխարհքիս պատահմանը ներուն վրա : Ուրիշին չար խորհուրդ չի տաս . և անօրէն մարդկանց չար վարքին չի հետևիս :

Այս խրատներս անանկ դպան Եննոսին, որ նետի օգի պէս սիրող խոցեցին . մինչև խիղճմտանքին խայթելովը, և Եղջրբոսին

(*) Այս Եղբոսին խրատք աւելի յարճաբնութայ մեր լեզուին սպասարարութեամբ . իբր զի նախանձ բարե արդէն ինքսարարութեանի նախանձին շնասէ . վն զի սիրար յաւելով նախ իրեն շնաս և արարա :

սուր խրատները մտմբասանով շատ չանցաւ մեռաւ :

Գ.Լ. ԻԵ .

Երբէն Իբնէ Ղաթու արժոնոյ :

Երբոս կանչեց բոլոր հաւորները և պատ-
ւիրեց՝ որ չորս հատ արծիւի ձագ բռնեն ի-
րեն բերեն : Առաւ զանոնք զարմանալի կեր-
պով անանկ կրթեց , որ մարդու հաւտաւ
լիք չի գար (*) : Անան զի կը սրտամեն , թէ
թռչուններուն սորվեցուց . որ երբ սլիտի
թռչէին՝ վիզերէն կատեց չուանով մէյմէկ
զամբիւղ ունայիլ մէջը դրաւ սզտի տղաք-
անանկ սորվեցուցեր էր ձագերուն , որ տղա-
քը ուր ուզէն , հոն երթան . վերվար կը
թռչէին տղոցը ուղածին սկսա : Երբոր ձմեռն
անցաւ , դարնան առեկը Եզրբոս ամէն հար-
կաւոր պատրաստուելի տեսաւ ճամբոյ ելաւ .
արծիւներն ալ տղաքներով հետն առաւ և
դիպտոս գնաց : Անանկ զարմանալի բաներ
ըրաւ եզխպտացոց առջին , որ տեսնողին
խելքը կերթար :

(*) Բնանոսի ին պարսիկոսի այս պատմու-
թեանս վրա . զանն ուի դժոնար բան է . բայց էիմա
Եւրոպա կենդանիներուն անանկ իրենքնէ կո-
տան , որ մարդ ինչպարմանայ , մինչև հասարակի-
ւի գար . Բնայի պայս պատմութիւն ալ շատ դժոնար
բան է :

Բայց Կէքզէնարոս թագաւորը երբոս լսեց
Եզրբոսին գալը մէկ բարեկամէն , ըսաց , թէ
զիս կը խաբէս . ես լսեր եմ թէ շատոնց
մեռած է : Միւս օրը պատուիրեց իր պալա-
տի մեծամեծներուն , որ ամենքն ալ ճերմակ
հագնին . ինքը կարմիրներ հագաւ , գլուխն
ալ դրաւ թագ մը անգին քարերով զարդա-
րած , և այսպէս մեծուէ փառքով նստեր էր
աթոռը՝ հրամայ որ Եզրբոսը բերեն . որ ներս
մտածին սկս յանկարծ հարցուց թագաւո-
րը , թէ զիս ի՞նչ բանի կրնաս նմանցընէր , և
քովննէրս ի՞նչ բանի : Պատասխանեց Եզր-
բոս . քեզ կը նմանցընեմ գարնան արևու .
և քովի իշխաններդ հասած ցորենի : Թագա-
ւորը զըւարձանալով այս պատասխանիս
վրա մեծամեծ պարգևներ տըւաւ Եզրբոսին :

Մէկալ օրը թագաւորը հագաւ ճերմակ
լավեր . և իշխաններուն ալ պատուիրեց , որ
կարմիր հագնին . բերել տըւաւ Եզրբոս մէ-
կէն հարցուց : Անը պատասխան տըւաւ
թէ դուն կը ըմանիս արեգական , և իշխան
ներդ՝ ճառագայթին : Յետոյ ըսաւ Կէքզէ-
նարոս , թէ իմ արուեստ առջին լիգերոս թա-
գաւորը բան մը չեմ սեպեր : Եզրբոս ինգաւ
լով պատասխանեց . ով մեծ թագաւոր ասանկ
դիւրին դատաստան մի՛ կորեր լիգերոսին
վրա . թէ գուն քեզ քու Ժողովուրդիդ հետ
բաղդատես , կրնաս արև ըսվիլ : Բայց թէ
օր լիգերոս թագաւորին հետ բաղդատես ,
քու լոյսդ անոր առջին խաւար կը ըլլայ :

Կէքզէնարոս զարմանալով ասոր համար
ձակ պատասխանին վրա , հարցուց թէ բե-
րիր մեզի ճարտարապետներն , որ ուզեցի

աշտարակ շինելու համար : Պատրաստ է ըսաւ Եղբորս . միայն պէտք է որ տեղը ցոյց տաս որ սկըռինք շինել : Ան ատենը թագաւորը քաղաքէն դուրս ելաւ տարաւ մէկ մեծ գաշախ մը մէջ ցըցուց տիւն , որ պատրաստեր էր աշտարակին համար :

Եղբորս հոն տարաւ արծիւները , և չորս տղաքը դրաւ դամբելահներուն մէջ գործիքներն ալ միատեղ . թուռց թռչունները . երբոր այս տղաքը վեր բարձրացան , սկսան միաբերան սլուալ , թէ բերէք մեզի քար ու կիր , և վայտ , որ շինենք աշտարակը :

Նէքդէնաբոս երբոր տեսաւ տղաքներն օդին մէջ կըստուան , արծիւներն անոնց հնազանդ՝ ուր ուղէն տղաքը , հոն կերթան . հարցուց Եղբորսին , թէ որ աշխարհքէն այս թեւաւոր տղաքը բերիր : Պատասխանեց Եղբորս . Լիւգերոս շատ ունի ասանի տղաք . հապա գուն ինչպէս բաղբատեցիր անոր , որ աններուն հաւասար մարդ է :

Յաղթընկցոյ ըսաւ Նէքդէնաբոս . ուստի այլ բան չունիմ ընելու . բայց եթէ մէկ քանի տուակ զուրցեմ . նայինք կրնան շուտով քաղել : Ես մէկ զարմանալի էգ ձի մը ունիմ , որ երբ կըլսէ բարկունին արու ձիերուն ձայնը , հոս կըսկըսի շուտով յղանալ : Թէ որ այս կարդէ դուրս գիսլւածին սլատձառը կարենաս տալ , իմաստով ինչ մեզի կը յայտնես : Ո՛ր մեծ թագաւոր ըսաց Եղբորս . մինչև վաղը ինձի ժամանակ տուր , պատասխան կուտամ հարցմունքիդ : Երբոր տեղը գարձաւ Եղբորս բունեց մէկ կատու մը սըլաւ ծառաներուն , որ բոլոր քաղաքին մէջ

ծեծելով կը սլորտցընէին : Բայց ե գիպտացիք որովհետև ասանի կենդանիները կըստուանէին (*) , տեսան որ կատուն կըծեծեն վրանին թափեցան բազմութիւն քաղցին տուին կատուն ձեռքերնուն որ չի ծեծեն . և դացին թագաւորին յայտնեցին այս սոսկալի մեղքը : Թագաւորը կանչեց Եղբորսն ըսաւ , թէ չկտէիր որ մենք ասործու սկես կըստուենք կատուն . ինչո՞ւ համար այս բանս ըրիր : Պատասխանեց Եղբորս , թէ ես անոր համար ըրի , վրանդի անիրաւու թիւնըրաւ Լիւգերոս թագաւորին . ու այս գիշեր խղճեց անոր սքաղաղ , որուն ձայնովը գիշերւան ժամանակը յայտնի կըլսար . և խիստ արթուն կտրիճ սքաղաղ էր : Կրկնեց թագաւորը . ինչ կըխօսիս Եղբորս , չէն ամբոնար շինած սուտերէդ . ինչպէս կրնայ ըլլալ , որ կատուն մէկ գիշերւան մէջ Եգիպտոսէն Բարիլոն երթայ :

Եղբորս ծիծաղելով ըսաց . եթէ բու ձիերդ Բարիլոնին ձիերուն ձայնը տանելով կը յղանան , այս բանս ինչո՞ւ ըրայ անհարկին : Թագաւորը բանը հասկընալով շատ զարմացաւ Եղբորսին դատումին , և խեղճին վրայ :

(*) Անէն Էրֆոպանի ինչո՞ւնիները հասարակօրէն մեծ պարիս ունէին Եգիպտոսի մէջ . մանասանդ ի՞նչ , ուլիարը , կոպուն , և այլն . անոր համար եգիպտացիք ժծմանս իրապէին . ասանդ մեծ լէին ինչո՞ւր ուրէլ :

Իմաստաբար Եւրոպոսի :

Վրիշմը ժամանակէն ետև թագաւորը բե-
րել արւաւ (*) Արեգ քաղքէն շատ խնա-
տուններ, և վիճաբանօղ գիտուններ, որ
Եզրբոսին հետ հակաճառուև ընեն . ուստի
ամէնքը միատեղ Եզրբոսն ալ հետերնին կե-
րակրի հրամցուց : Երբոր սեղան նստան ,
այն գիտուններուն մէկը գարձաւ Եզրբոսին
ըսաւ , ո՞վ օտարական՝ անձն որ ես կըսալա-
տեմ , զիս խրկեց որ մէկ խնդիր մը զուրցեմ ,
որ քակես : Պատասխանեց Եզրբոս թէ դուն
գէշ կըխօսիս . վասն զի անձն բան գիտէ
և իրմէ ծածուկ բան չի կայ . ուստի մարդէ
բան սորվելու կարօտ չէ , քեզի ինչու պի-
տի խրկէ . այս խօսքով չէ թէ միայն դուն
քեզ կանարգես , այլև անձդ ալ յիմար կը-
նես :

Մէկ ուրիշն ալ ըսաց , թէ մէկ մեծ տաճար
մը կար , մէջը մէկ սիւն մը տասվերկու քա-

(*) Արեգ քաղաք՝ այսինքն արեգախոյն քաղա-
քը յոանաբէն իւսլի հեղիորօղիս . հին արեւը ա-
րեգախոյն պաշտօնը հոն իլըւար , անոր համար այս-
պէս իուրեցաւ : Այս քաղաքը ներսո գետին ու
Արաբիային մէջն է . որուն բնակիչները Բուր
քաղաքին էին և գիտունները՝ որ իւրայեւոյցի
շինեցին քարտանին հրամանովը :

ղաքով . ամէն մէկը երաւուն գերան փէրէկ
ունէր , որ երկու կնիկ կըսպորտէին չորս գին :
Պատասխանեց Եզրբոս , թէ այս ինչ գեղե-
ցիկ խնդիր է , որ մեր տղաքն ալ գիտեն մեկ-
նել : Այս տաճարն աշխարհքս է . սիւնը
սարի է . քաղաքները՝ ամիսներն են . գերան-
ները ամուսն օրերն են . երկու կնիկներն
ալ , որ սիւնին չորս գին կըսպորտէին , գի-
ւեր ցորեկն է , որ փոփոխ կըգառնան :

Միւս օրը Նէքզէնաբոս պատերից , որ
իրեն իշխանները հոն դան . ես շատ կըվախ-
նամ կըսէր , չըլլայ թէ պարտաւորինք տուրք
տալու լիգերոսին Եզրբոսին պատճառաւ :
Խորհուրդ ըրին , մէկը իշխաններէն ըսաց .
թէ պէտք է մէկը ալ պարտաւորինք Եզր-
բոսն , որ մեզի անանկ խնդիր մը առաջար-
կէ , որ ոչ պատճառ ունենայ և ոչ ցուցում :
մինչև մտքերնուս անցած չըլլայ , ու լրած
ալ չըլլանք (*) : Եզրբոս խօսք արւաւ , որ
վաղը հարցմունք կընեմ : Ելլաւ տուն գնաց
մէկ թուղթ մը շինեց . որուն մէջ գրած էր
որ Նէքզէնաբոս խօսք կուտայ թէ հազար
տաղանդ լիգերոսի տալիք եմ (**): Հետև-

(*) Որովհետեւ քարէն էլաւ որ Եւրբոս ալ
իրենց ինքիք հարցունէ , և գիտէին որ անոր ինքի-
քը չէ իրան պիտի հասնէրալ , անանկ ինքիք մը
ուղեցին , որ չէ իրնայ հասնէրալի , և Եւրբոս
նեղին ըլլաւ : Ասով ինչ ինքիք որ ըլլաւ պի-
տի ըսէին . թէ մենք այդ բանը Եւրբոսն , և գի-
տէնք , անպարճաւ բան չէ . ահա այս ճամբով
պիտի յաղկէին Եւրբոսին :

(**) Եւրբոս ալ անանց միտքը հասնէրալով ու

եալ օրը բերաւ թուղթը թագաւորին իշխանները և խորհրդականները ուրիշ բան կարծելով թուղթը չի բացած միաբերան կանչեցին , թէ մենք գիտենք , և շատոնց հասկըցած ենք . այս բանը մեզի նոր չէ : Որովհետև գիտենք կրտսք , ըսաւ Եզրբոս , ես ալ ձեզի մեծապէս շնորհակալ կըլլամ և խոնարհօ՞ւք զիս պարտական կըհամարիմ ձեզի :

Բայց Նեքդէնարոս երբոր կարգաց թուղթը , շատ նեղացաւ սիրտը պարտքին համար որդրած էր . մինչև չի համբերելով կանչեց , թէ ես ի կեերոսին պարտք մը չունիմ . վըկայեցէք ամենիցիդ ես անոր պարտական եմ : Ան ատենը փոխեցին իրենց միտքն ու ըսին թէ մենք ասանկ բան ոչ լսած ենք և ոչ գիտենք : Արկնեց Եզրբոս , թէ ահա այս էր իմ խնդիրս , որ մեկնեցիք :

նանի ինդիբ մը դրաս , որ հորիսս պիտի պարգաւ աորին . վասն զի եմք ըսեն իրաս է , եւ չի ցնենն , պիտի պարգաւաորին . եմք վկայոաք ստաս հանեն թուղթը , դարձեալ ին պարգաւաորին . որովհետեւ իրենց բերնովը վկայեցին , թէ այս բանը չենք լսած : Այս ինքայնեանարկութիւնը երկայրբաւ նու թի ինչի . ինչպէս հին արեմը մանուկ մը ճարգասանի մը գով աշխերպ մասս , եւ շատ բան խոսասցաս , թէ որ անանի սորվի , մինչև իարենայ յաղթել առջի դասասպանին մը որ խօսի : Ամեն բան սորվելէն ետեւ լուսեց վարպետին բան մը ասու . եւ որ դին դարձաս նե վասարելեցաս . վասն զի եմք յաղթելը վարպետին ին վասարելեր . եմք յաղթելէր , նոյնպէս դասին քին ուժովը ին վասարելէր : Ասոր նման է Եզրբոսին աստարկութին աս :

Նեքդէնարոս անանկ զարմացաւ Եզրբոսին այս ըրած բանին վրա , որ չգիտացաւ կանչեց թէ պէտք է խոստովանինք որ երջանիկ է ի կեերոս . որ այսպիսի խմաստուն մարդ ունի իր արուժեղ մեջ . որ է իբր անհատ նուա՞ աղբւր մը գիտութիւն : Այս խօսքէս ետև հանեց տըաւ հազար տաղանդը Եզրբոսին , որ դաշինք ըրեր էին . և մեծ բարեկամական սիրով Բարիլոն խրկեց : Եզրբոս Բարիլոն հասաւ պատմեց ի կեերոս թագաւորին ամեն բանն որ ըրաւ Եզրիպտոս . և ալ լաւ ոսկիներն , որ Նեքդէնարոսէն առեր էր : Ի կեերոս այս ըրած երախտեացը համար մեկ ոսկիէ արձան մը կանգնեւ տըաւ ին պատիւ Եզրբոսին (*) :

(*) Հին արեմը շատ մեծ պտախ էր եմք մեկին անուանը արձան մը կանգնեին . իսկ ոսկիէ արձան կանգնեւ շատ գեերապանց պտախ էր : Միեջոխապէս զբարպետը ամենացոյց արուժեղ ասպապէց , բայց ոսկիէ արձան էի դրին . աստիկմացվի Եզրբոսին մեծ համարոսն որ ասեղ Բարիլոն :

Գ.Լ. Ի.Ի.

Եւր֊Լեոս Գնացի Ի Յոննս, և Ի Դեղոս =

Եզրոս Բաբելոն դառնալէն ետև՝ շատ չանցաւ միտքը դրաւ որ յունաստան երթայ ժուռ գայ թագաւորին հորմանովը . բայց մինչև որ երգուր չբրաւ նորէն ետ դառնալով՝ թագաւորը հրաման չի տրւաւ . ուստի խօսք տրւաւ Եզրոս թէ կը դառնամ մինչև Ի մահ Բաբելոն կրմամբ : Գնաց շատ երևեւիլ բաղաքներ յունաստանին մէջ բալէց, և ամէն տեղ իրեն խնաստուէն փորձերն ըրաւ . յետոյ ուղեց երթալ Գեղոս կղզին (*): Այս քաղաքացիք երբ անոր խօսակցութիւնը կրլսէին, ուրախ կըլլային . սակայն իրենց անշնորհք ըլլալովը մէկ յարգութիւն մը չբրին Եզրոսին :

Իսկ Եզրոս նայելով անոնց տամբողութեւր զուրցեց . սլ դեղոսացիք ես ձեզ փայտի կըտորի մը կընմանցընեմ, որ ծովուն վրա կերթայ կուգայ . որոնք որ հեռուէն կըտեսնեն, կարծեն թէ երևեւի մեծ բան է . բայց

(*) Գեղոս նամ զԵւոս իղզին հին Ժամանակը շափ երևեւի Կեղ եր . որ Ապոլոն լածին Ժնած Կեղն ըլլալով Կոսպոսուն հոն շինած եր շափ Ժոտոսաոր, ամէն աշխարհի հոն կերթար :

Երբոր ցամաքին կուգայ կըմտենայ, կը հասկըցվի ննջ ըլլալը : Ես երբոր ձեր քաղքէն հեռու էի, շատ կըզարմանայի ձեր վըրան, մինչև իմ համարմանս արժանի գրեր էի զձեզ . բայց երբոր հոս եկայ, շուտով հասկըցայ թէ սխալ է եղեր իմ կարծիքս . ուստի ես ալ միտքս փոխեցի . և հիմա ձեզ կըտեսնեմ ամենէն անսխտան մարդիկ :

Գեղոսացիք այս խօսքերս լսելով վախցան որ չըլլայ թէ ամէն գացած քաղաքները պատմէ, ուղեցին զբարտեւրով մեռցընեն : Այս բանը ապահով գըլուխ տանելու համար (*), Ապոլոնին երևելի տաճարէն գողցան մէկ ոսկիէ աման մը, և բերին գաղտուկ պահեցին Եզրոսին բաներուն մէջ . իսկ Եզրոս ամենեկին բան մը չգիտնալով միամիտ ելաւ Գեղոս կղզիէն ֆոբիգա երթալու : Մէկէն դեղոսացիք վրան թափեցան արգիլեցին, ամբաստանութիւն ընելով թէ գուն սրբապըզութիւն ըրիր : Եզրոս զինքն արդարաւցընելով համարձակ կըսէր, թէ այդպիսի բան չեմ ըրած : Անոնք ալ բռնուլ թէ փրկարուեցին բաներուն մէջ գտան ոսկիէ ամանը, որ իրենք զրբեր էին հոն : Ասին ամանը ձեռքերնին մեծ աղաղակով տարին բոլոր ժողովուրդին ցըցուցին : Եզրոս հասկըցաւ

(*) Ապոլոն եր Գիոսի որդին, լած երա ժըլպոսութեան և Բանաստեղծութեւ . որ այնչափ յարգելի եր հելլենոսաց, մինչև ամենից ասոր Կոսմարը կերթային, որ խնար Ժոտոսաոր շինած եր Գեղոս իղզին . քաղաքացիք այս Կոսմարով լըլպար ծէին, և իրենք անպիպան մարդիկ էին :

անոնց անօրէնութիւն և յայտնելով իրեն անմեղութիւնը աղաչեց որ թող տան իրեն երթալ : Իսկ անօրէն ժողովուրդը բանտը դընել տրւաւ զայն , և գատաւորները վճռեցին , որ գատաւարտութիւն մեռնել Եզրբոս իբր օրինադանց : Եզրբոս տեսաւ որ տեղէ մը ճար չի կայ , անանկ վտանգի մէջ ընկեր էր որ ազատուա՞ չունէր այն թշուառութիւն , սկսաւ իր անբաղգութիւնը լալ բանտին մէջ :

Գամաս անուշտով մէկ բարեկամը բանտը դնաց . տեսնելով Եզրբոսին խեղճութիւնը սիրտը ցաւեցաւ , և հարցուց , թէ ինչո՞համար կը վշտանաս կուրաս : Պատասխան տրւաւ Եզրբոս , թէ մէկ կին մը նոր թաղեր էր երկիր դնաց գերեզմանին վրա բոլոր օրը լաց կըսէր . հոն մօտ տեղը երկրագործ մը կաշխատէր , որ տեսնելով ասոր լացը՝ թողուց եղնեղն ու եկաւ ինքն ալ գերեզմանին քով կուրար : Այնը հարցուց , թէ ինչո՞համար կուրաս . անալ ըսաց , թէ ես ալ իմ կինս թաղեցի , եկայ որ լալով սիրտս ստղի : Ինձի ալ ըսաց կնիկը , այս խեղճութիւնը պատահեցաւ : Արկնեց երկրագործը , ուրեմն երբոր երկուքիս պատահածն ալ նոյն է ինչո՞համար մեկզմեկ չենք առներ , որ երկուքիս կսկիծն ալ անցնի , ես ինչ սէր ունէի ընկերոջս վրա , քեզի կը գարձընեմ , դուն ալ անանկ ըրէ՝ կը ըմբոսնայ կերթայ : Երբոր մեկմեկու հաւանուէ տալով ասանկ կըխօսէին , գուլ մը եկաւ եզները գողցաւ . երկրագործը արան որ գարձաւ տեսաւ թէ եզները չի կան . սկսաւ անանկ դառն լալ ,

Handwritten note in Armenian script at the bottom of page 82.

որ չի կրնար ըլլալ : Իսկ կնիկը գերեզմաննոցէն գարձաւ արտը նայեցաւ որ մարդը կուրայ . ո՞չ ըսաւ հինայ ալ կուրաս : Պատասխանեց մարդը , թէ ա՞նչ հիմա ունիմ՝ ճամբրիտ պատճառ լալու :

Ասոր նման է կըսէր Եզրբոս , իմ խեղճութիւն և վիճակս , վասն զի շատ վտանգներէ ազատելէս ետև եկայ հոս ընկայ . հիմա ճար մը չեմ կրնար գտնել , որ մեռնելէս ազատիմ , որով գատաւարտեցին զիս . ա՞նչ այս է սպտճառն որ կուրամ :

Գ. Լ. Ի. Ը .

Մահ Եզրբոսի :

Պէտքոսացիք բազմութիւն եկան բանտը մըտան բռնութիւն քաշեցին գուրս հանեցին Եզրբոսն , որ տանին մէկ բարձր ապարանք լեռան մը վրա հանեն , ու անկէ վար նետեն : Եզրբոս սկսաւ առականեր զուրցէլ այսպէս : Երբոր կենդանիներն իրարու հետ կըխօսէին , մուկը գորսին հետ բարեկամ եղաւ . աղաչեց , որ երթայ հետը կերակուր ուտէ . ուտի առաւ տարաւ մեծատան մը տուն , ուր լեցուն բարիք ըլլալով համբարանօցը փեղեղ , կըսէր թէ ո՞վ բարեկամ գորտ՝ հրամէ : Գորտը լաւ մը կշտանալէն ետև հրամցուց մուկն , որ անոր հարկիլէն երթայ . բայց ճամբան չի յոգնելու համար ուզեց որ ոտքը թելով մը անոր ոտքին կա-

Handwritten note in Armenian script at the bottom of page 83.

պէ . որպէս զև գորտին հետ լողալով անցնի ջրէն երթայ հոն : Ասանկ կապէլէն ետև գորտը ցաթիկեց ջրին մէջ սկսաւ լողալ . իսկ մուկը ջրին մէջ խղճովըցաւ . որ մեռնելու ատենը կրտէր գորտին , թէ դուն եղար իմ մահուանս պատճառը , բայց դուն ալ որ մը պիտի գտնես քեզմէ մեծէն : Այս խօսքս շատ չանցաւ կատարուեցաւ . վի՛ր զի մէկ արծիւ մը տեսաւ որ ջրին երեսը սասկած մուկ մը կայ , վրան ինջաւ խլեց . բայց գորտն ալ անոր հետ կապած ըլլալով միատեղ յափըջ տակեց երկուքն ալ կերաւ :

Այսպէս դուք որ զիս անիրաւութի՛ւ կը մեռցընէք , սասանկ ոտքի տակ առնելով , որ կուգայ որ կը գտնէք , և ձեզմէ իմ վրէժս առնող մը կըլլայ : Բարեկրն և բողբոյ յու նաստան իմ արիւնիս վրէժը ձեզմէ պիտի հանեն : Այսչափ խօսքերը ամենեկին անոնց սիրտը չի չարժեց , որ ողբովն իրեն :

Տեսաւ որ այլ ճար չի կայ , փախաւ Ասոր դոնին (*) տաճարը . բայց բռնութի՛ւ անկէ ալ հանեցին . և կատաղութի՛ւ կը տանէին :

(*) Ամեն ապօրինի և իրօնի մէջ քաճարին պարտաւ ըլլալու համար , հոն քախլուցը կապալէր հին ապօրինին 'ի վեր . ինչպէս Սպարսացիք հայրենեաց մարտիւնը քաճարին լի իրցան հանել , դոռաւ լեցոցին : Ապապայ ապօրին , որ ծառու իշպաշտի , այն ծառուին քախլը քախլուց գերին աղաք իշտեպէ : Բայց Ղեղոսացիք որովհէպէս Խաբուսը սրբապիշտ համարեցան , որ քաճարին անխառնութի՛ւ ըրաւ իշտեին , անոր համար բռնութի՛ւ իրցան դոռաւ հանել :

բարձր լեռան ծայրը : Երթալու ատենը կըսէր Եղբոս . մտիք ըրէք ինձի ո՞վ ժողովուրդ Գեղտի : Մէկ նասպասակ մը արծիւէն փախչելով չկտէր թէ ո՞ր պահով , որ թշնամուն ձեռքը չկնի . գնաց բզէզին ծակը մտաւ , աղաչեց որ իրեն տեղ տայ . բզէզն ալ աղաչեց արծիւին , որ ինայէ խեղճ նասպասակին՝ չի մեռցընէ . երգում ըրաւ Գիտոնի անուանը վրան , որ իր վտըր մարմինն չի նայի , աղաչանքն ընդունի : Իսկ արծիւը անոր խօսքը բանի մը տեղ չի սեպելով թաւովը զարկաւ բզէզին , և յափշտակեց նանպասակը կերաւ :

Բզէզը բարկանալով անոր անարգանացը վրա՝ թաւա ետեւէն գնաց գտաւ արծիւին բունը . մտաւ մէջն ու ծակ մը բացաւ . յետոյ արծիւին հաւկիթները վար թափեց կտորտեց : Արծիւը տաքնալով այս յանգըջ նութեր վրա ուզեց աւելի բարձր տեղ մը շինել իր բունը : Բզէզը հոն ալ ելաւ , և առջինին պէս փնաս արաւ : Արծիւը չկտէր թէ ինչ ընէ , որ այս անձանութ թշնամուն ձեռքէն ազատի , գնաց Գիտոնի (*) ուրովհէտև այս թռչունը անոր նըւերած ըլլալով իրեն պաշտպանուէր տակն է . ուստի դրաւ Գիտոնի գոգը իր հաւկիթները , և անոր յանձնելով աղաչեց , որ հոգ տանի :

(*) Որովհէպէս Գիտոս էր անձնեբոնս Ռաֆուսը , և արծիւն է Ռաւուանեբոնս Ռաֆուսուրը . ուստի հեթանոսները իշտեին , ինչ արծիւը Գիտոնի նըւերած է . անոր համար Գիտոնի առջանին քախլը արծիւն մը իշտեին :

Handwritten signature or note at the bottom of the page.

Բայց բղէղը աղբ առաւ կըտրակներ շինեց, ու թռաւ երկինքը տարաւ Գիտոսն գոգը ձգեց: Գիտո երբոր հոտն առաւ նեղանալով վեր ելաւ, որ վար ձգէ. բայց թռածէ լովը հաւկիթներն ալ վար թափեցան կտոր կտոր եղան:

Իսկ Գիտո հասկըցաւ բղէղէն, թէ այս բանս արծիւէն վրէժ առնելու համար կը ներ. որ ոչ միայն բղէղն ըրաւ անիրաւու թի, այլ և Գիտոսն, որ երգումը չընդունեցաւ երբոր բղէղն ըրաւ Գիտոսն անուանը վրա:

Արծիւն որ դարձաւ եկաւ, Գիտո անարգելով զայն երեսը դարկաւ, թէ ահա բղէղը վռէժինդիր բլբլով քեզ կըտրտմեցընէ. և իրաւունք ունի քեզի այսպէս վռէժինդիր բլբլու: Սակայն Գիտո չի կամեցաւ, որ արծիւին ցեղը կորսուի. համոզեց խօսք հասկըցուց բղէղին որ հետը հաշտուի: Բղէղը չուզեց ամենեւին հաշտուիլ: Ուստի Գիտո խեղճ բանեցընելով փոխեց ժամանակն, որ երբ բղէղը չէ ելած գուրս, անատերը հաւկիթ կածէ արծիւը:

Ո՞վ ժողովուրդ Գեղոսի, մի անարդէք տաճարը, ուր ես ապաւինեցայ. թէ սէտ և անորմեծ ու թիւր նայելով էս ոչինչ եմ, բայց դիտանաք ճշմարտութիւն որ հարկաւ կըստա՜ թէ չարագործներուն անօրէնութիւն: Գեղոսացիք իրենց կատարութիւն ամենեւին ես չի կեցան. այլ միշտ սուսջ կըտանեկն Եզրբոսը, մեւընեւելու տեղն, որ պատրաստեր էին:

Եզրբոս տեսաւ թէ ինչ բան որ խօսեցաւ,

ամենեւին անոնց ականջը չի մտաւ, և կաբող չեղաւ մտքերնին փոխելու, սկսաւ այսպէս խօսիլ: Մտիկ բրէք ո՞վ անօրէն խտտասիրտ ժողովուրդ. մէկ երկրագործ գեղացի մը գեղը ծերացեր էր, և ամենեւին քաղաքը ոտք չէր կոխած. աղաչեց մարդիկներուն, որ զինքը քաղաք տանին տեսնելու համար: Անոնք ալ եշերը սայլին կասեցին, և ծերը վրան դրին, թող արւին, որ քաղաք երթայ մինակ: Բիւ մը անցաւ մէկ սաստիկ փոթորիկ մը ելաւ. որ անանկ օդը մթնեցուց հովով անձրևով, մինչև եշերը ճամբան կորսընցուցին մտքեցան չեյաէին, թէ ո՞ր կերթան. խեղճ ծերը տարին լեռանը ծայրը հանեցին, որ վար սխտի ձգէին. ողբովն զինքն այն մեծ վտանդին մէջ տեսնելով, վայ ափսոս կնձի, կրկանչէր Գիտոսն. արդեօք քու մեծութեդ գէմ ինչ բրած ունէի, որ զես աւսանկ ողորմելի մահուամբ կըմեռցընես. զերաւոր ձիերէ, և կտրիճ ջրիներէ չեմ մեռնիր, հապա անարգ շէրէն ահա կըկորսուվիմ, որ ամեն կենդանիներէն ցած էն:

Ահա իմ վիճակս ալ այս խեղճ ծերուն նման է. որ շատ կըցաւ իմ իմ անբաղգու թէս վրա. վա զի չէ թէ իմաստուն և երեւելի մարդկանց դատապարտեցայ մեռնելու, այլ անախտան անարժան չարագործներէն: Երբոր վար սխտի նետէին զինքը լեռանը վրայէն, այս եղբի առակս ըսաւ: Մեկ մարդ մը ուղեց անիրաւութի ընել իր զաւկին. իսկ զաւակը լալով կրկանչէր, թէ շատ աւելի կուզէի այս անիրաւութիւն քաշել ուրիշ մարդիկներէն, քան թէ քեզմէ, որ իմ

ճնօղս էս : Ահա էս ալ նոյն բանը կրսեմ ձեզի ո՞վ անօրէններ • շատ աւելի կուզէի էյնիւ խորխորապը Սկիզբայի (*) կամ Պարկաւսի, և կամ ապառաժը Ափրիկէին • քան թէ ձեր անօրէն ձեռքովը մեռնիլ : Անիծած ըլլա ձեր հայրենիքը • վկայ կրկան չեմ ասնէրն, որ իմ մահուանս համար վրէժ ինզիր ըլլան ձեզի, և պատուհասեն, որ զիս այսպէս անպարտ կը մեռցնէք :

Իսկ Դեղոսացիք առանց ուշացրնելու ալ պառաժին ծայրէն վարնեաւեցին խեղճ Եզրբոսը մեռաւ : Քիչ ատենէն ետե բոլոր քաղաքը անապատ դարձաւ ժանտամահէն • մինչև գացին հարցուցին պատճառը Պատգամաւորին • (***) որ պատասխան տրւաւ թէ այս պատիժս իրենց անօրէնութենը համար եղաւ, որ ըրին Եզրբոսին • և սէտք է այս յանցանքը ջնջել, պատիժէն ալ ազատիլ •

(*) Բանաստեղծները իբրեւին, թէ Սիփղա երեւծ գաղան մը Սիւրիէայ ծովուն մէջ, որ առաջ յաւերժահարս էր • երբոր միտա առաջանը լըսաց լիւս՝ ջուրը բեղած ըլլաւ լի, քիւլիցոս գաղան եղաւ, որ իր այլանդակ իբրպարանէին սարսափել լով Բարձր Լեռանը սարէն դինք ծովը նեպեց • ահա այս է խորխորապը Սիփղայի : Այսպէս է խորխորապը Պարկաւսին, կամ ապառաժը Ափրիկէին :

(**) Այս պատգամաւորն էր Ապոլոնին Կուր մը կամ Գրմուհին • երբոր գացին խառնին հարցուցին ժանտամահին պատճառը, Կուր մը իրաքին Բերնէն պատասխանս արեաւ, ինչպէս սովորութի էր խառնապետերուն :

որ անոր մահուանը համար կըբաշէին : Իրենց խիղճմտանքն ալ ստիպեց զիրենք, որ մէկ արձան մը կանգնեցին Եզրբոսին համար :

Երբոր Յունաստանի երևելի մարդիկ և մեծամեծ փիլիսոփաները լսեցին այս անօրէնութիւնը որ եղաւ Եզրբոսին • շուտ մը Դեղոս կղզին եկան, քննեցին գտան Եզրբոս մեռցրնողները, և բոլորը չարաչար պատուհասեցին :



Յիշատակս Կից Էրնա
որ աւարտութեան Տեսչա
1604 թ. հ. Կարտ Ը
այստ Կից Ը. 62





Է. Արաղաղ և Վարդարիտ: Ը. Գայլ և Գառն:



Ը. Գորս և Վառկն: Է. Հուն և Սառեք:



Ը. Գայլ և Առունկն: Ը. Արկաղաղը և Օձ:

Ա Ռ Ա Կ Ք

Ե Չ Ո Վ Ի Ո Ս Ի

ԱՔԱՂԱՂ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Չանարգ վաստակ այր անխմատ
Յարգոյ գնէ քան զպերճ խմատ :

Ո՛վ որ Բանի արժէ՛ւ Լինոյի
Գե՛ն ու Լաւ թէ՛ ի լո՛ւնէ :

Է. Արաղաղ մը աղբանոցը փորելով յանկարծ կը գտնէ մարգարիտ մը, մէկ գի կը նետէ ըսելով, թէ որ մարգարտածախը այս բաղդիս հանգիսեր՝ փառք կուտար քոյ, բայց խճառջիս անանկ սղնչէ, որ աւելի երջանիկ կը լայնի եթէ հատմը գարնի դանկի, քան թէ զայս մարգարիտը :

Ասաղաղ ինչի՛ն խորոզը, որ աղբանոցին մէջ խոռոտ փառով միշտ ուսիւնալու Բան ի լո՛ւնի պարտէ, և եթէ գարի՛մը գտնէ՛, ամէն Բանէն աւելի անով ինչ

Ղըւարձանայ . որ օրինակ է ուսմի՛ Տարդիանց , որոնց առջին գիտութիւն յարգ լուսնի , և գիւ գրան Տարդն ու անխելց Տարդը մէկ է . էնէ ան ինչէն շահ յը պէսնէն , հաւար ի մասպոսնի հէպ լէն գոխէր :

Ահա անխմատ բերմունք անբանի ,
Չակինթ 'ի գարւոյ որոշէ չուսնի .
Դու մարդ բանական ընտրեա զբարի ,
Չառարկնու թի նման մարդարաի :
Բարին յանարդէ այնչափ տարեերի ,
Որչափ բանականն յողւոյ անբանի .
Մարդոյ է ընտրել զխմատ գանձ բանին ,
Իսկ արդաղին զեւր անարդ գարին :

ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌԵ

Յանգու թ գաժան սիրտ գաղանին
Ոչինչ արդէ ձայն անմեղին :

Անբա մարդն երբ շար կենէ
Սոսա մոսպ պապճառ շոսա կըգանէ :

Թ . Պայլն ու դառը վտղած ջրէ մը ջուր կըլորմէին . բայց գայլը շատ վերն էր քան զգառը , և տանձառ կըրկնտըւեր որ կեր պով մը յախշտակէ զգառը . ուստի տեսա ծին պէս մէկէն քովը վաղեց , ու սկսաւ մէ զտղրեւ , թէ ինչո՞ւ համար իմ ջուրս պրտո

րեցիր : Պատասխան տըւաւ գառը դողա լով . ևս ինչպէս քու ջուրդ կրնամ պղտո րե՛լ որ խմած տեղէդ շատ վարէն կըխմեմ . հաւաստացիր , մտքես ալ չէ անցած որ քեզն ամենեկն յնաս մը տամ : Արկնեց գայլը , թէ երէկ քու հայրդ տեսայ , որ իր ձայնովը կը յորդորեր չները որ զես հալածեն :

Գառն ալ ըսաց թէ ամիսէն աւելի է , որ զիմ հայրս մորթեց մասծախը : Ուրեմն այն քու մայրդ էր , ըսաւ գաղանը : Պատասխա նեց , թէ իմ մայրս զես ծնած տանը մե ուա : Գայլը ակունները կըճբտելով ըսաց . մեռաւ չի մեռաւ ևս գիտեմ դուն և քու աղքդ ինչպէս կառէք զես . պէտք է որ ևս ալ վրէժինդիր ըլլամ : Չայս ըսելով ցաթ կեց գառին վրա , ու պատուեց կերաւ :

Գայլը վայրենի գառն ըւտուլ շարագործ մարդոս պէս միշտնէրուէ և հալածանաց մէջ է . ու անիրաւութիւն ինչ զնայ յախշտակէ անմեղ գառնէրը . ոսսաբի օրինակ է զբոշ մեծապանց , որոնք սոսա պապճառնէրով իսպէն զբիւլ ան մեղնէրը :

Բարը է այս անգու թ պատառօզ գայլի , Պատառեւ զանմեղն՝ չսեւ ձայնի .
Հզոր չարագործք զարդարն և խոնարհ ,
Խոշտանգեալ ճնչէն նման գաղանի :
Սակայն հատուցումն 'ի գասաստանի ,
Արդարոց չարաց կըւի և պահի .
Մարդ քաղաքական մի գերթ ամէ հին ,
Խաճատեր զընկերն ասեր զբարին :

ԳՈՐԾ ԵՒ ՄՈՒԿԵ

Ը զվերեժ քինու կռուսարկաց
Լուծցեն արագ ձեռք թշնամեաց :

Կոխ սիրող իսող իբրևայ ,
Ինչ որ ընէ պան իբրանայ :

Ի. Պորան ու մուկը հակառակութի կը
նէին . գորտը կըսէր՝ թէ իրաւունք է որ
ջրոտ անդէրը ես ժառանգեմ , և ընդհակա
ռակն՝ մուկն ալ ասը կըկոխէր , թէ ինչի
կըվայլէ ժառանգել , այնչափ որ գորտը
սլիաի ելլէր ժառանգութի , և բան չուզէց
անոր ընել : Բայց վիճարանու թիւը շուտմը
տարցաւ , անանկ որ սլիաի սկըտէին կուել :
Մակայն շատ քաւ կըլլար թէ որ իրենց մէջ
միաբանէին . վստի երբոր տարցած կըծեծ
կըւէին , ու ամենեւին թշնամին չէին մտա
ծէր . ահա ուրուրը քայտաւ հեռուէն զի
տեղով յանկարծ վրա հասաւ , բռնեց կուօղ
ները երկուսն ալ յափշտակեց :

Օրինակ է իտասարց ճարդանց . որ հախառա
կուիք ընելով գիբէնս իբրձաջընէն , և անո՞վ ու
րիւք ի՞նչ ահի . Ինչպէս որ մէկ Դաբառուրի մէ դրոտան
վրա գրած էր , Եւ ճարդ ճարդու հէպ միաբա
նուիք լընելուս համար՝ դարն ոս իբրը հոս միա
բանէրան :

Այսպէս և փորրիկ իշխանաց գիսի ,
Երբ կռուին վիճէն ի վերայ գեանի .
Բայց հարսագոյնն որ մերձ դասնի ,
Յափշտակէ զայն , կռուն եղերի :
Այս արդար օրէնք է դաստատանի ,
Երկրքին կռուին երրորդըն շահի .
Որչափ դատասխազք ի սայքար մատչին ,
Այնչափ դատաւորք փաստարանք հրձուին :

ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ՈՉԽԱԲ

Որ որ ընկեր լինի չարին ,
Փոյթ ուսանի զգործըս նորին :

Ո՞վ որ ընկեր ւորին իւլայ ,
Շոտով աչկերս իրեն իւլայ :

Ի. Երբնին ընկեր ըլլալով գայլին կըրա
հանջէ ոչխարէն , թէ ինծի չափ մը գարի
տալիք էս , որ փոխ արւել քեզի՞ ա՛նոր . խն
ոչխարը գայլին աւրին վախնալուն չուրա
ցաւ . սարտըս է ըսաց կուտամ , թէպէտ
անկէ բան մը չէր առած . և ժամանակն ու
ղեց հատուցանելու : Ժամանակն որ եկաւ՝
եղնիկը կերթար անսակաս ոչխարէն կու
զէր գարին , որ ինչպէս խօսք արւաւ լճարէ
սարտըր : Բայց ոչխարը երբոր տեսաւ զայն
մինակ , սկսաւ ծաղը ընելով ըսել . Էս չեմ
սարտական խոտամուկըս պահելու . որով
հեռու նեղը մնալուս , և գայլին վախուսն

խօսք տըւի, որ քեզ ընկեր էր եղեր . գնա
բանդ քեզի պարաք չունիմ :

Եւնիին է կէշիկ, օրինալ՝ լար օրինալ առն
շին . այս խրատով պէտք է անդգոտներէն հե-
ռու տախտիւ . վասն զի աւելի դիտին է Բարի
ճարտը լար օրինալով գեւ ըլլայ, քան թէ գեւ
ճարտը Բարի օրինալով լաւ ըլլայ :

Ահա անիրաւ պահանջմունք եղին,
Որ զրկէ զոչխարն ահա գաղանկն .
Այսպէս անիրաւք ցատմամբ իշխանաց
Կողոպտեն զարդարն զրկեն սնանկին :
Արդ մի՛ նմանիր մի՛ անիրաւին,
Մի՛ ընկերանար ակնառու չարին .
Բարիք 'ի չարաց 'ի չար փոխարկին,
Եւ բարք անմեղաց փոյթ ապականին :

ԸՈՒՆ ԵՒ ՍՏՈՒԵՐ

Արդար պատիժ է ազահին
Անյագ վազել զճեա ոչնչին :

Ագահն որւտի շաքիս ցանխայ,
Այն լաթ աղտաք խեղճ ին փայ :

է . Շուն մը լողալով գետէն կանցնէր՝ կը-
տոր մը միս բերանը . ջրէն մէջ կտտանէ
մտին շուքը կարծէ թէ ուրիշ որս է . շուտ

մը կըճգէ բերնին միտն ու կըլսողէ շքին եւ
տեհն, որ իրեն մէկ պատուական կերակուր
մը կերեւնար . բայց ինչպէս յուսահատեցաւ,
էրբոր տեսաւ թէ իր ազահու թիւր փուճ է-
լաւ : Այն ինչ կրկանէր ցաւելով իր ձգած
մտին վրա . ես չգիտցայ պահէլ զայն որ ու-
նէի, ահա ունեցածս ալ կորսընցուցի :

Շունը գաստարին ինքանի ըլլալով շտապով ին
տոտիտի, որ օրինալ է շահաւէր ճարտու . որ վաւ
գասիտի սիրով մէկ Բանը ինչգէ մէկալին է պեկն ին-
վառէ . եւ անով ինչոքի է զածն ալ ինչորս ընդընէ :
Չարը ուրիշ Բիտա ինչիտոտային, ինչ մէկ է մեծա-
քան . պատասխանեց թէ այն՝ որ Բանի մէկ է
ցանխար :

Քանի՞ շահատէրք նման են սմին,
Թողուն զբաւականն յանչափս ձկափն .
Կալ զոր ինչ ունին, շատ է քուժ սնձին,
Մի՛ իբրև զանբան ցանկար ստուերին :
Ախա է մեղեկան այս ախտ ազահին,
Յոչնչ շատանալ, ոչ հանդէլ սրտին .
Յանկայ հանապաղ նորանոր օրսին,
Ձգէ զոր ունի, մաշի առ վափն :

ԱՌՒՒԾ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՔ

Մի յաճախեր առ պետ իշխան,
Յաչա նորա լինիս խոսան :

Թիչ քարեմին քով շաք էրևաս,
Անարգ և ցած առջին իշխան :

Ի. Առիւծն ու ոչխարը, և այլ կենդանիներ
միաբան կերթան որս ընելու . առիւծն եր-
գում կընէ, թէ դառնալու ատեննիս ամեն-
նուդ հաւասար կըբաժնեմ ով որ ինչ բըռ-
նէ : Նայիս որ ոչխարին որոգայթին մէջ
ընկաւ եղնիկ մը, վաղեց ոչխարը շուտով
խմացուց առիւծին, որ մէկէն հասաւ բըռ-
նեց եղնիկը չորս բաժին ըրաւ ընկերներուն
առջին : Առջև բաժինն ըսաց ինձի կիյնի,
վասն զի ես առիւծ կըվոզվիմ . երկրորդ բա-
ժինն ալ ինձի կըվայլէ, վասն զի ամենէն
քաջասիրտ ես եմ . երրորդ բաժինն ալ
պէտք է որ ես առնեմ, որովհետև ամենէն
զորաւոր եմ . իսկ չորրորդ բաժինին համար
ով որ ձեզմէ ինձի հետ հակառակութիւն
կընէ, մեկէն կըխոզում : Եւ այսպէս առիւ-
ծը բոլոր եղնիկը յախշտակեց, ու մէկը ըն-
կերներէն չի համարձակեցաւ արտունջ մը
ընելու :

Շաք մարդիկ երեսպազարսի ընելով ճիւղմեծ-
նէրուն երեսէն իջնան, որ օգոստոս մը պէսնէն .
Բայց անոնց մեջն որ բանէրնին լիննայ' անիլ է .
որն երեսնին ալ չեն նայիր : Գիտի՞նէս գիւլիս-
թան իջէր, ի՞նչ իշխանները իրախի նման էն . ու
շաք պէտք է մտնես, և ո՛ւր հետանալ :

Իշխանը մեծատունը նման առիւծին,
Ինքեանց գրաւէն զլահ օտարին,
Իսկ ուամիկը նոցուն ընկերել կամին,
Կարծեն թէ ինքեանց ելանէ բաժին :
Մի լինիր ընկեր հզորագունին,
Մի շողբորթեր զարար նորին .
Զի իբրև գործի լինիս 'ի ձեռին,
Եւ յաւարտ գործոյն մնաս անբաժին :

ԳԱՅԼ ԵՒ ԿՈՒՈՒՆԿՆ

Մի նպաստեր գործոց չարին,
Զի մի չարիք 'ի քեզ հասցին :

Ինչ որ ընես ապերախսին,
Բան չէրեւար իր ծախսին :

Է. Գայլը երբեմն ոչխար մը կուտէ անանկ
որկրամուտ թէ, որ մէկ ուկոր մը որկորին
պողպէն մէջ կըմնայ . շատ վանք ըրաւ որ
օգնութի մը դտնէ հանէ, չի կըցաւ . ուս
սի որչափ որ աղաչեց ուրիշ կենդանիներուն
փութ՝ էլաւ . վասն զի սամկը կըթողուին
անանկ՝ որ կանչէ, և մէկը ցաւակից չեղաւ

իրեն ցաւին . օխ եղաւ կըսէին , թող տան
 ջրով իր անյագու թէր : Միայն կռուակը ա-
 նոր անոյշ խօսքերուն խաբւելով ուղեց օգ-
 նու թի ընել . և իր երկան կտուռեցը խօթեց
 գայլին բերանն , ու որկորին մէջէն քաշեց
 հանեց ոսկորը , որ կըխողէր զգայլը : Յե-
 ոոյ կռուակը հատուցում ուղեց այս մեծ
 բարերարութեւս , որ գայլը իրեն խոտացեր
 էր հատուցանելու : Այս բանիս պատաս-
 խան արւաւ գայլը խնդալով . բարեկամ
 դուն չես մտածեր ինձի հատուցում ընելու ,
 որովհետև կեանքդ ինձի պարտական ես .
 երբոր կտուռեցրդ իմ բերանս էր՝ կրնայի վե-
 զըդ փրցընել : Գնա՛ անդերաստ , շատ երա-
 րանելի ես , որ իմ բերնէս դուրս հանեցիր
 կտուռեցրդ :

Առաիս ի ընդհարաբէ անգամ ճարդէն հեռու ի է-
 նաւ , և շարունակ օգնուով լընել . վէ դի ինչ
 որ ընէս աչիս լեբնետար . ու վերջը ընդհարաբ
 ըլլաւ . որեւէ բեւեմ ընդհարաբ ինչ ինչ :

Տեսեր նողակալի գործ դասերաստին ,
 որ չարիս խորհի իւր բարերարին .
 Զի փոխան բարեաց՝ որ պարտ է նմին ,
 Անտի պահանջէ զգարձ փոխարինին :
 Անմտութի է նպատակ չարին ,
 Կամ յապերաստէն յուսալ զբարին .
 Շատ է անխնայ մնալ կռնկան ,
 Յորժամ նպաստեաց ապիրատ գայլին :

ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ՕՁ

Բարերարին խորհիլ ըզար ,
 է գառն օձի բարբ չարացար :

Ուլար իոնէ բարբարին ,
 Վնաս ինէ իր ւար տնին :

Երկրագործ մը կըգտնէ ձիւնին մէջ
 պարած օձ մը իւր կիսամետ , կըխշայ վրան
 ու կառնէ կրտանի իր խուցը , կրակ վառէ
 կըտոքընէ օձը , և այնչափ կըխնամէ , որ
 քիչ քիչ օձը հոգի կառնէ , և իւր բնական
 ուժը կըստանայ : Բայց առջի բանը այս
 կըլլայ , որ իր բարերարին դէմ կեղէ , և
 կըցածիէ որ խայթէ : Զարմանալով ասոր
 ապերաստութեւր վրա կըսէ երկրագործը .
 ո՛վ ապերաստ , այս է երախտիք ճանչնալդ ,
 որ քեզի ըրի . ես քու կեանքդ քեզի տըրի .
 դուն կուղեւ իմն առնուլ չարագործ : Զայս
 ըսաց , և զարկաւ փայտով մեռցուց :

Որւո՞ք աշխուհի ընէս օջիս՝ որեւն որ գայ ի
 խայնէ իր բարբարը . ասանչ ալ ապերաստս ճար-
 դուն ինչ որ ընէս , շոք մը ի ընտանայ , և շար
 հաստուցում ընելու ի ընտանայ :

Այս է դժնդակ բերմունք ժանտ օձի ,
 Կեայ ի վնասէ երաստաւորի .

Չածէ զմտաւ գործս հիանալի ,
 Բառնալ 'ի կենաց զնա նկրտի :
 Արդար հատուցումն է սպերախօին ,
 Զրկիլ 'ի կենաց վատանալ յանձին :
 Որ որ չկամի վայելէլ բարին ,
 Արդ առաջիկայ հանդիպիլ չարին :

ԽՈԶ ԵՒ ԻՇ

Քաջ յաղթանակ է վեհանձին ,
 Մերժեւ խոտեւ զբան վատին :

Մեծամեծաց վայելն այն է ,
 Որ ցած մարտէն վեժ լառնէ :

Թ. () րոն էչն արհամարհելով ծաղը կրնէ զխողը . իակ խողը անանկ կըբարկանայ , որ մեկէն պիտի սպառուհասէր զայն . բայց եր բարկուելը բռնեց , ու խոժոռ աչքով ըսաւ . չարագործ ' ինձի դժւար չէ սորվեցընէլ քեւ զի քու անխեղքութիւնդ , բայց հաճոյ բան չէ , որ ես մեկ ծոյլ անշահ անասունի մը հետ կուտիմ . վասն զի աշխատանքս չաժէր :

Մեծ խոհէմունքն է պարասխանն լի քաւ ցած մարդոս խօսքին ու պարծելւ . վասն զի արնախառնութիւնն լի վայելք , որ ինչի անանիին հետ : Մոլորապ շիւղիտիանն լեց որ մեկէ երեւ գեւ լուսէր խնդի . ծեւ , միայն այսալ ըսաց , ինչ որ լինէր օրհնէլ է սորված , անոր համար խնդի :

Չէ վեհանձնութի չար առնել վատին ,
 Եւ սպառասխանել անխմատ բանին .
 Առաքինեաց է չսեւ ձայնին ,
 Եւ զբէժառու լինել տկարին :
 Քանի՞ անխորհուրդ բան աւանակին ,
 Թողեալ զվեր հեղգ անձն անգոսնէ խողին .
 Յիմար է այդ որ ընդ հզօրին ,
 Եւ ընդ վեհքան զինքն 'ի սպաքար մատչին :

ԸՆՏԱՆԻ ՄՈՒԿԵ ԵՒ ԴԱՇՏԱՅԻՆ ՄՈՒԿԵ

Խորտկաճաչին կայ 'ի սեղան ,
 Խառն ընդ խորտիկ երկիւղ մահուան :

Անլախ ուսելն է չար համով ,
 Քան մեծ հարիւրէն արժ արդով :

Ժ. Այրքեմն քաղաքացի մուկն ու գեղացի մուկը՝ իրարու հարկիք կրնեն . գեղացին կրակըսի իր հարկիքը դուրսն ընել հեռու տեղ մը . և ծակէն դուրս կըհանէ իր սպառւած կան կերակուրները . քիչ մը բակայ , կը տոր մը պանիր , և քիչ մը խողի եղ . վն զի աղքատ ըլլալով որ ձեռքէն եկաւ՝ այնչափ ըրաւ ծառայելու համար իր բարեկամին . որ աւելի գոհ եղաւ անոր ըսաւ մեծարանքին վրա , բան թէ անհամ սպաղ կերակուրներուն . ուստի քաղաքացի մուկը զւարճանալով միայն ակօսյին ծայրովը կը

Գպչէր կերակուրներուն , և չէր կրնար ուտել : Ինչ իցէ՝ և կերակուրը ըննցաւ . անաչ հրաւիրեց զգեղացի մուկն , որ մեկաւ օրը երթայ իրեն տունը կերակուր ուտելու . և պարծեցաւ , թէ շատ փափուկ կերակուրներ անոր համար ըրեր է . քաղցին մէջ . ուստի գեղացին քաղաք դնաց անոր հարկիքը . և մէկ գեղեցիկ սրահէ մը մէջ տեսաւ սլասրաստած՝ սլաստառի վրա լեցուն սլաստաւիան մսեղէն կերակուրներ . բայց հաղիւ թէ սկսաւ ուտել յանկարծ մէկ ծառայ մը բացաւ սաստիկ դուռը այն տեղին , ուր որ անոնք էին , և վերիվար ըրաւ ուրախութիւն այս երկու բարեկամներուն . որ բոլորովին վախցած փախան մէկը ասդին մէկաշն անգին : Ծառան դնաց անկէ . քաղաքացի մուկը իր ընկերը կերակրի կանչեց , որ կիսամեռ կը դուրսը վախուն . և հարցուց անոր գեղացին , թէ շատ անգամ քեզի կը պատահի՞ր ասանկ վախեր : Անալ սլաստախան օրուաւ թէ ամէն անգամ կը հանդիպի , վն զի առանց նեղութե ուրախութե չըլար : Գեղացի մուկը ետ դարձաւ ըսաւ . քու կիներդ ինչ որ ըլլան , հանգիստ վայելում չունին , և անոր համար նորէն զիս փորձուէ մէջ չէն կրնար ձգել : Մնաս բարուկ ես յառաջ նախանձեցայ քու հարուստ կերակրիդ . բայց գիտնաս որ հիմա շատ մեծ կը համարիմ իմ աղքատութիւն , քան թէ քու բոլոր մեծութիւնդ :



Ժն. Արծիւ և Ագռաւ: Ժբ. Աղուէս և Ագռաւ:



Ժգ. Աղուէս և Արծիւ: Ժդ. Առիւծ և Մուկն:



Ժե. Գորտը Սըռ Ննորեն: Ժզ. Աղաւնիք և Ուրուր:

Օրինակ է հարուստ և միայն ճարտիւնը. Քէլ
 աղէն թշուաթի ունի հանգստութի լուսի, Քէլա
 ւը հանգստութի ունի թշուաթի լուսի. Բայց ա
 սոր լիճալը թէլակէն լապ լաւ է. որովէնքա ճաւ
 դոսս սրբաբ թագոսի է ճարտիւն: Երբոր հան
 գիսս իլըւայ առանց սրբաբողի, սնիկ աւելի
 թշուաթի լըւար:

Ձի՛նչ օգնու գործեայ մեծ ութի ճաշին,
 Երբ երկիւղ կասկած նմա լծակցին.
 Եւ քանի՛ բերկրանք աղքատ կերակրին,
 Երբ անհօգ զուարթ ուտեն ՚ի գաշախն:
 Մի՛ ցանկար ընչից մի՛ խորակաճաշին,
 Եւ մի՛ երաներ զբաղդ ընչեղին.
 Ձի ապշնայ և միշտ յամէն վայրկենի,
 Ուտեն և մաշեն զսիրտ և հոգի:

ԱՐԾԻՒ ԵՒ ԱԳՌԱՒ

Գիւրահաւան միտք զաղկապիռն,
 Յամէն հողմոց կայ երբուն:

Անիւս ճարտի՛ գոգոխան,
 Աղէն հովէն իբրեան իսգան:

Ժն. Արծիւն իր ճանկին մէջ մէկ ոտարէ
 սրբաբեայ մը բունէր կրտսմէր որ կեղևը կոտ
 րէ, մէջի միւս ուտէ. բայց ճար չեղաւ կոտ
 րելու. զայն տեսնելով ագռաւ մը կրմարիբ
 որ ձեռքէն աւնեւ անոր որսը. ուստի ըսաց

խորամանկութիւն: Ահա շատ աշխատած կը տեսնեմ զքեզ. թաւր բարձրացիր երկինքը որչափ որ կրնաս, և վերէն ձգէ վար ոստրէն այս քարերուն վրա. որչափ ամուր ըլլայ՝ կըկտորէ կեղևը: Արծիւը մէկ զարմանալի դիւրութիւն մը գտնելով հետևեցաւ ագռաւին խորհուրդին, ու ըրաւ: Բայց խորհուրդ տրւողը միայն իր շահին համար կրէր զայն. վասն զի ոտորէն վար ընկածին պէս կտորեցաւ և ագռաւը մէջի միսը հանեց կերաւ, ու խնդալով անոր դիւրահաւանութեւր վրա փախաւ:

Ագռաւը խորամանկ ճարտու օրինակ է, որ գիշին իր օգոստը ինչայն. ոստրէ զգոյշ է ննաւուն անանկ խաբէբայէն, և խօսքին հասարակու լէ. ինչ որ սաղածն ընեւէն է քեւ ծաղր ինչէ: Գիտ֊ գինէս ինչխոտ֊ային հարցոս֊ին, Բէ որ գաղանը զար զնաստ֊ար է. պատասխան արեւաւ, Բէ զայրէնինէրէն օջը. Իսկ ըն֊ասնինէրէն խաբէբայ ճարտը:

Երբ խորամանկ որքեզ խորհրդակցել,
 Ե՛ր կարծեր թէ նա սակս քո խորհի.
 Զամենայն օգուտ յինքեան վերբերեալ,
 Կերակրի նովաւ ծաղրէ զինի:
 Արդ մի՛ հեշտալուր լինիր խարդախին,
 Որ մթին դունով ծածկէ զնենդ սրտին.
 Որչափ շողովէ ՚ի սկզբան իրին,
 Այնչափ զընանաս ծաղրիս զերթարծուն:

ԱՂՈՒԻՍ ԵՒ ԱԳՌԱՒ

Ունայնատէրն բանիւ ունայն,
 Խօսրի ծաղրի միշտ է ունայն:

Փառասէր ճարտն էրբոր գովէի,
 Ըռաքով իտապայ ամէն խօսքի:

ԺԲ. Ագռաւը բերանն ունէր կտոր մը պատնիր. աղուէտը հօտն որ առաւ վազէց ագռաւին առջին և ըսաց զարմանալով. Ի՞նչ բան է որ կըտեսնեմ. ես լսեր էի թէ քու փետուրներդ սև են. բէ՛ տը անձ, այս ի՞նչ պէս ճերմակ են, որ կարապ Բօյ թռչուներ քեզմէ ճերմակ են, որ կարապ Բօյ թռչուներ պարոն ագռաւ ինձի ներք որ քիչմը վրադ նայիմ ուղածիս պէս. ճշմարիտ կըտեմ, որ դուն ինձի անանկ աղւոր կերևնաս, որ լեմ գիտեր ի՞նչպէս զմայիմ քու վրադ: Կորէն կրէր աւելի անոյշ խօսքերով. ես հաւաներ էմ թէ միայն գեղեցկութիւնը չէ քու յատուկ կատարելութիւնդ. այլ բնութիւն որ կամեցաւ զքեզ ուրիշ թռչուններէն աւելի կատարեալ ընել, առանց կարծեաց քեզն տրւաւ հրեշտակային ձայն մը. երդում կը նեմ, որ այնպէս գեղեցիկ երգօղ չի կայ մեր անտառներուն մէջ, ինչպէս դուն և սոխաւ կը դիւլախիւր: Այս խօսքերովս բողբոլին զըւարձացաւ ագռաւը, և ուղէց իմացնել, թէ աղուէսին ըսածը սուտ չէր, բացաւ

բերանն որ երգէ , բանալովը ձգեց բերնէն
պանիրը : Իսկ աղուէսը յափշտակեց զայն ,
ու շուտմը երթալու հրամանն ուղեց ագուա-
ւէն , և ծաղը ընեղով ըստու . շատ համառի
պանիրիդ անուշուժեանէն , քան թէ ձայնիդ
գեղեցկուժէն :

Ասան օրինակ է ունայնասիրո-
ւնէ , որ անն է
իւրաքանչեւ մարտաս միտն , որ ստաք գովասան-
տով խաբւի իւր հպարտանայ , մինչև ամենք շրան
իւր խնդան :

Ահա կուրու թի ունայնասիրի ,
' Ի պատիր բանից այլ յայլմէ լինի .
Որով յիմարեալ ձգէ զոր ունի ,
Սին սլաճուճանսօք հրճուի զոր չունի :
Միտք փառասիրաց հեշտու թի պատրի ,
Մինչ չասել զանձնէ զինչ եմ զինչ էի .
Կարծէ թէ բանիւ բնու թի փոփոխի ,
Անդէն յուր յատկէ փոյլ թ խայտառակի :

ԱՂՈՒԻՅՍ ԵՒ ԱՐԾԻԻ

Որ որ առնէ բան անօրէն ,
Փոյթ գտանէ յերկնաւորէն :

Ո՛վ անօրէն բան որ ընէ ,
Երկնասօրէն չուր իւր փոյնէ :

ժգ . Արծիւն իր բունը շիներ էր կաղնի մե-
ռէ ծառին վրա . ծառին տակն ալ աղուէս
մը իր ձագերը կընայեր . այս երկուքը իրա-
րու հետ սիրական կերևնային : Օրմը աղուէ-
սը գնաց կերակուր գտնելու . արծիւն ին-
չու յանկարծ յափշտակեց աղուէսին ձա-
գերն ու տարաւ բունը իր ձագերուն կեր-
ցուց : Երբոր աղուէսը գարձաւ բունը ; և
հասկընալով գրացինին ըրած անօրէնութիւնը՝
շատ սաստիկ բարկացաւ . բայց որովհետև
յոյս չունէր համնելու իր թշնամուն , որ
կարենայ վրէժխնդիր ըլլալ , ինչ որ կըցաւ
զայն ըրաւ . Իբր զի՛ իր բուրը վրէժխնդրու-
թէ հոգը Այլ թողուց . իսկ Աճ՝ շատ չանցաւ
անոր չարագործութիւնը սպառեց . վասն զի
քանի մը օրէն ետև արծիւը կըդիտէր , որ
երկրագործները զո՛հ զարգան կընէին մեկ
այժմը իրենց կուռքին սեղանին վրա . վազեց
էկաւ կտոր մը միս յափշտակեց . որուն վրա
մեկ քանի կրակ փակած էին , և անանկ տա-
րաւ իր բունը : Եւ որովհետև բունը շինած

էր յարդով սանահով . և ուրիշ գիւրալաւ
բաներով , մէկէն բռնկեցաւ . և արծիւին
ձագերը վար թափեցան : Անտոնը աղուէսն ,
որ կըսպասէր ծառին տակը՝ ընկաւ ձագե-
րուն վրա . և ինչպէս որ արծիւն իրեն ըրաւ ,
ինքն ալ անոր անանկ ըրաւ , մէկիկ մէկիկ
զամմէնը կերաւ :

Առտէսն է թիւրի , և արծիւն է խարզալ
օրինակ աներաւ ճարդու . որ Թոքը իւրն է Բէ Ե
դարէն լար ընելը զէն լոսնի . Բայց Աժ արդար
դարբելով ուրիշին ինչ որ ընէ , զայն իւր գործն ,
Բէ Բարբ և Բէ լար :

Տեսէր պատուհաս նենգամբտ արծուին ,
Որ ոչ խնայէ իւր մերձաւորին ,
Չածէ զմտաւ վճիռ տերունին ,
Թէ որով չափես չափի քեզ նովին :
Արդ մի ոտնակոխ լինիր տկարին ,
Թէ և ՚ի բարձունս ճախրես յեթերին .
Քանզի վրէժինդ լինի քեզ երկին ,
Հուրք հատուցանէ պատուհաս կրկին :

ԾԵՐ ԱՌԻԻԾ

Ծանր է և դառն հզոր պետաց ,
Անկեալ խոտիլ ՚ի վատթարաց :

Շաք դժուար է մեծամեծաց ,
Երբ նանարգին ցանարգ ճարդանց :

ԺԻ . **Ա**ռիւծը ծերու թի խոփելով սյրի ճա-
ղարայի մէջ ընկած կըտանջուէր . անանկ որ
հոգին բերանն եկեր էր . իսկ անտուճները
որովհետև այն սասիճանին մէջ չէին վախ-
նար անկէ , ամէն կողմէն վազեցին եկան .
որ սիրաը ծակելով նախատեն զայն . ուստի
էշն ալ եկաւ , և խրոխտալով կից շէճքե
նեակց , որ զարնէ անոր : Ան ատենը ս՛հ ը-
րաւ առիւծն ու դարձաւ գայլին և խողին
ըսաւ . ձեր ամէն նախատիկը որչափ կ՛ծու-
ըլան համբերու թի կըբարձմ . բայց էշն ալ
կը համարձակի զնս նախատել՝ ա՛հ ահա ա-
սոր չեմ կրնար գիմանալ :

Ծեր առիւծը՝ օրինակ է մեծուրէն ընկած և
ծերացած ճարդու , որ իր ծառաներէն և ըստ-
նէրէն նախարկին իւրն է ծերուրէն պարձառու .
Բայց ան ուրիշը պէտք է աւելի պարիւ ընել և
օրհնենան առնել , ինչ Բէ նախարկելով ծաղբ
ընել :

Այս է ասարացոյց հօր իշխանին ,
 Երբ թափի յուժոյ է'ի վառաց նախկին .
 Ոչ դք ակնածէ յերեսաց վէհին ,
 Բնաւ կենդանիք նախաստւղ բերին :
 Յորչափ դրուծի ունիս 'ի ձեռին ,
 Մի թշնամանօղ լինիր օտարին ,
 Զի գայ ժամանակ տեղի տաւ բարդին ,
 Քեզ ամենեքեան նախաստիչ լինին :

ԻՇ ԵՒ ՓՈՒԲՐԻԿ ՇՈՒՆ

Իւրաքանչիւր յտուուկ բնուծին ,
 Են պատշաճեալ իրք զանազան :

Անն մարդոս մէյ մէյ բան էս ,
 Որ սիբեւի անու ըւսայ :

ԺԵ . (4) արոն մը երբեմն իր պղտի շուներ սիւրբերով հետը կըխաղար իշուռն առջին . էջը զայն տեսնելով նախանձեցաւ անոր երջանկուծիքը վրայ , և ինքիբն ըսաց . Ի՞նչ կընէ այս շուռն , որ մեր տիրոջը այսչափ սիրելուն պրժանի եղած է . բայց քծնելով երբեմն թաթիկներն անոր կուտայ . հէ՛ թէ որ ասով սիրելի եղած է , էս ալ կընեմ ու քան զայն պղտի անասունը շուտ սիրելի կընամ ըլլալ : Զայս ըսելով էլաւ ետքի երկու ոտքին վրա կեցաւ , և տիրոջն առջին կոշուածք անոր պէս ըրաւ : Իսկ տէրը շատ զարմանալով մերժեց անոր կոշտ սէրը , և կան-

չեց ճառաներուն , որ վաղեցին եկան աղէկ փայտ մը քաշելով հատուցում ըրին քաղաքավարուծիքը աւանակին :

Աճ մմնն մարդոս մէյ մէյ բնուի և լիճամ պըւեր է իբենց յարմար . Թէ որ մէկին լիճամը վերնաբ մէկաւին էրնար , այն մարդն աղէկ լիբ ըւար . ապա ամէնին ալ պէտք է իբենց ունեցածին լրա գոհ ըլլան , և իրարու լի նախանշին , լի նէ իշուսն ըրովը կը ըւսայ լին :

Մի ցանկար փոխել վիճակ բնածին
 Գործեալ 'ի բնէ անստեղծ մտալին .
 Քանզի և բնուծի անցնիւր էակաց
 Ետ զանազան գործս իւր բանեց յատկին :
 Իսկ քեզ որ տէրը էս անասնոց սեռին ,
 Ես 'ի կատարել վիճակ քո նախկին .
 Զի ոչ 'ի բնուծի բնուծի փոխարկի ,
 Ոչ յատկուծի շան յէշ այլափոխի :

ԱՌՒԻԾԻ ԵՒ ՄՈՒԿԵ

Որչափ փոքրիկ առնես բարի,
Գացես յետոյ զայն ստորակն ։

Եթէ պատի Բարիք յ' ընես,
Շարաս յետոյ զայն ի զգասես ։

ԺԳ. Երբեմն առիւծը պատկեր կը քնանար-
մուկ մը մտակցաւ ըօրն ու հարկուր անգամ
բողբէն անցաւ դարձաւ . յետոյ համար-
ձակեցաւ մինչև ցածիկէլ գլխուն վայէն ։
Առիւծը արթնացաւ բռնեց մուկը . քիչ մնաց
սխտի տրորէր . բայց այս բանս անարժան
սեպէրով իր բարկութիւնը, թողուց որ եր-
թայ . իսկ մուկին որ անոր սարտական էր
իր կեանքը, շատ չանցաւ միջոց մը դտաւ
փոխարէնն ըրաւ իրեն . վասն զի քանիմը օրէն
ետև առիւծն ընկաւ որտորդներուն ցանցը
դուրսիւր . և անոր մտընչալէն սօսալու ձայ-
նէն բոլոր անտառը թնդաց . մուկը լսածին
պէս այս ձայնս վաղէց եկաւ սկսաւ կրծել
ցանցին օղակները, որով փաթթըձած էր
իր բարեբարը . և այսպէս գիւրին մը աղա-
տեց զառիւծը ։

Որչափ մեծ յարգ ըլլաս, ջանի որ ամենուս հէպ
անոյ շարժիս ու պատիւիս մեծիս աղէկութիւնը

նէս . լսան զի օր ի ըլլաս որ պատի աղէկութիւնը
մեծ բան իննէ ։

2Է. փոքր փոքուն առնել զբարի,
Երբ հարկն բերէ նպաստել այլուս .
Թէ և թագաւոր իցես յաշխարհի,
Կարօտիս երբէք նպաստից փոքուն ։
Բան զառիւծ հզօր զինչ հզօրագոյն,
Եւ զինչ քան զմուկն անզօր փանաքի .
Արդ հզօրն ահա կապի սնդագոյն,
Ազատէ անզօրն զհզօր ամենի ։

ԾԻԾԱՌԵ ԵՒ ԹՈՉՈՒՆ

Ա՛ս քեզ խրատ խորհուրդ ծիծուան,
Կըսեալ զանցեալն և զպագայն ։

Բարեկամն խօսք յաւել,
Երբ քեզ Բարի խրատ իննէ ։

ԺԷ. Պիծեանիկը տեսաւ որ երկրագործ
մը կանեփ կամ ըթանի հունտ կը ցանէր,
վաղէց գնաց ուրիշ թուշուններուն խնացընե-
լու ։ Օր կուգայ որ կրէր այս ցանած հա-
տերը ձեր գլխուն բան կը բանան . վասն զի
կանեփը կը համնի, և հաւորսը կերպ կերպ
որոգայթներ կը շինէ ու զամենքը կը բռնէ ։
Խ' խօսքս մտիկ ըրէք . ամենքդ այս արտին
վայէն թուշուն կերէք բոլոր հունտերը ։
Փուճ տեղը խրատ կուտար անոնց, որ ամե-
նեկն չուղեցին լսել . և մանաւանդ մէկ ան

պէս ձայն մը եկաւ իրենց, և ոչ թէ խոհեմ
 նախագիտութիւն: Ինչչևիցէ՛ հանեփը բուսաւ
 ծիծեռնիկը նորէն ըսաւ անոնց . թէ եկէք
 հանեցէք այս գէշ խոտը . թէ որ թողուք
 զատնը, շատ պիտի զըջաք: Պատասխան
 արւին թէ կուզես դուն հանե՛: մենք ատեն
 չունինք հանելու: Աերջպպես կանեփը հա-
 սաւ . նորէն վաղեց ծիծեռնիկն ըսաց թըր-
 չուններուն, թէ ինչ մարգարեութի որ ձե-
 ղը ըրի, շատ չանցնիր պիտի կատարվի. եթէ
 կուզէք ձեր ազատութիւնը, վախէք այս կող-
 մէն հեռացիք: Անոնք ալ ըսին . գնա՛ բանդ
 շատախօս . դու խնկա ճաթեցուցիր, երբ պի-
 տի ըլլայ որ ձայնդ կարես, գնա՛ մենք բանէ մը
 վախ չունինք: Զայս որ լսեց ծիծեռնիկը
 թողուց անոնց ընկերութիւնը ու հեռացաւ .
 իսկ թռչուններն անոր խօսքին չաւսայնուն
 համար շատ զըջացան . բայց ինչ օդուտ՝ բա-
 նը բանէն անցաւ . վասն զի քիչմը ատենէն
 ետեւ հաւորսը հանեց իր կանեփը, և ոլորեց
 որդպայթ շինեց, ու լարեց՝ զամէնը բռնեց:

Օրինակ է խոհեմ-Է, որ եպօթ գաւիթները
 մարտիւնը և բարեխօսի խօսքին մարի ընելով պէտք
 է արևոտն ինչու ապէնով յետքէ ելլածն ընել
 վասնզէն ժախլիւ. Եւ լէ նոյն վասնզի մէջ ի
 իորսւլի այն լուսանեբրուն պէս՝ որ խոհեմ բա-
 բեխափն մարի լըրին ու իորսն:

Նախատես լինել ապաղայ չարին,
 Մեծ խնաստութի յիմաստնոց դատի.

Բանդի նախատեսն հանապաղ շահի,
 Արտաքը եղեալ չարեաց բնաւին:
 Զինչ մեծադոյն գանձ գիտունք ասացին
 Բան հաւատարիմ՝ խորհուրդ մտերմի.
 Արդ մի լքաներ զիրատ պիտանի
 Նման անխմաստ թռչնոց երամին:

ԳՈՐԾԻ ԹԱԳԱՒՈՐ ԽՆԴԻՆՆ

Տրանջողին ոչ պակասին
 Տաք և վստասեք զոր տայ երկին
 Տժգո՛հ մարդու ինչ որ ընեն,
 Միշտ ինչ գանգափի ունեցածէն:

ԺԸ. Պորտերը կը ձանձրանան անանկ մտալ
 աւանց թագաւորի . օր մը միաձայն կը լաւ-
 ուան, թէ միլ Գիտս, դուն մեղն թագաւոր
 մը տուր, որ գիտնայ մեզ կառավարել: Իսկ
 Գիտս խնդաց անոնց անխոհեմութիւնը վրա,
 և երկար ժամանակ չի կատարեց իրենց խըն-
 դիրքը . բայց հուսկ յետոյ ձանձրանալով
 անոնց աղաղակէն, որունց ահամայ կաղթով
 կաղթեցին կատարելու . և ձգեց իրենց ըմբ
 մէջ գերան մը . անանկ մեծ ձայն ելաւ գե-
 րանին իյնելովն, որ գորտերը ահերնուն
 զարհուրեցան, և ջրին տակը մտան, կիսա-
 մեռ կը դողային: Բայց քիչմը ժամանակէն
 ետեւ իրենց մէջէն մէկ աւելի սրտոտ մը
 գլուխը ջրէն դուրս հանեց, և առջի բերա-

նը չի համարձակելուն հեռուէն նայեցաւ նոր թագաւորին • յետոյ այնչափ զօրացաւ որ մտակցաւ գերանին , և սպա տեսնելով թէ անշարժ է՝ սկսաւ ցաթիկել վրան ելլալինջնէլ : Ասոր հետևեցաւ ուրիշ գորտ մը • անոր ալ ուրիշ հետևեցաւ • և այսպէս բոլոր գորտերն ելան թագաւորին վրա • բայց շատ տրանջացին այս իրենց անշարժ իշխանին համար , մինչև բողբոջեցին Գիտսին , որ ուրիշ թագաւոր մը տայ , որ կարենայ շարժիլ • Իսկ Գիտս խրկեց անոնց թագաւոր արագիլը լէնլէլ • որ քիչ ժամանակին մէջ կէսը հատցուց ուսուցով : Իսկ գորտերը սոսաւցին կանչեցին ահապին ճայնով , և խնդրեցին որ զիրենք այն բռնաւորէն սղափու : Բայց Գիտս այլ չուզեց լսել ըսելով թէ որովհետև դուք չուզեցիք քաշել ձեր բարե թագաւորը , հիմա համբերեցէք չարագործին , և վախցիք որ աւելի գէշը չի դայ ձեզի :

Գիտս մեր գրոց մէջ Արամաղդ իւսկէ , որ իրապաշտուէ աստուծ երկնից մէջ ասի ի իսկէր • որ ասի աղէիսի որ իւլևայ , բուրբ Գիտս իրապաշտ իւսկէն • անոր համար գորտերն ալ ստոր ի աղաւելն որ իրենց թագաւոր քայ • ոսպի էրբոր գորտերը գիշերանց իւրոսան՝ հիւերը իւսկէն թէ իրենց թագաւորէն գանգապ իւսկէն Գիտսին : Օրինակ է գանգապ ընտելեբուն • որ ինչ ընես իւր քրտնջան , և այ ընորհալիս լին ըլլար • անոր համար գիշ իւլևայ իրենց բանը :

Երբ զնշխան և տէր տայ ումէք երկին ,
Չէ սարստ արանջալ փոխել ըստ կամի •

Քանզի պատուհաս է տրանջողին ,
Թողուլ զբարին հանդիպել չարի :
Արդ մի տրանջար ըստ առակողին ,
Երբ առաջնորդիս ի կամաց վերին •
Որ ինչ անհաճոյ ի քէն դատեսցի ,
Յօգուտ է ի խրատ այն քեզ պատրաստի :

ԱՂԱՆԻՒՅ ԵՒ ՈՒՐՈՒՐ

Համբերողին ամենայն փոշ
Ի խնի անխալթ բանջար անոյշ :

Համբերող սիրտն ամեն լեզի ,
Անոյշ ինչէ նման մեղրի :

ԺԹ • Արուրը ստակալի պատերազմ կընէր աղաւնիներուն հետ , որ իրեն գրացի էին : Իսկ աղաւնիներն այս թշնամուկեց աղաւ ըլլալու համար կարծեցին թէ ուրիշ ճար չի կըրնայ ըլլալ • բայց եթէ թուչուններուն մէջ ջին թագաւոր մ' ընտրել , որ կարենայ իրենց թշնամուն գէտ գնել • բաղէն շահիւն եկաւ թագաւոր • որ մտաւ աղաւնոցին մէջ պատճառաւ հասկընալու անոնց միաբանու թեան ուժը • և մէկէն ցաթիկեց աղաւնիներուն վրա բողբոջ խողբեց :

Ըստ անգամ ճարդ անհամբերութիւն մէջ ներդու
Բէն աղաւնու համար անանի բան մը իւրիւր • որ ա

տելի մեծ նեղութիւնք մեջ յիյնի . նաև ընտանի
յետեկն ազապելու համար, տելի լարին յետեզ
լըմարնելի :

Այս է վատ բնութի գծնեայ ուրուրին,
Յանգ թշնամանել զուր հեղ գրային .
Որչափ քաղցրակեաց լինի աղանին,
Այնչափ դառնանայ գազան թշնամին :
Սակայն համբերել է դարման նորին,
Ոչ մասնիլ 'ի ձեռս հզորագունին .
Ձի սակաւ մլատ ուրուրն գործէ,
Քան արեանարբու սաստիկէ բաղէ :

ԳՈՂ ԵՒ ՇՈՒՆ

Եթէ իցես հաւատարիմ,
Հաց նենգողաց քեզ ոչ հաճին :

Բարի ծառան հասաբարի՛մ
Ձի խաշտեր արծաթն ոսկին :

Ե. Պող մը կը ջանար մեկ տուն մը մտնել
գիշերվան մէջ, որ բաները թալէ • Բայց
պահասան շունը թող չէր խտար, անդադար
կը հաչէր • Խսկ գողը կտոր մը հաց ցըցուց
շանը կարծելով թէ անով կը պարտաւորէ
զշունն որ լուէ : Բայց շունը մերժելով քաւ
գողին • այ չարագործ ես կըխաբէի, ու
կառնէի քու տըւածդ, թէ որ չգիտնայի
թէ կ'նչ մըտքով կուտաս ինձի : Գնա՛ կորի՛ր

տակէ • վն զի լան մը չի կրնար աւրել զիմ
հաւատարմութիւն :

Օրինակ է հասաբարի՛մ ծառաներան, որ չա
կի համար հասաբարմութիւնք է Բան լին ընէր ի
բնեց քիբուլը • վան գի խաշտը իւ իւրարընէ
ճարդոս ալք :

Արդ ուր են ծառայք պահասան մանկային,
Խոհեմ մտերիմ շան հետեւողին •
Տես զխարդ մերժէ զխաշտ նենգողին,
Յանարաս պահէլ զուր գանձ բնածին :
Քանի՛ անարգանք նենգող ծառայի,
Երբ քան զըրնակն վատթար գտանի •
Անբանն 'ի սէր տեառն ինքնագրաւ մըցի,
Բանականն անիջթ խորդայ 'ի մահձի :

ԻԳ ԽՈՁ ԵՒ ԳԱՅԼ

Խորհուրդ է կամը նենգաւորին,
Ի չար առնել մերձաւորին :

Չարն երբ տեւի խորհուրդ խաբայ,
Վախոյի՛ր գլխուդ Բան իբնայ :

Խն. Պայլը կրտենէ քած խող մը ծոցուր
է ծանրած, մտնենալով քովը քաղաքավար
ձանով մը կըսէ : Մայրիկ թէ որ կամե
նաս ես քեզն օգնութի կընեմ, որ զաւակ
6

ներդ ծնիս • եթէ կուղեօ ձագերուդ ալ
 հողք ինձի յանձնէ որ պահեմ • գիտնաս որ
 իմ քովս շատ ասպանով կըմնան : Պատաս-
 խան օրուաւ խողը • կնքահայր՝ ես լաւ գի-
 տեմ զայդ • բայց թէ որ դուն իմ եղած ան-
 դէս ուղենայիր շատ հեռուն երթալ ինձի
 կերևնայ թէ ձագերս ալ մայրն ալ ասանկ
 խիստ ասպանով կըմնային :

Հարէ է միշտ հեռուա շախմախ անգամ շարեն՝
 դէ շարուսէն սորձը մարդը աղէկութիւն էի իբր-
 նար ընէլ • ինչ որ ընէ՝ իր շահուն համար ինչէ, և
 անոյւ ևնուով բարեխափն արանը խաբէ :


Ձ խորդ ոճրագործն խորհի ըզբարին ,
 Ո՛չ մերձաւորի այլ յատուկ անձին •
 Մանկածու ընել տենչայ ընկերին ,
 Ձ ի մանկուհին ինքեան կերակուր ըցին :
 Գայլակերպ նենգօղք որչափ քեզ մերձին ,
 Չանա հեռանալ ՚ի ստուերէ նոցին •
 Ձ ի խորհուրդք նոցա ՚ի չարիս բերին ,
 Թէ և բարեկամ քեզ երևեսցին :



Ի՞նչ՝ Որսորդ և Հուն Ի՞նչ՝ Նապաստակը:



Ի՞նչ՝ Ուլ և Գայլ: Ի՞նչ՝ Ոչխար և Հուն:



Ի՞նչ՝ Աղուէս և Արագիւ: Ի՞նչ՝ Գայլ և Ախարձան:

ՈՐՍՈՐԴ ԵՒ ՀՈՒՆ

Ոչինչ յանցանք ծեր դնուորի,
Երբ բնական յուժոյ թափի:

Թէ աշխարհի գեղ ծեր ծառան,
Յանցանքն իր չէ այլ ծերութի:

Ի՞նչ . Որսորդ մը վազեց եղնիկին վրա, և կը
Զանար թէ իր ձայնովը, և թէ փողին պօ-
ռուին ձայնովը սիրար տալ շանը, որ ծերու-
թիւ թօշնած անկար էր: Իսկ շունն որ ա-
ւելի ուժէ ընկած էր, քան թէ քաջութիւն-
եացի շանքն ըրաւ, ու անանկ արագութիւն
վազեց, որ հասաւ եղնիկին, և խաճաւ
զայն. բայց պակասութիւն ահաաներուն ե-
ղաւ, որ չի կրցաւ բռնել արգելել: Անա-
տենը որսորդը տեսաւ, թէ որսը ձեռքին
եղաւ փախաւ, վազեց շանը վրան և սկսաւ
զարնել Նախատել, թէ բանի մը պէտք չէս:
Պատասխան տրուաւ շունը, թէ ես որ աւ-
ջնը չեմ, պատճառը ծերութիւն է: Արդ-
եա կըխոստովանիմ որ հիմա զորութիւն չու-
նիմ, բայց անբրախտ, դուն ալ միտքդ բեր
զիմ քաջութիւններս որ կարըճութե աստեա
ըրեր եմ:

Մէծ անիրաւութիւն է ծեր աշխարհագրութիւն:

Երեսնէ յգէլս և լի իբնալ աշխարհելու համար
նախարհել. վասն զի անոնք ապենով իբննց պարագն
ըբեր են. անոնցմէ միայն բան սորվելու է, ու
սուղի ըրած աշխարհանքին մոռնալու լի :

Քանի՞ վշտաբեր փորձառու ծերոյն ,
Երբ թախեալ յուժոյ նախատի յայլոց .
Կամքն 'ի նա ամբողջ և միաբն է արթուն,
Իբրև անսխտան ծաղղի 'ի յեսնոց :
Արդ զինչ վիսպանք զինչ յանցանք նորուն ,
Զի սայ և բաւնայ երբ կամի բնութիւն .
Շատ է զոր արար յառոյգ հասակի :
Այժմեան զօրութի 'ի խեղճն պահի :

ՆԱՊԱՍՏԱԿԻ

Երկիւղ կասկած զգորտ շնչին ,
Ահեղ գործեն հանգոյն փղին :

Վախն ամէն բան անէր իբնէ ,
Լեռն ու ջրերն այն իւ պահէ :

Եւ . Մտառ մը սաստիկ շարժելով հովէն՝
սովորականէն աւելի ձայն կը հանէր . խոկ
հոն եղած նապաստակները վախերնուն գող
կեղէն . անանկ որ մէկը անոնցմէ կըսէ .
Փախչինք պղտփնք ահա կըլսեմ որսորդի
ձայն , և շներու ուռնալ : Ուստի բոլորը մե-
կէն ամէն կողմէն շուտով սկսան փախչիլ :
Ատնց առջին ելաւ ջրոտ սեղ մը, որ զե-

րենք արգիլեց փախչելու . վն զի գորտերը
գրսէն ջրին մէջ ցաթիկեցին . և այս ձայնով
այնչափ եւեղաւ նապաստակներուն սուաջ
նորդին վախը, մինչև չի կրցաւ առաջ վա-
զել, և չի համարձակեցաւ ալեւ դառնալ .
ուստի անանկ պաշարվեցաւ մնաց , որ չէր
գիտեր ինչ ընէ : Բայց անոնց մէջէն մէկը
սկսաւ մամլտալ այս վախուն վրա , որ զե-
րենք այնպէս սաստիկ գողցուցեր էր . և մե-
կայոնց ըսաւ թէ ահա կը փախչինք հովին ,
ու գորտերուն վախէն . ամօթ մեզի : Այս
խօսքով նապաստակները սիրտ առին , դար-
ձան իրենց անստուր :

Կապաստակն է թաւշան . որ սաստիկ վախ-
էրս ըլլալով օրինակ է անպէտ մարդանոց , որ
գոճ բանը մեծ բանի պէշ րնելով աշխարհի
Բոսնոր իւ հանէն :

Զինչ բռնական կըրք իբրև երկիւղին ,
Վ ի թխարի գործէ դաւարկայայ շնչին .
Զինուոր ցուցանէ զօճաբա 'ի դաշտին ,
Լեքինք ծով անտառ այնու պահպանին :
Արդ մի հեռուի վատ նապաստակին ,
Որում անցնիւր գորտը որսորդ երևին .
Մի՛ յետ ընկրկիլ 'ի տե՛ս ստուերին ,
Զի միշտ երկնչիլ է պատիժ վատին :

ՈՒՆ ԵՒ ԳԱՅԼ

Չարն 'ի բարին կերտարանի,
Յորսաւ զանմեզն յիւր ծուղակի :

Չարը Բարի էլ յանայ,
Որ պանծնէրն էրէն որսայ :

Ինք . Մայժը կրփակէ իր ուրը կամ ձագը
գոմին մէջ, և կերթայ դաշտը արծեւու .
Իսկ գայը կիմանայ, ու մայրը գացածին
պէս կրկողէ կուգայ գոմին գուռը կը զար-
նէ . ձայնը փոխելով այժու պէս կըսէ ու-
լին : Չագուկս երթալու ատենս մոռցայ
քեզ սիրելու . շուտ ըրէ գուռը բաց որ իմ
սէրս քեզի յայտնեմ . բաց գուռը սիրական
մորդ : Իսկ ուրը գուռնը ծակէն նայելով
ճանչցաւ, ու պատասխան տրւաւ, թէ չեմ
կրնար բանալ . իրաւ գոռն այժու ձայն ու-
նիս, բայց չարն այն է որ ես քու մարմինդ
բողբոսկին դայլ կըսեսնեմ :

Այս առաջիկա Ռոզ սորվին ծնօղջ, որ էրէնց
պատախը լար ընկերէ յեռք էի յգէն, և էրէնցմէ
չի պարեն . իսկ պատիւներն ալ Ռոզամոսն յայնէն
էի խաբէին, ու լարաւար իորսվին :

Տեսէր զօրինակ ոճրագործ չարին,
Խնդրէ միայնակ զճնուհդ այժին .

Յեղեղէ զձայն իբր յուշկապարկին,
Խարդախել զանմեզն ծախել յորկորին :
Մանկիկ խոհական մի լսէր ձայնին,
Մի քեզ քաղցրասցի բան անգգամին .
Փախիր 'ի նմանէ զի գայլ է ներքին,
Քոյ քաղցր ծնողաց հանգիր 'ի բազկին :

ՈՉԽԱՐ ԵՒ ՇՈՒՆ

Չըպարտողին մերձ գտանին,
Մաշառակուրծ վկայք կրկին :

Չարին շոքով լարէր իւրօրն,
Որ լար գործին օգնիլ ըլլան :

Ինք . Շունը գատատան կրկանչէ զըլխա-
լը մէկ քանի կենդանիներու առջին, որ ի-
րենն հաց մը տալը է տայ, և անիրաւու թիւ
կըհաստատէր, թէ փոխ եմ սըւեր : Իսկ
ոչխարը գատաւորներուն զըրցուց հաստա-
տեց, թէ շունը անիրաւու է կը պահանջէր
զայն . զի ինքը ամենեւին անկէ բան մը չէր
առած . բայց որչափ ջանաց հաստատել .
կորսընցուց իր իրաւունքը . վասն զի շունը
վրկայ բերաւ անգղը արդարայն և ուրուրը .
անանկ որ անոնց վկայուէ այն կետին ոչխա-
րը պարտաւորեցաւ հատուցանելու զայն,
որ ոչ երբէք անկէ բան առած էր :

Անիրան մարդուն հեփ փլուխն լեւելլիք . պէտք է որպէս զ ասլ, և հեռուն շախլելանիկ . որ ուր բիշ բան յ' աւ լի հանի :

- Վ կայք անիրաւ անիրաւ դատին ,
- Մասչին 'ի հանգէս առ գատաւորին .
- Որով զպատճառ թիւրեալ արդարոյն ,
- Վ ճուեն հաստատեն բան զըսարտողին :
- Վ այ որ ստուծի փոխան ճշմարտին ,
- Դենեն և սնդեն ըյս ընդ խաւարին .
- Խաւարն է այդ մուծ 'նոցա բաժին ,
- Ծնունդ ստուծե ժառանգ դեհենին :

ՕՉ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Տարապարտուց բարկացողի ,
Չէղջ ապաշաւ կայ աւաջի :

Ոչ որ շոռճ քեզ իբարխանայ ,
Ըբաժ բանէն շոք խմբնայ :

Ինչ . Երկրագործ մը կըբարկանայ օձիմը վրա , որ իր տանը քով կը բնակէր , և այնչափ կը տաքնայ , որ կայցինը ձեռքը վրան կը վաղէ , որ սպաննէ : Բայց օձը կըփախչի մօտաւոր անտառին մէջ անանկ արագուծի , որ մարդը չի կրնար հասնիլ : Եամանակէ մը ետեւ երկրագործը կըտեսնէ , որ կարկուտը բողբ իր ցորենը ջարդուբողբ ըրեր է , կըհասկընայ թէ օձին իր ըրած չարուծեանը պա-

տիժն է , որ ան զայն փոծորիկը խրկեց երկըրին վրա : Ուստի այս պատիժս հանգարտեցընելու համար սկսաւ փնտրուել օձն , որ չէտը չաշտըվի . և երբոր գտաւ ' խօղբ տըւաւ , թէ անկէ ետեւ ամենևին անորմէ վրա մը չունենայ , և աղաչեց որ դառնայ իր աւջի բունը : Բայց փուճ տեղը կաղաչէր , ու կըբարկէր զայն . վն զի օձն ամենևին մտիկ չըբաւ , և շուտ մը անկէ հեռանալով կանչեց , թէ մեծ սիրով կըդառնայի քու տունդ , թէ որ չըխանայի , թէ դուն դեռ կայցինդ պահէր ևս , և թէ որ կարենայի մոռանալ թէ դուն ինչ մտքով օր մը զայն ինձի դէմ վերցուցեր :

Բարխանին է իբր մեկ բոյ մը , որ երեսփայտու թեամբ քանաւաւ ինչառե բարխանին սիրքը , որ վրեժխնդիր ըլլայ . ոստի զէմէ ինձիմի , և բուրմէն կայայտ բաժն շէպէ . սոր հաճար Պշապուն ինչառքեր որ բարխանը մարդը հայտն եայի , բարխանի բան լնէ . որ էպէս շէ զընայ ինչպէս երկրագործին եղա :

Ահա ապաժոյժ կըբը զազանային ,
Որ զհուր բարկուծե վրաէ 'ի սրտին .
Նեղէ զմերձաւորն այլ և զընտանին ,
'ի տանէ 'ի տուն վարէ զգլացին :
Արդ մի' հաւատար դու բարկատարտին ,
Թէ և գառն անմեղ քեզ երևեսցի .
Եթէ մի անգամ վշտացար անտի ,
Փախիր 'ի նմանէ , շատ է փորձաւուն :

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Որչափ խաբօղն է խորամանկ ,
խորամանկին լինի կատակ :

Դռան որևէ որ խարդախ ըլլաս ,
Քեզմէ ցածիս ծառը իճլաս :

ին . Սէկ որ մը աղուէսը կը հրամցընէ զա-
րագիլը թէ իմ տունս հրամմէ կերակուր
ուտելու . կրփախաբխ որ քեղն լաւ հար-
կիբմ' ընեմ : Արագիլը դէմ չի կեցաւ սի-
լով ընդունեց անոր արատին , ու խօսք դը-
րած ատենը գնաց : Բայց պատիւը շատ քա-
ղաքավար եղաւ . և հարկիքը անքաղաքավար .
վն զի բոլոր կերակուրներն որ առաջ բերաւ
կաթէ շինած ջրի ապուր էին տափակ ա-
մանի մէջ լեցած . անանկ որ արագիլը սե-
ղանին վրա ուրիշ բան չի կրցաւ ընել , բայց
եթէ ամանը քրցըցելով գրեթէ բան մը չի
կերաւ . հաղիւ թէ կերակրին համն առաւ :
Իսկ աղուէսը բոլորը լափելով բան չի թո-
ղուց . ու կը խնդար արագիլին վրա , որ իր
բարկութիւնը բռնելով չէր յայտնէր . որով
հետեւ աւելին նեղացած էր , քան թէ անօթի :
Այս ուրախութիւնը աղուէսին շատ չի քշեց .
վն զի այն օրը արագիլն ալ հրամցուց զաղ-
ւէսն , որ երթայ անոր տունը կերակուր
ուտելու . և իրեն հանեց մէկ աման մը եր-
կան ու նեղ վիզով , և մէջը մանրած միս

լեցուն . ինքը դիւրին կերպով երկան բա-
րակ կտունցքը ամանին մէջ երկընցուց ըս-
կըսաւ ուտել հանդատութե , և խնդալ խա-
բօղ աղուէսին վրա անոր ըրածին դէմ . որ
բոլոր հարկիքին մէջ ուրիշ բան չի կրցաւ ը-
նել , միայն թէ ամանը լրեց : Ապա թողուց
հարկիքն , ու անօթի մարած դարձաւ ամրջ-
նալով գնաց :

Աղուէսը խորամանկ ըլլալով օրինակ է խաբէ-
բայ մարդուն , որ միշտ ինչայի որիչը խաբէ-
բայց լինի Բէ Ինչ որ Ընէ , զայն ինքիսէ :

Չխարդ անվայել քաղաքականին
խարդախել զընկերն ըստ խորամանկին .
Որպիսի պատրանս նիւթէ օտարի ,
Նովին պատրանօք փոյթ խայտառակի :
Աղուխու է բարք ոչ բանականի ,
խաբել և ծաղրել զընկեր բարեկամ .
Կեղծաւորելով իբրև սիրելի ,
Չրկել և լափել զօտարին սեղան :

ԳԱՅԼ ԵՒ ԿԻՍԱՐՁԱՆ

Գեղեցկու թի բանականին ,
 Ո՛չ մարմնականն այլ է ներքին :

Ի՞նչ չափ է թե գեղեցիկն է աղփոր ,
 Գլուխն անխելս պարսպ իւր :

Ը . () ր մը գայլը կըմտնէ արձան շնողին
 խանութը , և կըտեսնէ հոն մէկ կիսարձան
 մը շատ գեղեցիկ շինած . առջև բերանը կը
 զարմանայ անոր աղւորութիւնը վրա . բայց
 երբոր կըտեսնէ ու կըհասկընայ , թէ քարէ
 շինած անդգայ գլուխ մ' է , և բան չկմտ-
 նար , Ո՛չ ի՞նչ գեղեցիկ գլուխ է , կըտէր ,
 բայց մեղք որ խելք չունի :

Իմացողութիւն ընդով իբււայ , թէ որ ընդին
 բարախ էրախեբը , և ոգիբւ լաւ ըւան , խելադի
 իբււայ : Ասոր համար մշտ պէտք է մարդուս
 խելսին նայել , և թէ րբախ իբրպարանին :

Ը ի՞նչ գեղեցկու թի՛ անխնատ գլխոյն ,
 Երբ զուրկ ՚ի խելաց սլանծայ գերագոյն .
 Խնաստունք միայն գեղով գիտութեան ,
 Հրճունին գեղապանծ շատ ներքին մարդոյն :
 Քանիք կան սարծին իբր անդրդ ասուն ,
 Այլ զուրկ յինաստից են զերթ անասուն .



ԸԹ. Կաշաղակ և Սիրամարգ. ԸՇ. Կապիկ և Աղուէս:



ԸԹ. Գորտ և Կով: ԸՇ. Աղւանի և Բազէ:



ԸԹ. Աղուէս և Գայլ: ԸՇ. Փայտահատ և Անտառ:

Արտաքուստ միայն գեղեցիկ վառու՛ն,
Բայց անխել յաւէտ արձան ըստնէրբոյն:

Կ Ա Չ Ա Գ Ա Կ Ե Ի Ս Ի Ր Ա Մ Ա Գ

Որ ոչ գիտէ զլափ անձին,
Նախատանօք չափ տան նմին:

Նայէ ըստ սիրուն խելով,
Չէս աղւորնար օրսր զարդով:

ԸԹ. Սիրամարգ մը փետուր փոխելու աւտնը՝ իր փետուրները կը լծափէ. իսկ կաշաղակը սափառանք զանոնք կը ժողկէ, ու վերան կառնէ կը զարգարվի. և զինքը գեղեցիկութիւն շատ մեր կը զնէ քան զսիրամարգը. մինչև հարտուէք փքանալով կը լծողու իր ընկերներն, ու կուգայ սիրամարգներուն ընկեր կը լայ: Բայց սոյս հարտուութիւնը շուտ մը խայտառակ եղաւ. վն զի սիրամարգները ճանչցան անոր կեղծաւորութիւնն, ու սուտ փետուրները վրայէն փեթտեցին, և շատ քրքրեցելով վերնտեցին իրենց ընկերուն: Իսկ կաշաղակը փեթտած և ծեծը կերած՝ չի կրցաւ մեկը կաշաղակներէն ալ ցաւակցութիւն արժանի ըլլալ, որովհետև զանոնք անարգէր էր առաջուց:

Առաջն օրինակ է բռնաճակին . որ ուրիշին
բանովը ինչպարսպանայ, և ի լուսարծի . միշտ ի
նայի որ դրսէն պարտարված ըւսայ . Բայց երբ
ինչ եղածը շտապով ինչանկանն ուրիշները :

Աճա՛ տեսարանս պճնող հպարտին ,
Պճնի զարդարի զարդու օտարին ,
Որով թեկն անէ հանդոյն չքնաղին ,
Պանծալ զընկերօք անցեալ 'ի կարգին :
Արդ զինչ շահ բերէ այն փառասիրին ,
Օտարին է զարդ ո՛չ յառուկ անձին .
Երբ իւրաքանչիւր զիւրն առնու 'ի բաց,
Մնայ խայտառակ մերժեալ յընկերաց :

ՃԱՆՃ ԵՒ ԿԱՌԻԲ

Յիմար ճանճիկն կարծէ զինքն ինչ ,
Սակայն յինքեան է սին ոչինչ :

Պայտ ճարդի է ձեծ ի լեւօսին ,
Կարծեն քոսերն ի բեն + ըբն :

Շ. Կառավար մը երբեմն իր կառքը արապան
կրտանէր մէկ աւաղոտ տեղ մը, որ երկու
զօրաւոր ձիեր կըքաշէին արագութեամբ. ճանճ
մը կրտանէր զայն, և բզլաւով կուգայ կը
նստի կառքին վրա, ու միտքը կըդնէ թէ ինքը
մինակ կըքաջընէ զայն . հօ տեսէք, կըսէր,
որչափ փոշի կըհանեմ ահա :

Շաք ճարդի է իմն որ յեռու ընուն բան լի փար,
ու ձեծ ձեծ ի լեւօսին . և ուրիշին ըրած Բանը
ի բեն + ըրածի պէս ի լուսարծին ճանճին նման . ա
սանիներուն ի ըսեն, որ պայտ ճարդի է ձեծ երազ
ի ըրեսնէն : Արիստոթէլ պեսսու հայրք պղայ մը,
որ ձեծ ի լեւօսեր՝ ըսաւ . երանի թէ մտէր ան
ցած Բաները ես ունենայի :

Տէս զանմիտ արարս անպէտ տկարին ,
Պանծայ թէ իցէ կառավար մեկին .
Ոչինչ հայելով յիւր անձն չնկն ,
Հողվէ կարծէ զանկա աշխարհին :
Առ քեզ 'ի խրատ զառակին իմաստ ,
Ծանիր զքեզ կշռեա՛ զինչ ես և ուր կաս .
Մի համեմատեր զքեզ կարողաց ,
Զի մի ծարղեսցես յաչս տեսողաց :

ՃԱՆՃ ԵՒ ՄՐՋՈՒՆ

Որ զինքն վէհ դնէ այլոց ,
Մերժի խոտի և 'ի փոքունց :

Քեզ թէ դնէր իարգ ձեծին ,
Ծաւր ի ըսաւ ձեծին բորբն :

Ը. Ճանճը կըքանար մեծութեան իրաւունք
ունենալ, որ իր աստիճանը մը ջունէն շատ
վեր դնէ . ուստի հպարտութեամբ կըսէր մըր
ջունին, թէ ես առանց պատճառի չեմ ու
ղեր քեզմէ վեր ըլլալ : Մտածէ 'ի նչ վիճաւ

կի ար եւմ ես . որ ստեղծւած ինծի պէս ազ-
նուական է : Ո՛չ երբէք կաշխատիմ . ուր որ
ուզեմ կրմտնեմ պալատներու մէջ ըլլայ
տաճարներու մէջ ըլլայ . և թէ ինչպիսի՞
կերակուրներով ես կրնանիմ , տէրը գի-
տէ . ի՞նչ սուկուրներու և դէմքերու վրա
կըհանգչիմ : Իսկ դուն , սրբոյն , զատնը
տեսնելով կրնաս զքեզ ինծի նմանցնէր ,
դուն որ ծախի մը մէջ կըքնակիս , ուրիշ
ասրուստ մը չունիս , բայց հաղիւ թէ վրթ-
տած հատիկներով կատրիս . և անալ ուրիշ
կերպ չես կրնար ունենալ , բայց և թէ մեծ
աշխատանքով և յոգնելով : Պատասխան տը-
ւաւ մը չունը . ճշմարիտ է թէ դուն պա-
լատներուն մէջ կըքնակիս . բայց ձանձրա-
ցուցիչ ես ամմենուն առջին : Այն գեղեց-
կուհիները՝ որոնցմէ իբր թէ անուշութիւն
կըգողնաս , քեզ կըհալածեն և կանխեն :
Ես կընդունիմ թէ դուն ամառը քան զիս
լաւ կեանք կըվարես . բայց ձմեռն ի՞նչպէս
կատրիս գիտես : Երբոր ցրտէն հալածւած
պատին մէջ խեղճ կըստակիս անթի ծա-
րաւ , ես հողին տակը իմ կերակուրներովս
կատրիմ . և այն գեժար եղանակին մէջ իմ
աշխատանքիս սրուղը կըվայելմ ու կուրա-
խանամ : Ուրեմն պատանձէ՛ ծոյլ , այլ զիս
մի՛ անարգեր . թէ որ քու ասորելուդ կեր-
պը ազնուական է , իմինս ալ աւանց ծան-
րութե շատ ասպհոլ է :

Անիպ մեծապատանէն իբեց հարստութեանս
լով Բանարները մարտա պեղ լին դնեք . ոսկայն

մարտա մեծապատանէն հարստութեանս լուս
ազնայ իայ , որ մեծապատանէն շատ վեր է մարտ-
կութի :

Ամպարիշտ պարծանք սնասարծ վատին ,
Պանծայ իբր ունակ բարեաց բոլորին .
Ճգնի վերագաս լինել ընկերին ,
Եւ դատարկութիւն ուտէ զօտարին :
Գնա՛ աւ մը ջիւնն ստի ՚ի գրին ,
Ուսիր անտեսնել զպիտոյս անձին .
Մի՛ վերթ ճանձն անմիտ սովամահ լինիր ,
Մի՛ անմտութիւն զժողն երաներ :

ԿԱՊՈՒԿ ԵՒ ԱՂՈՒԿՍ

Թագաւորաց յժ զօրութիւն ,
Արուեստ հանձար իմաստութիւն :

Եւ իմապութի որ լուսինս ,
Արտայ ըլլաս ու ինչ ունիս :

Ըբ . () որ մը կենդանիները ժողվեցան , որ
իրենց մէջէն թագաւոր ընտրեն . կատկեր
կըմարիր որ ինքն ըլլայ թագաւոր . ուստի
անոնց առջին մէկ զարմանալի խաղ մ' ըրաւ ,
և անանկ թէ թեութիւն զաթկոտեց խաղաց ,
որ իր ճարտարութիւն բոլոր ժողովքին սիր-
տը շահէլէն ետև վիճակն ալ իրեն ելաւ ,
թագաւոր կըվեցաւ : Սակայն աղուէսը չի
քաշեց , որ խաբեբայ հնարքով արժանի է
ղաւ կատկին այս մեծութիւն . ուզեց որ

գայթ մը լարել կասկիկին, և անոր ցըրուց մէկ փոս մը, որուն մէջ որոգայթ մը պատ ըստեր էր, վրանալ տերևներով գոցեր էր: Տէր ըսաւ՝ դուն գիտես որ անցած օրեր այս ծահին մէջ մէկ անպատմելի դանձ մը գտայ: Արդ ինչպէս նորութիւնդ լաւ գիտէ, օրէնքով ամէն դանձ թաղաւորին կիցնի. դուն ես մեր թաղաւորը. այս դանձին նոր որ ըլլաս ամենևին բան մը չի պակսիր. քու կին մեծնալուն: Ասանկ խօսքերով կասկե կը խարվեցաւ. ցածկեց փոսին մէջ. բայց չէ թէ միայն չի տեսաւ զայն՝ որ կըլնուդեր, այլ և աղուէսին որոգայթին մէջ բռնուլեցաւ: Իսկ աղուէսը ծիծաղելով կանչեց աւոր. խեղճ յետըր ի՞նչ խեղճով միտքդ գրկը որ ուրիշները կառավարես, երբոր դուն ըզբեզ չիյտես կառավարել:

Օրինակ է անմիա մարդիանց, որ ըստաւորի պէս հանգստութիւն ունին, ու գանձ գործելու երես չըլլան, և ունեցածնին նորանցնելէն ետե խեղճ խայտառակ չըլլան:

Իմաստութիւն է տիրող աշխարհաց,
 Եւ ոչ արութիւն իշխանաց զօրաց.
 Ուսիր զիմաստից գտանել զբանձ,
 Եւ մի աղուխուն թակարթիք ՚ի ցանց:
 Ոչինչ շահ գործէ մեծութիւն փառաց,
 Երբ անթուսակից չեն հանձար իմաստ.
 Քի իմաստնոց է նախ տիրել ինքեանց,
 Աստ թաղաւոր դու աղբաց աղանց:

ԳՈՐՏ ԵՒ ԿՈՎ

Որչափ հպարտն ուռնուլ ջանայ,
 Պայթի հողմով ո՛չ մեծանայ:

Մեծ ըլլաւու շար մ' ջանար,
 Թէ չէ պարտիս ու չէ մեծնար:

Ըբ. Պորտը երբեմն կովմը տեսաւ, որ խոտ կուտեր ջրոտ տեղի մօտ, սկսաւ ուռնուլ բոլոր ուժովը, և ուռնելով կանչեց ձագին, թէ սրգեակ այս բանը չի կրնար ըլլալ, և չեմ կրնար քաշել, որ ես կովէն պզտիկ մը նամ. լաւ նայէ՛ ինձի կրտէր ես ինչպէս կը կարծեմ, ա՛հ անոր պիտի հաւասարիմ մեծութիւն: Պատասխանեց ձագը, թէ դուն անոր չես կրնար հասնիր, հանդիստ կեցիր: Ուրեմն ըսաց ահա տես ի՞նչպէս կրնամ: Անալ ըսաւ. պարտալ տեղը կաշխատիս: Իսկ գորտը միշտ ուռնելով կըսէր. ո՛հ կամ անոր կը հասնիմ. կամ թէ... Անխեղք գորտը այս խօսքս չի կրցաւ ըմբոստել. վասն զի ուռնելով այնչափ մեծցաւ, որ մինչև ճածելու ցաւ:

Ո՛վ որ իրմէ մեծին նայելով ինչպէ մեծալը փոխել, և մեծերուն նմանիլ գորտին պէս չըլլայ մի պի տմեռան իրեն յարմար մի՛շտ: Գրեւոր է ան:

Քանի՞ այլանդակ, գիտունք սասցին,
 Հոգի փքացեալ 'ի փոքրիկ մարմին.
 Որ Բանայ լինել նման վեթխարին,
 Ոչինչ խորհելով թէ գորտ է չնչին:
 Այս դժնգակ կիրք ոգւոյ հսարտին,
 Խորհի հանապաղ վեհ լինել յանձին.
 Արքայից սեփաց նմանիլ տենչայ,
 Սահայն սպլթուցեալ նանրանայ ինքնին:

ՉՂ, ԶԻԿԱՆ ԵՒ ԹՌՁՈՒՆՔ

Այր անհաւատ՝ զերթ չզընկան,
 Զուրկ 'ի լուսոյ կայ 'ի մթան:

Թէ լէս մեծի՞դ՝ հասապարի՞մ,
 Անարգ 'իւլսոս՝ ա՛մբէն ապօրին:

Ըբ. Թ՛ուչուններն ու չորրոտանիները իրաւ
 ըուհեա կուիւ ունենալով սրտերազմբա
 ցին, երբոր երկու դաս բաժնորվեցան, և
 սկսան ծեծկրելու չզընկ կամ գիշերահա
 ւը 'ի՛նչ գոհին անոնց կողմէն ելաւ, թշնա
 միներուն կողմն անցաւ, որ թուչունները աը
 կար մնան. վասն զի անոնց կորուստը կու
 զէր: Բայց երբոր տեսաւ, թէ յալթուլթիւ
 թուչուններն ըրին, որ զանոնք թողուցեր էր,
 շատ զըջացաւ: Իսկ յալթուլ թուչունները,
 և յաղթըված կենդանիները իրաւամբ բար
 կացան անոր անշահանհաւատարմութեանը
 վրա, ու հալածելով սրտուրեցին որ կէ

նացը մէջ անոնց առջին շերեւնայ: Ասկէ ե
 դաւ որ չընկիր չի համարձակիր ցորեկն ե
 ըննալու, գիշերը միայն կըթռչի:

Խրատ լեռն առնէն անհասապարի՞մ մարդի՞,
 ու գիշերն չափնէն. վասն զի ասանիները մէկուս
 րով հասապարի՞մութի լուսին, և ամբնէն լեռնա
 խաղձին:

Տեսեր՞ զըրնակ խաւարտիրաց,
 Որ ատեան զլոյս գնան խարխափած.
 Զի չեն արժանի անհաւատարիմք,
 Վայելել 'ի լոյս ընդ առաքինեաց:
 Արդ չքննող զաշխարհս զինչ չինչ տասպալեաց:
 Անհաւատարիմ՝ այր ընկերատեաց.
 Որ ատեայ զիւր ազգ խառնի ընդ օտարաց,
 Յօտարաց մերժեալ մնայ խաւարած:

ԱՂԱԿՆԻ ԵՒ ԲԱԶԻ

Որ արդարոյն չարխա խորհի,
 Չարագունին ինքն հանդպի:

Երբ անմշի՞ն դուս լար 'իսիս,
 Քեզի՞ն լարին յեռո՞ւ ինի՞ս:

Ըբ. Բաղէն երկար ժամանակ աղաւնիին
 ետեւէն ընկաւ, բայց չի կրցաւ բռնել. վեր
 ջապէս խեղքը դարձած եկաւ ընկաւ հա
 ւորսին որոգայթին մէջ. իսկ հաւորսն բըռ

նամ թին պէս պատրաստուեցաւ որ սպաննէ :
 Բազէն կրսէր անոր . ո՞վ անողորմ էս . քեզի
 ի՞նչ գէշուածի ըրած էմ , որ զիս մեռցընեւ
 կուղես : Պատասխան սըւաւ հաւորար . թէ
 ի՞նչ գէշուածի ըրեր էր . քեզի այն աղանին ,
 որ այնչափ ետեւէն ընկար . և տեսայ որ կը
 հալածէիր . մեռնեւր . արժանի էս դուն ը-
 սելով խղճեց :

Երբէն ան թոյլ իոսպայ անպատճառ , որ անմե-
 շը հաւածէն . Բայց յեպոյ աննոց դէմն ալ մէկը
 էր հանէ , որ անպատճառն անպատճառ էր իորսը-
 լին . միայն անմեշին համբերութիւն իւրասովին :

Այս տարացոյց է անդգամ չարին ,
 Պնդի հանապաղ ըզհետ անմեղին .
 'ի կեղեքեւ զայն յեւրում ճիրանին ,
 Ինքն կեղեքի ձեռամբ որսողին :
 Մի անիրաւիր էր թոյլ տայ երկին ,
 Եւ մի հանդիպիւ Քեզ լնցի չարին .
 Քանզի չարքն յաւէտ չարաւ կորնչին ,
 Եւ անորինօք անօրէնք պատժին :

ԱՂՈՒԻՍ ԵՒ ԳԱՅԼ

Որ խորխորատ փորէ այլում ,
 Ինքն անկանի չարեօք 'ի նոյն :

Ով որ մաքնիւ իւրայ եւբօր ,
 Իրէն գլխուն իոսպայ սե օր :

Ըն . Պայլմը բունին մէջ նստած իրեն կե-
 ղակուրներովը կապրէր , որ հոն ժողվէր
 սաշէր էր : Իսկ աղուէսն խմացաւ , վազեց
 եկաւ անոր հետ տեսուածին ընելու . այս
 մտքով որ սատանուածնով ձեռքէն կերա-
 կուրը յափշտակէ : Բայց գայլը շատ զգու-
 շում թի նայելուն համար , աղուէսը չի կըր-
 ցաւ բան մը ձեռք ձգել : Մտմտաց որ այս
 չեղաւ նէ , ուրիշ ճամբայ մը գտնէ : Գնաց
 հովիւին տունը , և անոր խմացուց գայլին
 կեցած տեղն ու առաջն ընկաւ տարաւ հոն .
 խորհուրդ սըւաւ որ այն չար գազանը մեռ-
 ցնէ . վստն զի կրսէր շատ անգամ քու լաւ
 ոչխարներդ կերեր է : Իսկ հովիւը հետեւե-
 ցաւ աղուէսին խորհուրդին , ու գնաց հոն .
 նախ զարկաւ գայլը մեռցուց , յետոյ աղուէսն
 ալ սպաննեց . որ իր շահին համար ուրիշին
 մատնիչ եղաւ :

Հովիւն արժանապէս սափնեցոց մաքնիւր .
 որ ուրիւր մաքնեւում իարժէց թէ յետոյ բան պի-

դի ինչի: Ասան: ալ օր յը սափանան դիդի ընէ
Տափնէնէրուն . որ ուրիշը մէկմէկ յգեւով մե
դայ պապաճառ իւլլան :

Ալուխաբարոյ նենդամիտ քուն ,
Տքնի խարդախել զընկերին զուուն .
Խառովէ ձգէ զեղբայր ընդ եղբոր ,
Զի կերակրեսցէ 'ի նոցունց զեւր վոր :
Արդ մի խարդախին ըւեր ձայն քաղցրիկ ,
Թէ և զերթ թողլէ սուրբացէ հեղինկ .
Քանզի նա միայն սակա իւր խորհի ,
Մասնէ զմերձաւորն 'ի սէր գոյզն օգախ :

Գ Ա Յ Լ Ե Ի Ո Ձ Ի Ն Ա Բ Բ

Թէ հաւատաս յսակալին ,
Փոյթ 'ի Ժանեայ ծախիս չարին :

Մի քար զէնքըտ շարին յեռոյց ,
Քեւ ի ընգէ մահին ճանիւց :

Ը . Շ ներն անանկ լաւ պահպանութիւն
կրնէին ոչխարներուն բորբոքին , որ գայ-
լէրը չէին համարձակեր մօտեցալ անոնց .
որոնք ուրիշ բան չէին մտմտար , բայց թէ
ի՞նչպէս կրկայ որ ուտեն դանոնք : Որով
հետև առանց մեծ վտանգի չէին կրնար գայ-
լէրը յայտնի բռնութիւն գլուխ տանել բանը ,
պէտք եղաւ որ խորամանկութիւն ընեն . տես
թէ ի՞նչ սատանութիւն բանեցուցին : Ոչխար

ներուն առջին դրին որ հաշտութիւն ընեն իւ-
րարու հետ . անոնք ալ ընդունեցան . և ալ
մենուէն սպահովութիւնը համար կամեցան որ
երկու կողմէն ալ պատանդ ընէ հին տան իւ-
րարու : Շները պատանդ գային գայլերուն
դին գայլին : Ոչխարները կարծեցին թէ ա-
սանկ խիտ սպահով եղան . բայց շատ գեշ
եղաւ իրենց բանը . վն դի քանի մը օրէն ե-
տև գայլերը ընցին լակոտներուն աղաղա-
կը , որ իրենց մօրմէն գառմէնուն համար
կը պոռային . այս բանն իրենց պատճառ ա-
ռին , ու խղթեցին շները քնեցնուն մէջ .
յետոյ վաղեցին եկան ոչխարներուն վրան
ընկան պատճառելով , թէ ինչու համար գա-
լինքն աւրեցիք , ու մեր լակոտներուն նեղու-
թի տըւիք : Եւ որովհետև շները չի կային
որ ազատեն ոչխարները . թնամիներուն ձեռ-
քը մատնըվեցան , որ գիւրութիւն յափշտա-
կեցին զամենէրը :

Օրինակ է միմիայն ճարտիւնց , որ լեռնաման
խօսին հասարակ Քարեխաճերէն հեռու իջիւ-
նան , և իրենց զէնքը ունոց խաբան , ու շարա-
ւար ին ճափնէլին անգիտաբերուն յեռոյց . առանի
նէրէն միշտ հեռուէն խախտու է , և ուրիշ բա-
րեխամանք ընէլ :

Ահա բռնութիւն անգութ գաղանին
ճգնի կրանել զերամս ոչխարին .
Չխարդ քաղցրութիւն գաղանկցի նոցին ,
Մինչև որասցէ զիրտ անմեղին :

Եւ զի՞ պիտոյ էր հաւատալ նոցին,
 Կամ զի՞ ապահով հաշտիլ ընդ գայլին.
 Քանզի թշնամին գայլ է մարդախանձ,
 Դժնեայ քանասար դժբող անմեղաց :

ՓԱՅՏԱՀԱՏ ԵՒ ԱՆՏԱՌ

Չոր ինչ գործես կռեա՛ զվախճան,
 Չունի ինչ շահ զեղջն անադան :

Մի ասր շարին յաջողութիւն,
 Վեւի ինչ նախ շարութիւն :

Ը. Մէկ փայտ կտրող մը աղաւեց անտա-
 ուին, որ իր փայտերէն անոր փայտ մը տայ
 կացինին կոթը շինելու համար. իսկ անտա-
 ուը խիստ աղէկ ըսաց գլխուս վրա. բայց յե-
 տոյ շատ զիջեցաւ երբոր հասկըցաւ թէ այս
 ըրած բարերարու թիւնը իրեն կործանմանը
 սլառաճառ պիտի ըլլայ : Որովհետեւ փայտ
 կըտրողը կացինին կոթն անցուցածին պէս
 սկսաւ անտառին ծառերը ջարդել, որ մը
 մէկը կտրէց որ մը մէկալը. և այսպէս բո-
 լոր անտառը կործանեց :

Պէտք է մշտ պահուի ինչաւ լինաւ Էիսթ Բանին,
 և շար մարդոսն յետո՛ւ դէն՝ էի ասլ, որ քուն
 աւելուս էրուէ է. սասնի մարդոսն ո՛վ որ օգնուի



Ը՞մ. Աղուէս և Խաղող: Ին. Գայլ և Շուշ:



Ինք. Կապիկ և Աղուէս: Ինք. Չի և Կշ:



Ինք. Եղն հայի՛ն ջուր: Ինք. Ափս և Աղուէս:

Ընէլով յանողոսն ի տարայ՝ իր շնասին ալ պարս
ճառս իւրաց:

Այսպէս անխոհեմք նման անտառին
Կպաստեն չարեաց զէն տան 'ի ձեռին.
Որով և ինքեանք ինքեանց կործանման,
Օտարաց համայն սպառճառօղ լինին:
Սակայն իմաստունք գիտող վախճանին,
Չոր ինչ գործեացն կշռեն նախ խորհին.
Չգաստ գող ընդդէմ վնասաբերին,
Չգեն զամենայն յօգուտ շահ անձին:

ԱՂՈՒԻՏՍ ԵՒ ԽԱՂՈՂ

Յորժամ չունի վասն դրարին,
Անգոսնէ զայն իբրև շնչին:

Յած ճարդն էրբ ևս Բան սորձած չէ,
Աւոյ Բառին Լար իւր գարնէ:

Ը՞մ. Աղուէս մը երբոր անօթի կամարիք,
կը տեսնէ խաղողին կուղերը կատուած բարձր
փայտերու վրաս, և բոլորը հասած. խորա
գէտը կը բազայն որ ձեռք ձգէ. բայց որչափ
որ վեր կը ցածկէ, չի կրնար հասնիլ որ ու
տէ: Ուստի տեսաւ թէ իր կարողութիւնը
չախտի հասնի, ետ գտնուելով գլուխը վեր
ցուց ըստց. Այս խաղողները ես ուղենայի՛
հեշտ կրնայի սուները ուտել. բայց ինձի ա
նանկ կանանչ չի հասած կերակնան, որ չն

արժեք այնչափ աշխատանք ինծի տալով զա-
նոնք փրցընեմ:

Նախանձոք մարտը երբոր բան մը ին փեանէ ,
ու լիբնար առնելու , ինչուաի վար դարեւեւ այն բա-
նը . Բայց լեւ որ յետո՛ յգէր , քննչէս Ինրախա-
նար : Այսպէս էն յիմար ուսմիջեբը , որոնց խել-
քը Իարճ ըււաւով գիտո-նէան չի հասնիբ . անոր
համար գիտո-նէբը եւ գիտոան մարտը վար ինչար-
նէն :

Իմաստ առակիս խոտէ զնոսին ,
Որոց այլ է միաք այլ ինչ 'ի լեզուին .
Տենչան 'ի սրտէ ունել զբարին ,
Ազգա զայն մերժեն երբ յուսահատին :
Մի ատեր զլաւն հանգոյն խորդակիսն ,
Յորժամ չէ 'ի .քեզ այլ կայ յօտարին .
Նախանձու է բերք այս ախա մողեզին ,
Երբ չունի մերժէ զամէն ցանկալին :

ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆ

Ազատուծիւնն է ձիրք բնութեան ,
Նա եւ անբանք այնու պանծան :

Աշարու-նիւնն է գանձ բնական ,
Մի շո-ր ծախէր դայն դոռ ածան :

Ին . Գ) Կայլը խօսակցութիւն կընէր շան մը
հետ աղէկ ապրելու վրա , և անոր երանի

կուտար գիրուծեբ համար : Բարեկամ կը
սէր , քեզ ասանկ գէր և գեղեցիկ տեսնելով
պէտք է ըսել թէ .քուկին վիճակն իմինէն
շատ վեր է : Պատասխան արւաւ շունը , թէ
ամենեկն մի տարակուսիր ասոր վրան : Ի-
րաւոր , սիրելի երբոր միաքս կըբերեմ , թմ
դուն ուրիշ տեղ չես պառկիր , բայց միայէ
անտառի մէջ միշտ բաց անդեր , և շատ ան-
գամ ալ անօթի կըմեռնիս , ամէն աշխարհք
.քեզ կատեն կըվարնտեն ու կըհալածեն ,
խմ միաքս չի հասնիր թէ դուն ինչպէս կը
տանիս ասանկ խեղճ կեանքը : Իսկ ես ամե-
նէն լաւ կերպով կապրեմ . աղէկ կըպառ-
կիմ . աղէկ կուսեմ պարոնի մը տուն , որ
զիս շատ անգամ կըսիրէ : Ուրեմն դուն
մտմտա՛ իրաւունք չունիմ որ զիս ամենէն
երջանիկ համարիմ : Սակայն հաւատա՛ ին-
ծի , և որոշէ որ հիմա իմ հետս գաս , ես
ինչոր ընեմ՝ դուն ալ բրէ գացած տեղս . ա-
հա առանց գժւարութե իմ երջանկութե
մասնակից կըլլաս : Պատասխանեց գայլը թէ
ինչ բան պէտք է ընել գրեթէ ոչինչ , բաւ ,
շունը . միայն թէ աւաղակութեց մէկ գի
գիր , և ատեն ատեն շողորթութէ գմեր ան-
ը . այլ ուրիշ բան չի մնար .քեզ ընելու ,
բայց եթէ ուստը խմել հանգիստ .բնանալ :
Վրկեց գայլը բողբոլիլն զըւարձանալով ,
բարեկամ , թէ որ ուրիշ բան չի կայ , միայն
այս բաներով երջանիկ կրնամ ըլլալ , բողբոլ
կընեմ .քեզմէ լաւ : Չայս ըսաց ու գնաց
շանը ետուէն , ճամբան երթալու ատենը գայ-
լը տեսաւ որ շանը վրին մաղբըր թափած
էին , հարցոց պատճառը : Պատասխանեց

շունը թէ այդ տեսածդ կըստաճառի օղա-
 կէն Բասմայէն, որ զիս կըկապէ: Կըկապէ՞
 ըսաւ գայլը. ուրեմն դուն ուր որ ուղէս
 չես կրնար երթալ: Միշտ չէ՞ ըսաց, բայց
 գրեթէ ամէն ուղածս ունիմ: Ըէն մնաս
 ըսաւ գայլը՝ ճամբայէն ետ դառնալով. ես
 բու վիճակիդ այլ չեմ ցանկար. զի իմ ա-
 խորժակս այն է. որ քիչ բարկը ունենամ՝
 ու շատ աղատուծի: Չայս ըսելով առաւ
 քալեց:

Բնական է, որ ամէն կենդանի կուսէ ազատ
ըլլայիր, և այսչափ ժամանակ ջրին մէջ մը
նայիր, ինչ պիտի ընէիր. որ կտոր մը ժամա-
նակ հոս մնալուդ համար ատանկ կուլաս:

Խրապ է ծոյլ մարդիանը. որ շին մը բանով ի
արհմնան, և շին նայիր գիշեր ցորէի աշխատող-
ներուն վրա: Գիպոանները ծոյլ մարդը ինման
ցընեն քնիսած աւի, որ մայն ծանրութի մը ու-
նի, ամենաին բանի լիքար:

Այս բնական բերք վատ տրանջողին,
Թեթեւ նեղուկ նմա մեծ թուին.
Յայլոց մեծագոյնս եթէ հայէին.
Թեթեւագունից յօժար սանէին:
Արդ փորբագունից մատիր ՚ի զընին,
Տես զիսրդ ՚ի վիշտս սանջին վատտակին.
Յամեթ լէր սով վատ ընդ գործ քո ընչին,
Ուսիր զօրանալ ՚ի մեծագունին:

ՀԱՒ ԵՒ ԾԻԾԱՌՆ

Զօտար սերմանս հար զբարի,
Եւ մի խառներ չարն ընդ բարի:

Գեւն աչէին հեք լի խառնէս,
Զարւ Իեղն հեռու ընէս:

մխթ. () ր մը հաւը կը գտնէ օձի հաւկիթ,
հոգաբարձուն ընելով կը տարցընէ որ ձագ
հանէ: Զայս ատենով ծիծեռնիկը զարմա

յաւ անոր անխեղբուէր վրա . ո՛վ յիմար
կըսէր , ինչո՞ւ այդ բանը կըրես . չիտե՞ս որ
ձադէրն ելածին պէս նախ քեզի պիտի սկը-
սին վնաս տալ : Ան ատենը հաւը մտմտա-
լով ըսաց . այս ի՞նչ յիմարութի է իմ ը-
րածս , որ ասանկ օձ թշնամիս կը սնուցա-
նեմ . որ նախ ինձի վնաս տալով ձագերս
պիտի կտրընցընէ :

Մեծ պոռուտաբէն պէտք է նախ ծնողաց , որ
լար եւ անառախ արագը լին մօտեցընեն իրենց ան-
մեղ յանգանց . երբորդ պէտք է վարդապետին
բռն որ լուռ լին փան առաջիւրիցաց լար սիւքրանի
որովիւ , անհասար արանդատորենբռն Բանեբը
խորտալու :

Ձ խորդ . քաջ խորհի խոհեմ կենդանին ,
Մի լինիր ասէ դարմանիչ չարին .
Որոյ թոյն դժնեսայ ՚ի ներքս պահի ,
Խայթէ եւ ժայթքէ երբ ՚ի չափ աճի :
Յորատ է ծնողաց եւ քաջ վարժողին ,
Անարատ պահէլ զոիրտ անմեղին .
Որ խառնէ զթոյն . քաղցր սննդին ,
Կորուստ պատրաստէ իւր անմեղ գաւուին :

ԱՂԱՒՆԻ ԵՒ ԱՆՕԹ

Արդ մի անյագ բերիր յուտէլ :
Ձի մի անկցիս ՚ի վնաս անէլ :

Ուրեւ իմէլ զապ մի ցանկար ,
Շապին յահասան այս է պարճառ :

միտ . Մէկ աղաւնի մը խիտ ծարւըցած
ջուր կըրինորուէր այնչափ բաղձանքով , որ
երբ տեսաւ պատին վրա ջրի աման մը դը-
րած , շփոթուեցէն կարծեց թէ իրաւ ջուր
է , վեր ելաւ ուժով մը զարկաւ պատին վը-
րայի ամանին որ ի յնի . բայց շատ զըջացաւ
վանն զի անանկ սաստիկ պատին զարկաւ
թւեցին , որ վնասելով վար ընկաւ . եւ երբոր
բռնըվեցաւ , կուլար թէ պիտոս իմ անխեղ-
բութեան , որ կամ մը ջուր խմելու համար
անմտութի այս խեղճուէս մէջ զիս ձգեցի :

Խրապ է աննց , որ ասանց ճառքելու իրենց
ցանկութիւն է Երեւէն անանի ինչին , որ խնամելու
իւր իրծանին : Ինչպէս որ Գժոխին ու իրոտապը
լին ինչանար , ասանի ալ արժանին աւել . ինչ
ասանի :

Այսպէս որ անյագ տենայ յըմպելին ,
Անդէն կորնչի ՚ի նոյն հեշտալին .
Ձի բռնական կիրք կորստականին
Վաղ կարապետէ ՚ի դուրս օրհասին :

Արդ երբ տեսանես սրտիդ բերկրալին ,
Մի գահավիճիք անսանձ 'ի նմին .
Չափակցեալ զկիրս ըստ բանականին ,
Չքնաղ վայեղես զերկնաձիր բարին :

ԱՂՋԻԿ ԵՒ ԼԱԼԱԿԱՆՔ

Բազումք առ սէր ոսկւոյն անբան
Առնեն ըզբործս եղբրական :

Շաք մարդ ոսկւոյն համար ի ընէ .
Լալու Բանէր որ արժան չէ :

մխն . Ս՝ Եծատուն մը երկու աղջիկ ունէր՝
ասոնց մէկը երբոր մեռաւ լալկան կնիկներ
բերին , որ չարաչար ողբ կընէին . մէկաւ
աղջիկը տեսնելով անոնց չափազանց լացը՝
կը զարմանար թէ այս ի՞նչ խեղճու թի է . ո՛հ
մեղի պէտք էր , կըսէր , ասանկ լալ հարկաւ ,
որ կսկիծը մերն է , չէ թէ ասոնց որ ասանկ
սաստիկ կռւան : Պատասխանեց մայրը թէ
մի զարմանար , սրդեակ , ասոնց խեղճ՝ լացին
վրա , որովհետեւ ըստրկի համար կընեն . ըս-
տրկին ուժն է , որ կըլլացընէ՝ չէ թէ կըս-
կիծը :

Շաք մարդիկ կան որ արժանութիւնը եւ քա-
ռասութիւնը համար լալու Բանէր ի ընէ , ու չեն
իմանար . վասն զի ցանկութիւնը մարտնչին ին խա-
ւարէ :

Այս գործս է այժմեան դարու տրամածին ,
Յոր 'ի սէր օգտի գործեն զեղիւքին .
Աչք ամենեցուն են յանբան ոսկին ,
Միտը ամենեցուն ձգել զայն յանձին :
Ձինչ ինչ կործանէ գիրս հողագնտին ,
'ի սուսեր մաշէ մարդիկ երկրածին .
Բայց աշխարհակուլ այս հրահալէլին ,
Որ զաշխարհս ողջոյն գործէ լալագին :

ՀՈՎԻԻ ԵՒ ՈՉԽԱՐՔ

Չարիս խորհիլ բարերարին ,
Գործ է տխմար ասկրատին :

Բարեբաբին լար մ' ուղէր ,
Որ թեւ հասնին Բարի օրեր :

մխն . Ս՝ Էկ հովիւ մը ոչխարներն անտառը
տարաւ , և կաղնի ծառին տակը հանեց իր
լաթը փռեց՝ ելաւ ծառին վրա , որ պտու-
ղը վար թափէ , բայց ոչխարները սրտուղն
ուտելու ատենը անոր լաթն ալ միատեղ
կերան : Իսկ հովիւը երբոր վար ինջաւ տե-
սաւ որ լաթերը չն կան , ով անզգամ կեն-
դանիներ ըսաց , դուք ուրիշներուն բուրդ-
կուտաք որ լաթ չնեն , իմ լաթերս կու-
տէք , որ ձեզ այսչափ կըխնամեմ :

Կան անան՛ ճարդի՛ որ հարխաւոր ճարդուան, և
իբեկն ընփանեալը սեբ և բարիք ճը Էնն ուղեբ
ընէլ, օփար անարժանեբոան իընէն, որ իոճճը
իեբեայ: Ո՛ւ որ բարեբարին լար հասարոյոսմ իը
նէ, լարը իբ քնէն լի պատիւբ: իընէ իմաստանը:

Անուայ ախմարք յայս միաս բերին,
Թողեալ զընտանիս օղնեն օտարին .
Է զի գառնացեալ բանիւ նենդողին,
Ընդդէմ ելանեն խնամակալին:
Խակամիտ մանկանց խրատ է անդին,
Զընկեր և դօտար ոչ ճանաչողին .
Որ մերժեն խոտեն դուր ինամարկուին,
Անկանին 'ի ձեռս օխերիմ չարին:

ՀԱՒ ԵՒ ՁԱԳՔ ԻՒԻ

Ձիք ապահով պատասպարան
Իբրև ամուր հնազանդութե՛:
Մփիբ բերբը հնազանդութե՛,
Իբեչ լի մօփիբ փասող բան:

մխէ. Երբեմն հաւը ձագերն առաւ հեռուն
գնաց ուտելու բան գանելու համար. տե
սաւ որ ուրուրը կրպարտի օգին մէջ անոր
մանտորը ձագերն յախշտակելու համար. մէ
կէն կանչեց քօլը զանոնք ու թևերուն տա
կը պահելով ազատեց թշնամուն ձեռքէն:
Խակ ձագերը տեսան, որ ուրուրը հեռաւ

յաւ, ելան ինքնագլուխ կրպարտեին. քիչ
մը ասենէն ետև նորէն եկաւ ուրուրը. հա
ւը նորէն կանչեց ձագերն, որ գան թևին
տակը պահվին. որոնք որ հնազանդեցան ե
կան մօրը թևին տակը մտան, ազատեցան.
Խակ անոնք որ չուղեցին մօրերնուան հնազան
դիլ և քօլը գալ, ընկան թշնամուոյն ձանկը
կորան:

Խրաք է մանկանց, որոնք որ լաք հնազանդ են
ծնողաց և իբեկն մեծին, մեջ առէն իըլան. Իս
անհնազանդ եղածնուան պէս ասուն՛ իը իբուրէն:

Որդի հնազանդ ծնողաց ձայնին,
Քաջ պատասպարի ընդ թևօք նորին.
Ճիրանք և մագիլք դժնեայ ոսոխին
Ոչնչ վէրս աունեն 'ի վերայ անձին:
Խակ որ անհաւան գտանի նմին,
Ինքնակամ չըջի ուր կալք իւր բերին,
Երազէ ինքեան ճիրան գաղանին,
Մանրի կործանի 'ի նոյն գառնապին:

ՊԱՐՏԻՉՊԱՆ ԵՒ ՄՈՒԿՆ

Գործ վշտաբեր զօշաբաղին
Է միշտ քաղել զօգուան անձին :

Շահասեց ճարտն ամէն Բանէ ,
Միայն իբէն շահ իւր քաղէ :

մխլ. Պարտեղզւանը էգիլին մէջ մէկ մուկ
մը կըբռնէ . երբոր պիտի մեռցնենք , սկսաւ
մուկն աղաչել . թէ մի սպաններ զնս մեղք
կը գործես . վասն զի ես քու ծառադ եմ ,
միշտ քեզին համար կաշխատիմ ու գիշեր ցու
րեկ գետինը կը փորեմ առանց վարձքի , և
հողն ալ ուրիշ տեղ մը չեմ տանիր : Պա-
տասխանեց պարտեղզւանը թէ ինչ որ ընես,
միայն քու շահիդ համար կաշխատիս , և քե-
զն օգուտ ըլլալու համար աշխարհքի միտաս
կուտաս . այս պատճառաւ պէտք է որ դուն
անպատճառ մեռնիս :

Ամէն գործքի մէջ պէտք է դիպասորուիեանը
նայել գործողին . շաք Բան իայ որ ինքը լար էն ,
Բայց լար վախճանով ըլլալուն համար լար իւրայ :

Դժնեայ զօշաբաղը զանձանց շահ խորհին ,
'՛՛ Ի վնաս այլոց բերին ինդագլին .
Բայց երբ գործ իւրեանց յերեան ածին ,
Անտօգիւտ ընեւ ջանան յառեմին :

Ո՛ր յայնժամ լսող ձայնի զրկողին ,
Ինքեան դատախազնոյն իսկ գործ անձին .
Զի գործք թէ չիցեն կարգեալ ի վախճան ,
Հարկաւ կորնչել կայ ի վախճանին :

ԱՂՈՒԷՍ ԵՒ ՇՈՒՆ

Որ վասն այլոց չարիս խորհի ,
Չարագունին ինքն հանգիպի :

Թէ որ այլոց լար ուղենաս ,
Մեծ լարերու իւր պիբանաս :

մխլ. Սէկ աղուէս մը խորամանկութիւն
մեռել ձեւացաւ , և դաշտին մէջ ընկած մը-
նաց , որ թուչունները մօտենալով իրեն , ա-
ռանց աշխատանաց բռնէ զանոնք ուտէ :
Բայց ըրած խաբէութիւնը գլուխը կերաւ .
վասն զի շուն մը գիպածով անցաւ անկէ .
տեսաւ որ աղուէսը բռնէր պառկեր է , մե-
կէն վրան վաղեց սպաննեց . երբոր կըմեռ-
նէր կըսէր ողորմելին . ուրիշները խաբել
ուղերուս համար ահա ես խաբվեցայ , և ը-
րածս գտայ . ճշմարիտ է եղեր թէ ինչ որ
ընես՝ զայն կըգտնես :

Ո՛ր լար խորամանկ ըլլաւ և խորագիպ , այն-
լար էն ինչ խորամանկին իւր պատահիս , որուն ինչ
լարուիք որ իւր յարածէի որ իւրիշին , Բարեւ քո-
գիտար իտագայ , զի անպատիւն իրծանուած լար է :

Ձոր ինչ որ խորհի առնել ընկերին ,
 Նոյն վերադառնայ յիւր ներդարծողին -
 Ձի գործ 'ի սպասճառն բերին հողովն ,
 Թէ վատ թէ ընտիր յայն կեդրոն յանկին :
 Իակ քեզ մտախոհ վիճակեալ բանին ,
 'ի ճահ է անեննդ վարել ընդ մանկտին ,
 Որչափ խորամանկ գտցին ընդ այլոց ,
 'ի նոյն ըմբռնեալ մանրին գառնագին :

ՇՈՒՆ ԵՒ ՏԻՐՆ

Պահէլ զբոյս թէ չես արթուն ,
 Ձխարդ յայլոց խնդրես զնոյն :

Թէ չես հոգար դռան դու քարին ,
 Ինչ շահ ինչէ հոգն ուրիշին :

մծ . Սէկ մարդ մը շատ հաւ կըսուհէր
 հաւնոցին մէջ . գիշեր մը մոռցաւ հաւնոցին
 դուռը փակելու . ուստի արուեսը գիշերն
 եկաւ բոլոր հաւերը խղզեց : Առաւօտուն
 երբոր տեսաւ տէրը այս եղած վնասը , սաւ
 տիկ բարկանալով սկսաւ շունը ծեծել , թէ
 ինչո՞ւ համար անհոգ կեցար նայելու , որ
 աղուէսը զանոնք խղզեց : Պատասխան ար-
 ւաւ շունը , թէ տէր իմ դուն առանց սպա-
 ճառի զիս կըծեծես . որովհետեւ եթէ դուն
 անհոգ եղար քու հաւերդ նայելու , եւ չի
 մտածելով դուռը բաց թողուցիր , որոնցմէ
 այդչափ շահ ունէիր , ինչ կուզէիր որ ես

ընեմ . դուն քու պիտուական բանը չի նայե-
 լէն ետեւ ես ի՞նչպէս պիտի նայիմ :

Օրինակ է Ժոյլ մարդոս , որ իր բանին հոգ
 չի պահելով ուրիշին յետոք ինչո՞ք , եւ ինչեւ որ
 ուրիշը լաւ պէտէն իրեն բանը . շնորհ ինչ
 ուրիշին շահ չի իայ :

Անիրաւ դատմունք զանցառու հեղգին ,
 Որ յայլոց վերայ ձգէ մեղս անձին .
 Ձոր ինքեան անկ էր առնել ըստ կարգին ,
 Թողու հեղգու թմբ առնել օտարին :
 Թէ դու՞ չես ո՞վ վատ հոգածու անձին ,
 Հիմ յայլոց խնդրես հոգ տանիլ նմին .
 Եւ եթէ դու քեզ չես հաւատարիմ ,
 Ո՞վ որ քեզ լիցի բարեկամ ներքին :

ՇՈՒՆ ԵՒ ԻՇ

Չէ վեհապանծ տեսն արտաքին ,
 Թէ համարուն չիցէ ներքին ,

Դրսի պետք բան մը լարծէ ,
 Թէ որ ներսի սիրսն անսնի չէ :

մծւծ . Շունը գայլին հետ պատերազմու-
 նէր . տեսաւ որ գլուխ չպիտի կրնայ ելլել ,
 ուղեց ընկեր մը դասնել որ անով թնամուն
 յաղթէ : Ահա օր մը հանդիպեցաւ իշուն ,

որ կըղըռուար, և վրայի համէտը «եմբը զէնք
կարծեց. նայեցաւ որ ձայնն ալ շատ զօրաւ
ւոր է, միտքը գրաւ թէ իշուն պէս ուժով
և քաջ կենդանի չի կայ. ուստի իրեն ընկեր
ըրաւ ու միատեղ գնաց գայլին հետ սլատե-
րազմելու: Բայց էջը երբոր տեսաւ հեռու-
էն գայլը՝ սիրտը փրթեցով մէկէն փախաւ
թողուց շունը մինակ: Իսկ շունը զարմանա-
լով կըսէր ետեւէն, թէ մեղք այդ ձայնիդ
ու տեսքիդ որ սիրտ չունիս. ուրեմն դոսի
տեսքին նայելու չէ եղեր, հասպա ներսի
սրտին:

Իսրայիլ է անոնց՝ որ մեծախօս և մեծագլուխ
մարդը մեծ էր համարին. վասն զի մարտաս մե-
ծութիւնը որպիսի և հոգոսն վրա է, չէ ինչ մարմ-
նոյն:

Իրավական մտաց այս ծնունդ յետին,
Որ միայն դատի տեսլեամբ արտաքին.
Յորժամ տեսնէ զյաղթանդամ մարմին,
Կարծէ զերկնաձիւր ոգին ՚ի սրտին:
Իսկ խնամանոց է կռուել զներքին,
Վառիվաւ ճրագ փայլի ՚ի նմին.
Զի այնու մարդն է այնպիսի ՚ի մարտին,
Եւ ոչ անարև զխօքն անաղին:

ՍԱՐԵԱԿ ԵՒ ՏԱՏԲԱԿ

Մի ինչ գրեր զձայն ճողովին,
Երկիր յաւէտ որ կայ լինի:

Շաք խօսողէն դոսն մի վախար,
Անի՛ն վախոյի որ կայ խոնարհ:

մծբ. Սարեակը տատրակին հետ ընկեր ըէ
լալով տեսաւ ուրուրն որ օդին մէջ կեր-
թար զարհուրելի ձայն հանելով ինչպէս որ
սովորուածին է իրեն. ատոր ձայնէն այնչափ
ստակաց որ դողալով կըսէր տատրակին, թէ
նայէ՛ ինչպէս սաստիկ սպառնալով կերթայ
ուրուրը. ես իսկաւ կը վախնամ այս ձայնէն:
Պատասխան տըւաւ տատրակը, թէ մի՛ վախ
նար անանկ ձայներէն. մի՞ այս սպառնա-
լիքս մեզի համար չէ, հասպա մկներուն և
հաւի ձագերուն համար է. մենք պէտք է
աւելի վախնանք սուսիկ բազէին ճանկերէն,
որ ձայնէն առաջ մեզի կը հասնին:

Աւելի պէպս է լի խօսողէն վախաւ, քան
իւն մեծախօսէն. վասն զի մէկին գործքը խօսելն
առաջ էր խոսարվի. իսկ մէկւնին յայնը առանց
գործքի կը պատահայ:

Քեղեցիկ խրատ խոհեմ տատրակին,
Զգո՛յ՛շ կայ ասէ որ լուիկ նստին:

Ձի փոխան գործոց բանքն են ճողովին,
Իսկ փոխան բանից գործքն են անխօսին:
Արդ մի երկնչիր 'ի ձայնէ ուժգին,
Մի 'ի սպառնալեաց անգործ զբախօսին-
Պատկան կալ յաւէտ անձայն գործողն,
Ոյր նախ քան զձայն արդիւնք լճարին:

ՓԱՐԹԱՄ ԵՒ ԱԶԳԱԿԱՆ

Որ յոյժ տենչայ յառնուլ զբոլոր,
Կորուսանէ զբարին բոլոր:

Ո՛վ որ բուրն առնէ ի ուղի,
Քիչն ու շաբլ յեռնէն իւրի:

մճիք. Տարուստ մարդ մը իր գանձը տա-
րաւ ծածուկ անտառին մէջ թաղեց մարդ-
չիւնացաւ. մինակ իր մէկ աղջականը դիտէր՝
որ գիշերանց գնաց ոսկիները հանեց գող-
ցաւ: Ատեն անցաւ երբոր եկաւ տէրը իր
գանձը նայելու, տեսաւ որ չիկայ, հասկը-
ցաւ թէ իր աղջականն է գողցեր. մտածեց
անանկ խեղք մը բանեցընել որ ոսկին տեղն
երթայ: Ուստի կանչեց աղջականն ըսաւ,
Թէ կաղաչեմ՝ վաղը մէկ տեղ երթանք ան-
տառը փորենք գանձս եղած տեղն, ու հազար
ոսկի ալ նորէն թաղենք: Նայիս դիշերանց
աղջականը առաւ գողցած ոսկիները տարաւ
տեղը դրաւ, որ այն հազար ոսկին ալ տէրը
թաղէ հոն. անկէ ետեւ բոլորը յափշտակէ:

Իսկ հարուստը երբոր գնաց դտաւ գանձը,
վերցուց տարաւ տուն:

Ո՛վ որ ցանկանաւ ի բէւ ի բիւն ու բուրն է
առնէ ի ինի, բուրնն ի բիւնն է, և ոսնէրածն
ալ ի բուրնն է:

Այսպէս որ անյագ ցանկայ բոլորին,
Վաղ կորուսանէ որ կայ 'ի ձեռին.
Ձի երբ ոչ դիտէ բերկրել 'ի մասին,
Վրիպի բերկրել 'ի բոլոր բարին:
Մի ցանկար շատն մի չափազանցին,
Ձի մի զղկեցին 'ի չափաւորին.
Հրճուեալ ընդ բարիս նշխարեալ անձին,
Նորանոր բարիք քեզ վերագրեցին:

ՈՉՍԱՐ ԵՒ ՇՈՒՆ

Ծանր է կրել վիշտս յընկերէն,
Քան յոխերիմ դիմամարտէն:

Շափ իջաւի վերսն ընկերին,
Քան խորանի խոց ի նափին:

մճիք. Վայը երբեմն ոչխար մը բռնեց խնկ
ոչխարը ամենեկին ձայն չի հանեց կեցաւ.
Գայը ապահով ըլլալով ոչխարին վրա եր-
բոր սագին անդին ժուռ կուգար, կերպով
մը ոչխարը փախաւ ազատեցաւ գայլն ձեռ-

քէն ու ընկաւ շան մը ձեռք • բայց շունն որ զինքը բռնեց անանկ սաստիկ պուսաց, որ հովիւը ձայնն առաւ հոն հասաւ աղատեց շանը բերնէն : Ինչո՞ւ համար՝ ըսաց հովիւը երբոր գայլը քեզ բռնեց ձայն չի հանեցիր, ու շունն որ բռնեց բորոր ուժովք պուսացիր : Պատասխան տըւաւ ոչխարը թէ աւելի գըժւարեցայ երբոր շնէն մնաս տեսայ՝ քան թէ գայլէն • վասն զի գայլը 'ի բնէ մեր թշնամին է • իսկ շունը պահապան ըլլալով տեսայ թէ պահապանը թշնամու թիւն կրնէ, շատ դժուարելով պուսացի :

Շափ Գառն է զնաս եւ նեղութի խաչել Բարէն Գամէն եւ աղքատիանին, Գառն թէ օրարէն • վասն զի Բարէն Գամէն էր վասն Բարութի Գեանելն թէ Լարութիան :

Ս. Երգ գ. Բնագակ էն վերք մտերմին,
 Ար յանկարծ խոցեն զսիրտ բարեկամին •
 Եթէ թշնամին ընկեր սխերիմ,
 Աչ յոյժ մերմբեալ ցաւ գործէր խորին :
 Խրատ վայելուչ ընկերականին,
 Միամիտ սիրել զընկեր գրացին •
 Բարք է անհավերջոր գաղանականին,
 Ար զիւրսն խոցէ որպէս թշնամին :

ՏԱՒՈՐՍ ԵՒ ԵՂՋԵՐՈՒԿ

Արդ մի խորչիր տանիլ փոքուն,
 Զի մի անկցիս 'ի մեծադոյնն :

 Եմէ Գեւը Գառնել Լուչն,
 Մեծ վարայ մէջ Գեւը Գեւն :

մծէ. Տաւորսը բռնեց եղջերուկ թռչուն նը, և ոտքը չուան կապեց տանը մէջ կրպաւ հէր. իսկ թռչունը գժւարեց լմարդու քով կենալու, չուանն ոտքը թռու գնաց իր բու նը նստաւ • բայց չուանը ծառին փաթորվելով արգիլվեցաւ ալ չի կրցաւ անկէ թռու չել : Աւասի կերակուր չէր գտներ ուտելու երբոր անօթի կրմեանիր՝ սկսաւ ինքը զինքը մեղադրելով ըսել • աւսոյ ողորմելու ես չի համբերեցի մարդու ծառայութի ընելու, ահա անմտութի կրմեանիմ • որչափ որ կամեցայ ապատ ըլլալ, չարաչար կապուցայ • վասն զի կապով փախելով աւելի մնասական է եղեր, քան թէ գերի ըլլալը :

Խրատ է անոնց, որ ողբով նեղութի խաչել Գամէն Գառն համար շափ Գառն մեծին մէջ կընին • վասն զի Գառնը նեղութի Գեանելն է խաչելու : Գառն այս առաջիկա իրան Խրատ Գառնելն է ինքեղանիան, եւ երբ և մարտեպետերն, որ աւելարհիկ խաչելն

Ի՞նչ քաջութիւն . ելել արեւմտեան Կէփ արաբներն
Իտապոս ըւսայ , լայն է իրենց :

Կրե՛ւ յաշխարհն զիջտ արամաբերին ,
Հարկ 'ի սկզբանէ եղաւ մահացուին .
Որ 'ի բաց փախչի տանիլ թեթեւին ,
Կ'մին հասանէ ծանր անտանելին :
Մ'որդ ժառանգաւոր արամական մասին ,
Մի՛ օտար գրեթէ զոր . քեզ պատշաճին .
Եթէ գոհ տանիս ծանունք թեթեւին ,
Թէ փոքունց անգոհ . քեզ ծանրաբեռնին :

ԿՐԻԱՅ ԵՒ ԳՈՐՏԻ

Մի՛ մեղադրեր բնութիւն արդար ,
Թէ հիմ հանուրց բարիս չարար :

Մի՛ արարիւր լէ մեծ Բան Լուսինս ,
Թէ լաւ քննէս շաք Բան ունիս :

մծի՛ . Սրիան տեսաւ որ գորտերը արագ աւ
րագ կըցաթիկէին , արտնջալով ըսաց թէ
ինչո՞ւ համար բնութիւն արեւոր է անոնց աւ
նանկ արագութիւն , և իրեն անանկ ծանրութեւն ,
որ բեռան տակ ըլլալով կամաց կամաց քարշ
կուգայ : Բայց օր մը տեսաւ որ արագիւր մտեր
է ընն մեջն ու մէկիկ մէկիկ զանոնք ջարդէ
կուտէ . սկսաւ զինքը մխիթարելով ըսել թէ
էս ինչո՞ւղ եմ , որ կը մեղադրեմ արգար բը-
նութեւն , որ ինձի ասանկ մէկ լաւ զէնք մը

արեւոր է . որով այս վտանգնեղէս ազատ
եմ , և բանէ մը վախ չունիմ :

Օրինակ է անոնք ուսման երեսն . որ մէկին լաւ
Բարի Բան մը արեւմտեան ոչէս ի՞նչ արարչան լէ
մեծ Լուսինիս . լի պէն լէ ան արեւմտեան արգար
Բաշխեր է . ո՞վ որ շաք Բարիս ունի , շաք աւ
նեղութիւն ունի :

Այս բերք են մտաց անխորհուրդ ուսման ,
Որ պշտու ցանկաց ընդ այլոց բարին .
Երբ գեղեցիկ կնչ գիտէ յօտարին ,
Կարծէ զինքն զուրկ յիրաց բնաւին :
Մի՛ ընկեր չարակն յընկեր գրացին ,
Քոյդ չեն փոքր օժիտքնկատեալ յանձին .
Եթէ մի՛ ահամբ դիտես ձերս այլոց ,
Մի՛ւսով տես չարիս ըսակցեալ նմին :

ԱՌՆԻՏՏԻ ԵՒ ԿԱՂՆԻ

Որ ոչ խորհի զգործոց վախճան ,
Չըջայ կրէ ցաւս անվախճան :

Բան մը լերած մերձ քննէ ,
Երբի ցաւս զգոհաւ լեւնէ :

մծի՛ . Սննդաները աշխատանքէ փախչելու
համար խորհուրդ ըրին իրենց մէջ , որ կաղ-
նի ծառին արմատները կրծելով վար ձգեն .

որ ելլելու ինչնելու նեղութի չի քաշելով՝
 վարեն ուտեն պտուղները: Բայց ասոնց մե-
 ջէն մէկ ծեր մը սրասասխան տրւաւ, թէ
 մենք հիմա մեզի կերակուր տրվողն որ կըտ-
 րենք. հապա եկած տարի ո՞վ մեզի կերա-
 կուր պիտի տայ. թիչ մը նեղութի չի քաշե-
 լու համար ի՞նչ խեղճով մեզի սնուցանողը
 պիտի վար ձգէք, գնացէ՛ք բաներնիդ. այս
 միտքը մէկ բանին ետքը չի մտածելէն կու-
 գայ:

Առնէ քննէ կապուի նման ինքանի, որ ծառի
 պտուղ չի ուսի ամառը. իսկ Յիսուս ի լընէն թէ լէց
 ասիս թմբած ի լը Գնայ Բան լուսի էր: Օրինակ Բե-
 բած է անիսի մարդկանց, որ եպոս լի մթածելով
 Բան ի լընէն:

Այսպէս որ կըսէ զկիրցն և վախճան,
 Կանխաւ գուշակէ զանգոյ ապագայն.
 Որով միշտ առնէ գործ աներկեան,
 Ոչինչ վրիպի անձն խոհական:
 Արդ միանխորհուրդ տուներ գործս համայն,
 Այլ որիչ մտօք քննեա՞ զապագայն,
 Զի նախկին պատճառն է վախճանական,
 Ոյր սակա եղանին ընաւք եղական.

ԶԽՈՒՈՐ ԵՒ ՁԻ

Նորասիրաց նորն է սիրուն:
 Ընտրեն զնորն հինըն թողուն:

Փորձած Բանէն է ք մի ինտր,
 Ս' աբէր հինը նորին համար:

ԺճԸ. Սէկ զինուոր մը սրավար ձի մը ու-
 նէր, որ երկար ժամանակ իրեն լաւ ծառայ-
 ու թիւն ըրեր էր ամէն բանի մէջ. իսկ զի-
 նուորը նորէն ուրիշ ձի մը գնեց, որ անշահ
 ըլլալով մէկալ ձիէն շատ վար էր: Սակայն
 տէրը նոր գնած ձին առաջինէն շատ փա-
 փուկ կըպահէր և մեծ գուժ ունէր վրան:
 Օր մը անշահ ձին ըսաց լաւ ձիուն, թէ
 դուն իսմէ շատ զորաւոր ես և լաւ ծառայ-
 ու թիւ կընես, բայց մեր տէրը զիս քեզմէ
 շատ կըսիրէ ևս խիտ լաւ կընայի: Անալ
 պատասխան տրւաւ, թէ զարմանք բան չէ,
 որովհետև սովորութիւն է մարդկանց հինը
 ձգել նորը սիրել:

Օրինակ է մարդային մթաց անհասարակութիւն.
 որ սովոր են նորը սիրել և հինէն լէր բռնել,
 Ընկէ ք Գէն ըլլայ. սակայն նորութիւն մէջ մէջ
 զնանէր Բեբեր է շար մարդու:

Ահա նշանակ անհաստատ սրտին ,
 Որ ընարէ զնորն ատէ զընարեկն .
 Ոչինչ համարի հնու թին անգին ,
 Անհատուն մտաց այն նորասիրին :
 Նորասիրութ թէ մերժես զչինն ,
 Յեղաշարժ ոգիս ցուցանես յանձին .
 Հնագիտութ թէ զննես զնորն ,
 Հնոց և նորոց գոս հետաքննին :

ԳԱՅԼ ԳԱՌԿԱԶԳԵԱՏ

Բազում գառինք ըստ արտաքնոյն ,
 Այլ քանասար գայլ ըստ ներքնոյն :

Շաբլ Դբնէն գառն է անմէշ,
 Սախայն Կերան է գառան ահեշ :

ԺԾԹ . Երբեմն գայլը վրան առաւ ոչխարին մորթը քէրին , գնաց ոչխարներուն մէջ փառնըվեցաւ , և ամէն օր մէյմէկ ոչխար կուտէր : Տէրն որ խնայաւ սպաննեց զգայլն , ու անանկ մորթը վրան կախեց ծառէն . երբոր հովեւները կըհարցնէին , թէ ինչու համար ոչխարը կախեր էս ծառէն սպտառ խան կուտար թէ մորթն որ կը տեսնէք , իբրաւ ոչխարի է . բայց ինքը գայլ է . երևցածը անմեղ գառն է , ներսը սպտառօղ գայլ է : Ուստի գրօրնը մի նայիք , ներսնը նայեցէք , որ այս անմեղ կերսլարանքով այնչափ ոչխարներս կերաւ :

Օրէնսի է ինչօտար , և խաբէբայ մարդանոց , որ սորբ էրեւալով ուրիշին քաննէ խարէն . Բայց որ ճէ խայտառակ իւրաքանչէր ինչօտարու թիւն :

Այսպէս կեղծաւորը զերթ փարխեցին ,
 Արդար ձևանան ձևովն արտայբին .
 Քաղցրաթոյն բանիւ մաքուր երևին ,
 Այլ 'ի ներքոյ են գաղան գառնագին :
 Արդ մի հաւատար կեղծութեց նոցին ,
 Որոց այլ է սիրտ այլինչ 'ի լեզուին .
 Մի քեզ բարեձև գաղանք մերձեցին ,
 Ձի մի ծախեսցիս յանգութ որկորին :

ՁԻԹԵՆԻ ԵՒ ԴԴՄԵՆԻ

Որ փոյթ ցոլայ վաղ շիջանի ,
 Կանխաբողբօջն անդէն խափի :

Շափ Էրասածը շափ իւր Էրանայ ,
 Ուր հասածը իւր Դրանայ :

մկ . Ձիթենին կը զարմանար գրուածին վերա , որ քովը փոռած էր , թէ ինչպէս քիչ ժամանակին մէջ այնչափ աճեցաւ մինչև զինքն անցաւ երկայնութիւն , որ քսան տարի առաջ էր տնկած : Բայց շատ չանցաւ , տեսաւ որ ձմեռվան մօտ չորցաւ գրուածը . անատենը ձիթենին միտքը փոխեց ու ըսաւ . երաւի յիմարու թէ նախանձիւ ատանկ շուտ

աճողներուն վրա. վն դի մեկէն մե ծցողը, շուտ
ալ կը կորսրվի եղէր : Ուրեմն շատ աղէկ է
կամաց կամաց աճիլ, ու շատ մնալ. քան թէ
շուտ աճիլ, ու շուտ չորնալ :

Շոտորով եղած Բանը շատ էի քուէր իտնցիի .
աստի պէտք է թոռու առնէ Բանի մէջ, որ ԼԵԵ-
ւայ թէ վերջ Լուսնն առնէ ի որսւլի մէջէն . վասն
քի խորհրդով եղած Բանը, թոռով Լուսնի շատ
իւր Դիմանայ :

Զինչ օգուտ պանծալ ճոխանալ հեշտին ,
Ընդ փոյթ նուազեալ խափրիկ գլխովին .
Լաւ է անազան աճիլ 'ի չափին ,
Յերկարեւ մնալ 'ի նոյն վիճակին :
Մի ցանկար փառաց փախտականին ,
Որ փոյթ ցոլացեալ անդրէն խաւարին .
Փառք են տիրապէս փառք հոգեկանին ,
Որ փայլն ընդ ձիգս յանծայր շրջանին :

ՀՈՒՆ ԵՒ ԾԱՌԱՅ

Երբ որ այրի ջրով ջերմին ,
Խիթայ մերձիլ 'ի ջուր ցրտին ,

Երած լուսնն վախոյսս իւրեւայ ,
Պաշ ջրին ալ էի ճոպէնայ :

Մկն . Պարոնի մը տուն մէկ շուն մը կար ,
որ ամէն անգամ երբոր անձրեւ կուգար գլու

նէն գուրս չէր ելեր ծակերը կը մտնէր . օր
մը տանը ծառան ուզէց շունը գուրս ընել
անձրեւի ատեն . կաղաչէր շունն որ քիչ մը
ատեն տայ իրեն , մինչև որ անձրեւ անցնի .
վասն զի առանց պատճառի չէ կրէր այս
ըրածս : Անալ հարցուց , թէ ինչ է պատ-
ճառն որ անձրեւի ատեն գուրս չես ելեր :
Պատասխանեց թէ մէկ անգամ մը գիպուա-
ծով տաք ջրին մօտեցայ , կռնակիս կաշին խա-
չեց . անոր համար պաղ ջրէն ալ կը վախ-
նամ :

Ընտիր օրինակ է պատշաճոր մարտա - որ էնէ
մէջ Բանի մը շատ քուսնէ , ամէն Բանէն պատշաճ
թիւ իւրէն , որ նորէն շատ մը էի քուսնէ :

Գեղեցիկ հանճար մտաց փորձառուին ,
Լուրջ կայ չփորձիլ 'ի նոյն վերստին .
Եթէ որ փորձի 'ի միտմ առթի ,
Պարտի արթուն կալ յամենայն առթին :
Պատշաճ յորդորակ ժիր պատանեկին ,
Առ 'ի հեռանալ յառթից վտանգին .
Թէ առարկայ ինչ փորձեաց զբեղ դեւրին ,
Մի անփորձ մերձիլ յիր ինչ բնաւին :

ՀԱՒՈՐՄ ԵՒ ՄԱՆՈՒԿ

Միտք տղայոց ձեն խոհական,
Ձոր ինչ լսեն այնպէս դեան :

Խաբէբայ Բան լընէս փղուն,
Անձեղ խօսին է անձեղայ թռն :

մկթ . Հաւորք զարկաւ տասը թռչուն ,
ու շամբունն անցուց տըւաւ տղուն որ խոր
վէ մինչև ինքը գայ . բայց երթալու ատենը
ապսպրեց որ զգնչ իենոյ , չըլայ թէ մոխի
րին մէջ ձգէ . թէ չէ՛ բորբը քեղն կըկեր
ցընեմ կըսէր : Թռչունները գրեթէ խորված
էին՝ գիպւածով տղուն ձեռքէն ընկան մո
խիթին մէջ : Տղան ալ տիրոջը խօսքին նայե
լով սկսաւ ուտել . ինը հատը կերաւ կշտա
ցաւ , մէկ հատը չի կըցաւ ուտել : Երբոր
տէրն եկաւ՝ սկսաւ տղան լալ . ան ալ հար
ցուց թէ ինչո՞ւ համար կուլաս . սրտասխա
նեց թէ յանկարծակի թռչունները ձեռքէս
ընկան , ես ալ ինը հատը կերայ մէկը չըկը
ցայ ուտել , կողաչեմ մի՛ բարկանար , վասն
զի խիստ կշտացայ : Անտենը հաւորքը մըտ
մըտալով լրաւ՝ թէ շատ զգուշութի սէտք
է եղեր տղոց բան հասկըցընելու :

Տըրբիոն-Թիւ պարզափայ ըլլալու լապ ԿԳՈՒՆ

Թիւ պէտք է վարձիւ հեփերնին . Ե գեղ օրինակ
էի ասլ իբենոյ խաբէբայն խօսքերով : Աստի՛ց իւ
սէ , թէ ինչոյններուն հեփ ինչոյն ինչոյն իւ
լայ . անպտամն հեփ ինչոյն անպտամ :

է խոհեմ մտաց վարիւ ընդ մանկտին ,
Կշուէլ և խօսիլ առաջին նոցին .

Ձի թերահատար միտք մանկականին
Ձոր ինչ և լսէ գրէ ՚ի սրտին :

Մի խօսիլ խարդախ և կամ զանտեղին ,
Ձի մի՛ չարուսոյց լցիս անմեղին .
Խօսեանց պարզ արգար ըստ հոգեկանին ,
Օրինակ բարեաց ելով համբակին :

ԴՒՈՍ ԵՒ ԿԱՊԻԿ

Իւրաքանչիւր իւրով բերկրի ,
Ձի ամենից եւրն է բարի :

Ամեն մարդու իրն է ազար ,
Թէ և ըլլայ պոխասար :

մկթ . Դիտու ուղեց իմանալ , թէ ամեն կեն
դանիներուն մէջ որուն ձաղը աւելի գեղե
ցիկ է . հրաման հանեց , որ ամեն կենդանի
իր ձագն առնէ գայ . ուստի ամենքը իրենց
ձագերովն եկան Ժողովեցան . կապիկն ալ իր
ձագը բերաւ հոն : Իսկ Դիտու անոնց վրա
նայելով սկսաւ ծիծաղել . Երբոր կապիկը
տեսաւ Դիտուն ծիծաղ երեսը՝ ուրախանա

ըով կըսէր, թէ իմ ձագս ամենէն գեղեցիկ տեսաւ, անոր համար կըխնդայ Գիոս:

Խեղճի մարտը իրեն ունեցածը Բանի Կեղևի Դնելով ուրիշին իննայի, որ իրենն ալ նախարարելու գործէ. վասն զի անխելչ մարտի միայն իրենց Բանին ինն հասնին: Սոխար գիւղի սոփային հարցոցին ինն որ էնեդանին գեղեցիկ է. ան ալ պատասխան արուստ, Բէ խրատած խորջ մարտը:

Անմիտ ինքնասէրը նմանեալ կապիկի
Ձոր ինչ և ունին համարին յարդի.
Ոչ հային յայլոց բարին ցանկալի,
Ձիւրեանցն 'ի կատար բերել անթերի:
Տէս քանի՜ չքնաղ յատարս երևի
Ձանազան օժիտ ձիրք առաքինի.
Կրթեա՞ զքոյդ ծնունդ գործով պանծալի,
Պայծառ փայլեցո՞ այլոց առաջի:

ՍԱՐԳԻ ԵՒ ԾԻԾԱՌԻՆ

Մ'ի զգեզ գնիր վէհ յաղթական,
Ձի մի վէհից լնցիս Կոխան:

Մեծերանն Կարգ Կեղևի Դնէս,
Ու ինչ ինչս ճանաչից Կեղև:

միգ. Սամուկը տեսաւ թէ ծիծեռնիկը վեր վար օդին մէջ թռչելով ճանձերը հուտէ իրեն բան չի մնար, ուղեց որ բռնէ. ուստի իրեն թէրէրէն որոգայթ մը լարեց ծիծեռնիկին ճամբուն վրան, որ ճանձի պէս բռնըվի. բայց երբոր ծիծեռնիկն անկէ անցաւ ոչ միայն պատուեց աւրեց անոր որոգայթը, այլ և մամուկն ալ հետը տարաւ զարկաւ պտտին ճղմեց. որ երբոր կրմեռնիկը, կուլար թէ իմ մահս ես ձեռքովս պատճառեցի. ճանձին յաղթելովս կարծէի թէ մեծ կենդանիներուն ալ պիտի յաղթեմ: Ահա՛ իմ տկարուիս չի ճանչնալուս համար արժեանի եղայ այս պատուհասիս:

Անիպ մարտիկ էնէ պայտի Գառու՞նի՞ ճը Գործէն, Կարծէն Բէ աշխարհս Դիմացին էի Կրնար էլէլ. Ես այս խելոյ իրենցով մեծին հէպ իրենին ու շարաւար ինն Կորսելին: Ուստի գիտուններուն առջի խրատն է. ճանաչից Կեղև:

Այսպէս ամբարիշտք կրեն զարժանին ,
 Ոչինչ չափելով զօրու թի անձին .
 Երբ իշխեն փոքունց ընդ վեհեց կռուին :
 Յորոց և անդէն կոխին սատակին :
 Արդ մի մաքաւիր ընդ վեհագունին ,
 Չի մի կորիցես նման յիմարին .
 Պատկան կ'ըլ պետաց և գիտնականին ,
 Պանծալի լըցիս 'ի շնորհս նոցին :

ՊԱՌԱՒ ԵՒ ԲՈՒՇԿ

Զանա սպահել ճրագք զառ ,
 Մի տիրեսցէ անձինդ խաւար :

Կայն՝ որ Լոյսդ որ վառ փայ ,
 Այլոյ Լոյսը Կէւ յառի ի լուսայ :

մկե . Սէկ սրտաւ մը աչքի տկարութի
 ունենալուն համար կանչեց բժիշկն , որ Ը
 ունեցընէ՛ այսպիսի պայմանով . թէ որ ա
 ուողջանայ՝ անոր ուղածը տայ . իսկ թէ չա
 ուողջանայ՝ բան մը չի տայ : Բժիշկը սկսաւ
 դէղ ընելով ամօնէն օր աչքը եղով օժէլ . բայց
 տեսաւ թէ չաուողջանար, ամօնէն գալուն մէկ
 մէկ բան տնէն գողնար կըտանէր . անանկ
 որ տանը մէջ բան չի մնաց . մինչև սրտաւն
 ալ կըցաւ տեսնել թէ տանը բաները պակ
 սեր են : Ուստի երբոր բժիշկը պահանջե
 լով կը վարձքը կը հաստատէր վկայութի .
 թէ ըւրնացաւ աչքը լաւ կը տեսնէ , պա

տատխանեց սրտաւը թէ սրտ է ամենեւին .
 վասն զի երբոր աչքս կըցաւէր , շատ բան
 կը տեսնէի տանս մէջ . հիմա որ կըտես ըւ
 ընտցար՝ ամենեւին տանս մէջ բան չեմ տես
 ներ . ինչո՞ւ պէտք է անանկ տեսնելն , որ
 ինձի պէտք եղած բաները չեմ տեսներ :

Օրինակ է անհասարկի մարդկանց . որ երե
 քէնի՛ն յ' ընելու ըլլան , իրին փաս փոքուն :
 Աստի՛ սոսք Բարբերաներէն Կփոշանաւու է , ո
 րոն՝ Բարի ընելու արենը ունեցած Բարիտ ի
 վերջենն :

Այսպէս ինքնամտան 'ի ձեռս օտարին
 Չըկի 'ի բարեաց , զոր ունէր յանձին .
 Չի սյլք վն ինքեանց տքնին վաստակին .
 Ոչ վասն ընկերին ոչ բարեկամին :
 Թէ ճրագք մարմնոյդ իցէ խաւարին ,
 Ուստի՛ քեզ ճրագք լուսատու անձին .
 Այլոց Լոյս ճրագք վասն ինքեանց վառին ,
 Ի քեզ միտագնեալ փութով խաւարին :

ՈՒՂԵՒՈՐ ԵՒ ՀԵՐԲԻՄ

Արդ մի ստեր զուխա և զերդուսն,
Ձի ոչ խաբի բարձրեան անքուն :

Հոգեորիդ սոսք մի խառնէր,
Ձի քս կրնար զԱՅ խաբէր :

մկր. Պամբորդ մը երկան ճամբորդութե մէջ անանկ կանօթենայ, որ ուխտ կրնէ թէ ինչ ուտելու բան որ գտնէ, կէսը հերմէ մին ընծայ ընէ : Կայիս որ ճամբուն վրա սլարկ մը կը գտնէ մէջը լեցուն նուշ և ար մաւ պարէ՛մ խորճայ . շուտով կը մոռնայ ուխտը ու կը նստի բոլոր կուտէ : Բայց խելքը վը սաստնութի մտածեց, ժողկեց արմաւին կուտերը և նուշին կեղևները շրտաւ սեղանին վրա, և հառաչելով ըսաց . ո՛վ մեծ հերմէս, ընդունէ իմ ուխտս, որ կատարելի . վասն զի ահա գտած բանին գրսինն ու ներսինը հաւասար բաժնելի :

Առաջին խրատ է ագահ և մաշի մարդիանց, որ հոգեոր բանի մէջ ալ խաբէրութի ին բանեցնեն : Կառայաչաները շատ անգամ հերմէս լինելու ուխտ կ'ընէին :

Տեսել զվատ խորհուրդ մտի խարդախին,
Ձխորդ արատէ զուխտն ընդ արարչին .

Կենդութի վարի 'ի հոգևորին,
Մարդկորէն չափէ զերաւունս էին :
Բարէ կյոյր մտաց նենդող ագահին
Ձրկեւ նկրտի զտիրօղ բոլորին .
Որ ըզտիրտս էից ունի 'ի ձեռին,
Դիտէ զամենայն, պատժէ ցաւադին :

ԻՆԱՄԵՂՈՒԻ ԵՒ ԿԱՔԱՒԻ

Չար է խորհուրդ չարասիրաց .
Չոր ինչ առնես, բերեն քնաս :

Երբ որ մէկին սիրքը սուր է,
Ինչ որ խօսի քնի ին բերէ :

մկր. Սլամեղուներն ու կաքաները որ մը սաստիկ ծարււցած կուգան երկրագործին կողաչեն, որ ջուր տայ իրենց . և խոտաւցան կաքաններն որ ջրին տեղը փորեն անոր էգին . իլամեղուներն ալ չորս դին ըստաւ սեղով գողերը խայթեն : Իսկ երկրագործը պատասխան տրւաւ, թէ ես երկու եղ ունիմ, որոնք աւանց բան խոտանալու իմ ամմէն բանս կրնեն . ուրեմն աւելի տղէկ է անոնց ստա՛մ բան թէ ձեզի . որ ձեք օղտին համար ինձի սուտ խոտամունքներ կրնէք :

Օրինակ է քնասիր մարդիանց . որոնց խոտաւ մտնան է աղէկութիւն ընել, իսկ գործին է քնաս

Բերէլ որբի շին : Հասարակ յարգանս ամեն ազ-
խարհի լինողն է . իսկ անհասարակն ամեն շուն
պայնս է , իբնի իմաստանը :

ժանտ վնասաբերք խոտանան բարին ,
Նիւթեւ զլարիս բերին նկրաին .
Ձի զր կամբն է չար միշտ 'ի չար հակին ,
Ոչինչ ցուցանեն 'ի բարեաց մասին :
Արդ մի թևարկու լինիր զըկողին ,
Թէև և փաղաքչէ գերթ յուշկապարկին .
Խաղապատելով յածի կաթողին ,
Մինչև ցուցցէ զկարիս անձին :

ԱՐՏՈՒՏ ԵՒ ՀԱԽՈՐՄ

Մի կերակուր և դոյզն շահ ,
Քեզ նիւթեացեն վտանգ և մահ :

Քիչ ղ հանգիստ կտոր ղ հայ
Քեզ ի լը յգէն մահին առաջ :

Ողբ . Ըրտուտ թռչունը , որ է հարեղաձաւ
դը , ամմէն օր կերթար ցորեն ուտելու . օր
մը տեսաւ զայն հաւորսր՝ որդայթ լարեց
բռնեց : Իսկ թռչունը հասկըցաւ որ աղա-
տում չունի , սկսաւ լալ . վայ անբաղբիս ,
կրակը , ես ոչ արծաթ եմ գույցեր , ոչ ոսկի ,
և ոչ մեծ չարութի մը մարդու ըրած եմ .
հասպա միայն ցորենին մէկ հատիկին համար
պիտի կորսովիմ . շատ աղէկ էր որ լեռնեւ

բուն խոտերն ուտէի , քան թէ մէկ քանի
հատ ցորենն , որ մահ հուանա պատճառ եղաւ :

Խրատ է աննոյ որ բիւ շահի համար մեծ վնաս
գի մէջ զերէն + ի լ յգէն . եւ որբի շին բիւ ղ բան
յա՛խ շահի էլու համար լարաւար ին պարթլի .
ինչպէս էլ զաւարտար չայրդ ուշու :

Որ անյագ տեն չմամբ ձկաի յուտելին ,
Սակաւ կերակուրն առ թէ մահ նմին .
Ձի անիրաւօղք յայլոց 'ի բարին
Դառն վնասին 'ի մեծի պատճին :
Մի բերիր զըկէլ զինչըս օտարին ,
Եւ մի դիմագրաւ լինիր վտանգին .
Ձի փորրիկ արկած դուզնաբեայ օգտին
Հատանէ զկեանս վերջ տայ բոլորին :

ԲՃԻՆԿ ԵՒ ՀԻՒԱՆԻ

Թէ դու չես բեղ բժիշկ ճարտար ,
Ոչինչ օգտէ բժշկաց ճար :

Երեսպաշտին երես մի գոր ,
Քեզի ինչ է իրեն պաշտ :

Ողբ . Ի՞՞ թիշկը դնաց հիւանդ մը տեսնեւ
լու , և հարցուց թէ ի՞նչպէս է . հիւանդն
ալ ըսաց թէ չափէն աւելի կը քորտնիմ . բաւ
ըն նշան է , ըսաւ բժիշկը : Երկրորդ անգամ

գնաց հոն բժիշկը երբոր հարցուց հիւանճ
դին, սրտատախան տըւաւ, թէ սաստիկ մնե-
լէն դող մը կուգայ ինձի . բարի է, ըսաց :
Դարձեալ էրբորդ անգամ գնաց երբոր հար-
ցուց, անալ ըսաւ ջրդող «Լիսայ եղայ . բա-
րի նշան է, ըսաց բժիշկը : Յետոյ իր ընտա-
նիքէն մէկը հարցուց հիւանդին, թէ ի՞նչպէս
ես : Ի՞նչպէս պիտի ըլլամ, կըսէր . ահա բա-
րի նշաններու մէջ կը մեռնիմ :

Պէտք է երես դարձնել երեսպաշտին, չէ թէ
ի՞նչ Ժամանակէն հասանելով հասապաւ խօսքին .
մասն դի տնտէն յարդիկ ամէն թի ին դատունան :

Տիպ է այս տխմար մարդահաճոյնն ,
Որ գնէրհաղանն կրէ 'ի ընդունին .
Խառնէ անպատկառ սուտն ը ճշմարտին,
Ի միում կիտի ընտրէ զերկոսին :
Քանի՞ անարգանք այն մարդէլուղին
Զիւր ուղիղ գատման զիսկն եղծանողին .
Ար 'ի սէր օգտի խօսի զանտեղին ,
Մինչև մի կարծեւ զայոն ընդ ուղին :

ԱԳԱՏ ԵՒ ՈՐԴԻ ԻՒԻ

Այլք վայելէն յինչս արհաճին ,
Ինքն է միայն սպահնակ դանձին :

Ագահն իրեն Բանին փէր չէ ,
Այլոց համար զայն ին պահէ :

մէ . Ագահ մարդ մը իր պարտէզին մէջ ու-
նէր պատուական ինձորի ծառեր . բայց մին-
չև որ ինձորները չի փթտէին մէկ հաս մը
չէր ուտէր : Իսկ որդին առատասիրտ ըլլա-
լով օր մը առաւ ընկերները պարտէզը տա-
րաւ, և ստիպելով կըսէր անոնց թէ մի՛ վախ-
նայք կերէք լաւ ինձորները որչափ կուղէք .
մինակ փթտածները մի՛ ուտէք, վն զի հայրս
պիտի ուտէ զանոնք :

Օրինակ է ագահին, որ ուրիշին համար խա-
խափի, չէ իրեն համար . Բէպէք պապասխանը
ինչը պիտի պայ այս շար ախափն համար :

Օտարը ընտանիք ժառանգ արհաճին
Քաղցր վայելէն 'ի վաստակ նորին .
Մահու չափ տքնի պահէլ զփտելին ,
Մինչև ակամայ տացէ օտարին :
Ո՛վ յիմարուէ ասպառում սրտին ,
Առի՞նչ չարատանջ յաւելու զբարին .

Երբ ոչ վայելէ զայն դանձ զայն ոսկին ,
Հին՝ վասն օտարաց տանջի դառնագին :

ՄԱՆՈՒԿ ԵՒ ԿԱՐԻՃ

Մի մերձենար յառին կենդան ,
Բազումք ունին թոյն ՚ի ստան :

Մի յօփէնար ամեն Բանի ,
Հոգո՞ւմ շնաս իոգոյ Բեւի :

մհն . Մնմեղ տղայ մը սպարտէզը կը մանէ .
և կը տեսնէ որ գեղեցիկ կը թռչէին թիթեռ
ները Բեւիէնէնէր՝ սկսաւ բռնել հետերնին
խաղալ : Յետոյ կարիճ մը տեսաւ , չգիտնաւ
լով զնայ քովն որ բռնէ : Իսկ կարիճը ըսւ
պառնալով սօջը ցըցուց ու ըսաց . հանդարտ
կեցիր , սովանելէք , ինձի մի գայիր . հիմա աւ
նանկ կը խայթեմքեզ , որ կը մեռնիս . եթէ
ամեն բանի ասանկ անխըտիր գայէլու ըւ
լաս՝ վայ է քեզի :

Երբ Է անոնց , որ ամեն յարգոս հէփ և
ամեն Բեղ միտէրպ ին վարձին . վասն Էի շափ
բան կայ որ ի ընդանաւորէ Էմարդը ինչպէս կարի-
ճը աղուէպը . ոսպի շափ անմեղ յարգի շատնի
Իրողաժ Էն :

Անմիտ պատանիք ընդ չարն ընդ բարին ,
Բերեալանկ Իորհուրդ մի աչք հային .

Բայց երբ ՚ի կարճէն մահաթոյն խայթին ,
Յայնժամ իմանան վրիպանս անձին :
Մի սպարորի անտարմը զգայականին ,
Եւ մի անտարբեր հուպ լինիր վատին .
Որչափ արտաբուստ անմեղ երեւին ,
Այնչափ մահաշունչ թիւնալից ներքին :

ԱՌԻՒԾ ԵՒ ՅՈՒՂ

Արդ մի ճաշեր ընդ թշնամին ,
Չի մահաբեր է ճաշ նորին :

Չար Բեւանան սեղան վերնաս ,
Որ Իբրոսոր Իրեն ԼԸԼԸ :

մհն . Մի ուժը միտքը դրաւ որ վարպե-
տու թի ուտէ ցուլ մը . ուստի հրամցուց ի-
րեն հարկիրը . բարեկամ , կըսէր , մէկ ոչխար
մը մորթեցի և ամեն պատրաստուեա տե-
սայ , կը լինդրեմ որ իրիկուան դուն ալ իմ
հարկիրիս մէջ գտնելիս : Յուր զնայ հե-
ռուէն նայեցաւ որ ամեն պատրաստու թի
կայ՝ բայց ոչխար չի կայ , հասկըցաւ բանը ,
սկսաւ մտախել : Ինչո՞ւ համար կերթաս ը-
սաց առեւժը . ցուլն ալ պատասխան տուաւ ,
թէ տեսայ որ հարկիրիդ ամեն բանը պատ-
րաստ է ցուլը ուտելու համար , չէ թէ ոչ
խարը :

Խաբէբայ մարտիի շար անգամ պապին ընելով,
և ընծայ աստուղի խաբէն զորիւնը. ուստի պէտք
է հետոս փախել անանի խորամանկներէն :

Դրժող դաւաճանք 'ի տիպ առիւծին ,
Յարգելով պատրեն զիրտ բարեզարդ .
Զի ճաշ և կաշառք զբազրւմն արկին ,
Յանգուծ դժբողաց կորուսիչ թակարթ :
Մի՛ քեզ քաղցրասցի ճաշ դաւաճանին ,
Մի՛ կախարդեսցի սլափն նենգողաց .
Զգնչ լեր արթուն ըստ խորագիտին ,
Թափել հնարիւք չարին 'ի ձեռաց :

ՇԽԱԿԱՆ ԵՒ ՀԵՐԻՒՒԼԷՍ

Արդ մի՛ անջան կարգար զերկին ,
Զի չիք նպաստ անգործ վատին :

Զանո՛ ընելով աղաղակ ,
Որ երկնասորն յայնչդ Է :

մհգ . Մէկ գեղացի մը իր սայլը առեր տեղ
կերթար . յանկարծ ընկաւ սայլը ջրոտ փո-
սին մէջ , որ չէր կրնար առաջ երթալ մնաց
անանկ . իսկ գեղացին թողուց զայն ու ըսկը-
սաւ Հերբիւլէս չնծին աղաչել , որ դայ սայ-
լը հանէ աղմին մէջէն : Իսկ Հերբիւլէս ծի-
ծաղէցաւ անոր վրան . ո՛ր անխելք ըսաւ ,

զարկ ձիերուդ , հրէ՛ սայլը , և հապա կան-
չէ Հերբիւլէսն , որ դայ օգնէ քեզի :

Հերբիւլէս իսմ հերակէն հին ասէնք քաջ զը-
բասոր եր , որ անպապօնի քաջագործութիւն հա-
մար հին խառպաւքները ի զպաւքին դայն , և նէ-
ղութի մէջ օգնութի ի ինչէին . որ օրինակ է
այ նախախնամութիւն , որ հարկասոր քեզը ի զ
հասնի ջանք ընողին . բայց ուր քեզ որ մարդո-
ճարը և հասրտը ի զհարնի , անպապէն ի զհասնի
վերին նախախնամութիւն . զի ծոյլ մարդէն մը
հետոս է :

Թէ խնդրես նպաստ արարող մատին ,
Վաստակեան զմատունս՛ր գործ պիտանին .
Թէ անջան կարդաս զօգնուի վերին ,
Մի՛ անկալցիս սատար երկնային :
Զանան գու ո՛վ վատ ըստ կարի անձին ,
Հասցէ քեզ յօգնել ձեռք նախագիտին .
Զի նա քեզ թողու առնել զկարելին ,
Եւ զանկարն ինքեան պահէ հրաշային :

ԳԵՂԱՋՈՒԿ ԵՒ ԽՈՋ

Թե՛ և հատցես զականջս անլուր,
Ոչ իմանայ խրատ և լուր :

Ան՝ ախանջն որ ԼԵԼ ԼԵՂԷ ,
Ին՛ և որ ընէս ԽՈՒ ԼԷ ԼԷ :

մհի . Պէ՛ղացի մը տեսաւ , որ գրացիին
խողը մտեր է արտը կապականէ ցանած գա-
րին . շատ վաճառեց մտիկ չըբաւ . անալթար
կուժի՞ զարկաւ մէկ ականջը կտրեց . բայց
խողը նորէն սկսաւ հոն մտնել , մինչև զար-
կաւ գեղացին մեկալ ականջն ալ կտրեց :
Բայց խողը՝ ամենևնին այս բանէն ետ չի կե-
ցաւ . բռնեց տիրոջը տարաւ որ մորթէ :
Իսկ տէրը երբոր գլուխը կտրեց ու ձղքեց ,
տեսաւ որ խողն ըղեղ չունի՝ շատ զարմա-
ցաւ : Մի՛ զարմանար ասոր վրա ըսաց գե-
ղացին . վասն զի թէ որ խելք և զգայութի՛ն
ունենար , երկու ականջն որ կտրեցի՛ կը հաւ-
կընար ու չէր գար նորէն իմ գարին ապա-
կաներ :

Օրինակ է պինդ գլուխն իողս մարդանց , որ
ամենախն խրատ քն ընդունի , և իրենց հասնել
լու անանկ բան ինչէն , որ պէտք է ըսել , Ի՛նչ ու
խելք անին ու մտք :

Ահա ապառու՛մ գործ անխըրատին ,
Որ ոչինչ աղքու՛մն ընդունի յանձին .
Գոյ յոյս բուսանիլ սերմն յապառածին ,
Քան յանլուր ականջ վայրագ տարտամին :
Տէս , զիտործ անգործ մնայ սերմն անգին ,
Յանհրրահանգ սիրտ ՚ի միտս անսաստին .
Ընկալ զխրատ ՚ի հերկեալ սրտին ,
Ընձիւղել բարիս զերթ սարաբտ երկրին :

ԱԳԱՏ ՀԻՒԱՆԴ

Մի գանձեր քեզ զկորստականն ,
Ձի մի՛ տացէ զքեզ կորստեան :

Զանա՛ հոգուր ոսկին շաքանայ ,
Որ երբ մեռնիս գեղի ԴԷ՛մ գայ :

մհի . Սէկ ադահ՛ մը անիրաւութի՛ շատ
հարստութի՛ն ունէր . երբոր հիւճնդցաւ , և
տեսաւ որ պիտի մեռնի , ուղեց որ իր բոլոր
գանձը բերէն առջին : Ուստի առաւ առջին
ոսկիներն ու սկսաւ հառաչելով անոնց հետ
խօսիլ . սով սիրական ոսկիներս կըսէր՝ ես
ձեզ չարացար աշխատանքներով վաստակե-
ցայ , ու դուք ինձի ամենևնին հանգիստ և
զուարճութիւն մը չի տըւիք . հասպա միշտ
տրամութիւն և նեղութի՛ն : Պատասխան տը-
ւին ոսկիները , թէ մենք զզուարճութի՛ն կըր-
նանք տալ միայն . բու ժառանգներուդ , եր-
բոր ուսելով խմելով բոլորը կը մտնեն . բայց

չլտանք թէ հոգուդ բանը՝ ի՞նչպէս սխտի
բլայ . որ հոս ալ տանջըվեցաւ , հոն ալ սխ-
տի տանջըվե :

Ո՛ւր ագահութեամբ հոս ի՞նչ գանձե՛ր հոգուդ
մարմնով ի՞նչ կորսուի . վասն զի հոս լի մեր հայ-
րենիքը , այլ երկիւնքն է . ուր պիտի ընդհարենք
յարտութան . ինչպէս ի՞նչէին հին ժիւղսո՞րաներն
ալ : Փիւղսո՞րայի մը հարցոցին , ի՞նչ հայրենիք
շաք ի՞նչ սիրեն . ան ալ երկիւնքն նայելով ըսաց .
Ի՞նչպիշաք ի՞նչ սիրեմ ի՞մ հայրենիքս :

Նանրախոհ ազահք վշտանան յանձին ,
Երրորդէլ դքանձա գործի կորուսչին .
Կարծեն թէ իշխեն ոսկոյ արծաթին ,
Բայց ինքեանք յոսկոյ դերե՛լկաշկանդին :
Քանիք ՚ի ստանալ կորստականին ,
Կորուսին զկեանս և սիրտ ընդ նսին .
Գանձե՛լքեղ լիցի ՚ի բուն հայրենին ,
Ուր յաւերժ բերկրի վերնաձեմ հոգին :

ԹՈՒ ԹԱԿ

24 մարդարէ ընդունելի ,
Եւ ոչ գիտուն յիւր քաղաքի :

Գիտուն մարդիկ պարիս լուսին ,
Իրենց քան մըջ եւ քաղաքին :

մհի . (Ո՛)ու թաղը քոսքոս գոստուն երբոր աշ
բուէլքէն եկաւ արևմուտքը՝ ամմէնքը մեծ
պատիւ կրնէին իրեն . որովհետեւ արևմուտք
չբլայր այս թուգունը : Օր մը հարցուցին թէ
ի՞նչու համար քու աշխարհքիդ մէջ քեզի
պատիւ չեն ըներ , ու հոս այսչափ պատիւ
ներ կընեն , արծըթէ և փղոսկրէ վանդակի
մէջ կըղնեն , և զանազան փափուկ կերտ
կուցներով կը պահեն : Պատասխանեց թէ
մի զարմանաք . վասն զի ամմէն տեղ վայլած
պատիւը չընելուն համար , ես հոս պատ
ւաւոր եղայ , և այս պատճառաւ գիտուն
ներն ալ իրենց քաղաքը կը ձգեն ուրիշ տեղ
կերթան , որ ընդունելի ըլլան , ու պատիւ
ունենան :

Իմաստուն մարդիկ իրենց քաղաքին , եւ ազա-
կանացը մըջ ընդունելի չեն . օտար քեզ աւելի
յարգումի ունին : Գիտունի մը հարցոցին ի՞նչ
ո՞ր ազգայններդ քեզ աւելի ի՞նչ մեծցընեն . ան
ալ պատասխան քըստ ի՞նչ մէյն գիւրգիւրս :

Բանիբուն խոհեմք գիտունք ցանկալն ր
 Չեն յարգի և մեծ յերայնոց միջի •
 Զի յաճախու թիւ ընդ մերձաւորին ր
 Գործէ զմեծարուս անարգ խոտեկն ։
 Լաւ է յարգանօք կալ յանապատի ,
 Քան անարգ մնալ 'ի մեծ քաղաքի •
 Փախիւր ուր գիտունք չնցեն յարգելն ,
 Նստեալ առ անին յառանձին տեղի ։

ԱՐԾԻԻ ԵՒ ՍԻՐԱՄԱՐԳ

Ոյժ և մաղիւ զարծիւ տգեղ ր
 Առնեն սիրուն և աջագեղ ։

Հարուստն որ լա՛ի կոչս էրենայ ,
 Քաջ իմաստան աշոբ ի ըլլայ ։

մէջէ . Երբեմն արծիւը եկաւ ուրիշ թռչուն
 ներուն մէջ նստեցաւ ու սկսաւ պարծենալ •
 չեմ կարծեր թէ կրէր ' իմէ գեղեցիկ գլու
 նըվն աշխարհքիս վրա • ահա իմ վրաս յայտ
 նի կերևնան շատ գեղեցիկ նշաններ ։ Երբոր
 իր վրայի ամմէն բանը կը գտվէր , բոլոր թռու
 չունները վախերնուն կը հաստատելին թէ
 ճշմարտ է • մինակ սիրամարդը քթին սակէն
 ըսաց կամաց մը , թէ կտուցքդ ու ճան
 կերդ քեզ գեղեցիկ են ըրեր • թէ որ ասոնք
 չըլլային , կը գտնուվէր հոս մէկն որ քեզի
 ցոյց տար , թէ ոչ միայն գեղեցիկ չես , այլ
 և խիստ տգեղ ես ։

Մեծ աւելիան անօղ մարտը գեղեցիկ ալ ի ըլլաց
 գիտան ալ որ անվէրն ամենք վախերնուն իւ
 գովէն • ինչ որ ըսէ , գլուխ ծուելով անտնի է
 ի ըսեն , ինչպէս յիմար ըլլայ • անոր համար հին
 ինչիստիաները պզեպ մեծապատաններուն անունը
 Գրեր էին անասան ասիւղէն ։

Անիմաստ փարթամք ինքեանց մէհ թուին ,
 Յանձին կարծեցեալ ունօղ բօլորին •
 Ոչ որ գիմնդիր խորհրդաց նոցին ,
 Բնաւք ծնրադիր յոխորտօղ ձայնին ։
 Այս թիւր սկզբունք թիւրեալ աշխարհին ,
 Որ զմեծուի դնէ 'ի գանձին •
 Գեղեցիկ գիտուն փարթամք համարին ,
 Թէ և խեւ տգեղ ըստ բնականին ։

ԷՇ ԵՒ ՇՈՒՆ

Որ ոչ լսէ զձայն կարօտի ,
 Չօգտի ուստեք երբ կարօտի ։
 Թէ լին հասնիբ որան արիւղի ,
 Մարտ չի հասնիբ քոս խեղճ յայնին ։

մէջ . Են ու շունը ընկեր ըլլալով միասնաւ
 կերթային • բայց իշուն վրա հաց կար բար
 ձըլած , որ աղքատներուն կըտանէր ։ Ասոնք
 ճամբան կանօթենան՝ էջը կերթայ խոտ ու
 տերու , և շունը կաղաչէ իշուն որ իրեն քիչ
 մը հաց տայ • իսկ էջը ծաղը ընտրով կըսէր

չանը, թէ խոտ կեր ինձի հետ : Այս խօսքիս վրա նայիս գայլը հոն հասաւ . սկսաւ էշն աղաչել շանը թէ չուն եղբայր, կաղաչեմ օգնէ ինձի, և հալածէ զգայլն որ զևո չի պատուէ . գիտեմ որ կրնաս այս շնորհքն ընել : Պատասխան տրուաւ շունը, թէ քիչ մը առաջ կտոր մը հաց չի տրելի ինձի, հիմա զև քեզի օգնութիւն կը կանչես . գնա կոր սըվէ ինձի անանկ ընկեր պէտք չէ, որ կարօտութեանս ատենը օգուտ մը չունի : Եւ այսպէս թողուց որ գայլը պատուեց զայն :

Խրատ է անոնց, որ որբիւն իարհամարհեն, օգնութիւն մը չեն ընէր և իբեմ աւ խեղճ իշուան . վասն զի լի է այն անանկ անպիտան, որ պէտք է զած ապենը օգնութի մը լի իարենայ ընել քոխութիւն : Շատ անգամ ունիւ աղէի քոնի մեծ բարիք Ծագեբ էն :

Բոյսք են բնական լամացականին,
 Կարեկցիլ այլոց նպաստել նոցին .
 Իսկ թողուլ զընկեր կարօտ ցաւադին,
 Բերմոնք են սրտի անասնականին :
 Թէ մատամբ մերձիս յօգուտ կարօտին,
 Բազումք թեկնածեն և բոյզ կարօտին .
 Թէ մերժես զձայն որ քեզ կարօտին,
 Կաս մնաս ՚ի վիշտս միշտ կարօտագին :

ԷՇ ԵՒ ԽՈՁ

Ջանս ՚ի գործ կրթել զմարմին,
 Մի պարարեր նման խողին :

Կրնէ զսէղ աշխատանքով,
 Թէ լէ մահին իերեսս շոտով :

մհթ . Եւ սառնիկ կրնախանձեր խողին .
 վասն զի կրտեսնէր որ առանց աշխատանաց
 բոլոր օրը կուտէր կըգիրնար . Իսկ ինքն առտուրնէ ժնչև իրկոտն բեռ կրելով հոգին կեւեր : Օր մը տէրն ուղեց մորթել զխողն, որ շատ գիրցած էր . երբոր պարկեցուցին մորթեցին, էջը զարմանալով կը նայէր . ահա պատճառը հասկըցայ թէ ինչո՞ւ համար մեր տէրը գգուելով գիրցուց խողն, որ մորթէ և իրեն կերակուր ընէ : Ուրեմն շատ աղէկ է էջ ըլլալ, քան թէ խող, և այսպէս գործ եղու իր վիճակին վրա :

Խրատ է անոնց, որ որբիւն հանգստութեց վրա ի Նախանջին . վասն զի որբաբ որսէն երջանի իբնան, այնչափ շատ նեղութեց ասի էն . անոր համար իմաստունները աշխատարաց իեանք քեքրութեան իեանքն վեր ի զբնէն :

Ահա այս վախճան է սրտաբուծին,
 Որ միայն ընու զծակ կարասին .

Բայց որչափ սարարտ լինի ժտելին ,
 Փռւթով 'ի սպանդ վարի կարգին :
 Արդ մի' նախանձիր կենաց անգործին ,
 Ջանս միշտ կրթիլ 'ի գործ պխտանին .
 Քանզի կեննքն է կեալ յօգուտ աշխրհին ,
 Այլ ոչ 'ի կորուստ բուծանել զմարմին :

ԱՔԱՂԱՂ ԵՒ ԱՂՈՒԻՍ

Իթէ անկոր յարկած չարին ,
 Փախիլ 'ի բաց հետոց նորին :

Թէ զէն քեսար անպսակն ,
 Հեռու գաիլից կոխած քեզէն :

Ի՛նչ . Սէկ աքաղաղ մը աղուէսին ձեռքն
 ընկաւ . բայց շատ աշխատելով և ջանքով
 փրցուց զինքն անոր ձեռքէն ու փախաւ :
 Օր մը մէկ քանի աքաղաղներու հետ երբոր
 ժուռ կուգար՝ տեսաւ աղուէսին մը մորթ ,
 մէկէն սկսաւ փախչիլ : Այն որ տեսան ըն-
 կերները՝ ամենքը մխտեղ վրան խնդացին .
 այնչափ որ աքաղաղը չդիմացաւ ետ դարձաւ
 բոսա իրենց . հը , թէ որ դուք ալ աղուէսին
 ճանկը մտնէիք , չէ թէ միայն մորթէն ,
 այլև կոխած տեղէն ալ կը փախչէիք դու
 ղաղով :

Օրինակ է պիտանաոր յարգուս որ ամեն պարս-

գաները զի պէտք է անան ի ըստ անանայ , որ նորէն
 գործունէ մէջ լինի . եւ ամեն բանի մէջ գործ
 ի ըստ :

Խոհական մտաց այս գործ փորձառուին ,
 Փախչի 'ի հետոց դատան փորձողին .
 Չի կրեալ արկածք տպանան խորին ,
 Առ 'ի ոչ փորձիլ 'ի նոյն վերստին :
 Ի էր չըջահայեաց յամենայն առթիւն ,
 Չի անսպասու կան դարանք ոտիսին .
 Թէ արթուն գնաս և հսկող յանձին ,
 Անգործ մասն հաղբք դարանակալին :

ԻՇ ԵՒ ԳԱՅԼ

Որ յանտուր գործ ինչ միտի ,
 Գանկւք վշտօք ծանր տուժի :

Չի սորված բան ընել ուղես ,
 Ծաւր ի ըստ մեծ զէն ի ընէս :

Ի՛նչ . Իբրեւն իշուն ոտքը փուշ կը մտնէ ,
 որ շատ կը տանջուի փուշին ցաւէն . ուս-
 տի տեսաւ որ գայլը վրան կուգայ՝ սկսաւ
 ողորմուկ ձայնով աղաչել . ո՛վ գայլ կրտէր ,
 ահա այս ցաւս զիս պիտի մեռցունէ ու ազ-
 ուաներուն կերակուր պիտի ըլլամ , քեզմէ
 օգնուի մը կը խնդրեմ , ինձի շնորհք ընելով
 հանէ՛ տոբէս փուշը , գոնէ աւանց ցաւի մեռ-
 նիս : Իսկ գայլը ուրախանալով մօտեցաւ իրեն ,

և առջևի անուաներովը բռնեց վուշը կամաց մը հանեց ոտքէն : Սակայն էշը մոռնալով քաշած ցաւը՝ կից մը զարկաւ երեսին որ տկուաները թափելով պատուէց գայլին ճակատն ու վախաւ : Երբոր գայլին խէչքը գլուխն եկաւ՝ սկսաւ ինքիրեն ըսել թէ աղէկ եղաւ ինձի : որովհետեւ ես անասուններուն մնացործութիւնը սորված էի , հիմա ուղեցի ըլլալ անոնց վերաբոյժ ձեռան :

Որոնք որ իրենց սովորական արուեստքը ինձի են՝ ու լի սորված Բանի յետոք ինչ պարտէն՝ ծառը ինչան եւ մէջ վառնալի մէջ ինչնին :

Որ ձգէ զգործս սովորականին ,
 Միտի յանսովորն 'ի ճահ օտարին .
 Անդ խոյտառակեալ տուժի եւ ծաղրի ,
 Անազան ուրէք մեղադրի ինքնին :
 Արդ մի գահալէժ լինիր յառնելին ,
 Եւ մի ոստոստեր 'ի միոյ առ մին .
 Անասան կացեալ 'ի քոյր վիճակին ,
 Յաւերժանաս միշտ 'ի գերազուենին :

ԱՂՈՒԻՍ ԵՒ ԱՌԻԻԾ

Երբ յաճախէ սկսան ընդ ռամկին ,
 Կորուսանէ պատիւ անձին :

Մէջն որ ուսմիկն շաք էրեւոյ ,
 Անորդ եւ յաժ մարտ մը ինչայ :

մէջ . Այլուէսը բնաւ առիւծ չէր տեսած . եղաւ որ օր մը գիտնցն էլաւ , անանկ սաստիկ վախցաւ որ քիչ մնաց կը մեռնիր : Երկրորդ անգամ էրբոր տեսաւ , վախցաւ , բայց առաջինին պէս չեղաւ : Իսկ երրորդ անգամ որ տեսաւ առիւծը՝ ամենակին վախ մը չունեցաւ , համարձակ սկսաւ հետը խօսիլ , և ինքիրեն ըսել թէ վախն ու ակնածութիւնն է կղեր մեծութիւնը արւօղը , չէ թէ մեծ մարմինը և մեծ անունը :

Որքա՜ մէջ եւ սոսկալի Բան ըլլայ , էրբոր շաք անգամ ինչ արեսնելի , վախը իերեւոյ եւ հասարակ Բան մը ինչայ : Այս պարագայում հին ապենը էրեւելի ինքնագործութեան , եւ քորմերը ինչ անգամ մարդու իերեւոյին . եւ էրբ ժողովարարը զանոնք ինչ արեսներ , կարծէր թէ երկինքէն էլա՞ծ են :

Գլխապէտք ինչանք 'ի վե՛հ վիճակին ,
 Յանցաւ երևել ռամկաց հարկադրին .

Ձի յաճախութն կարճէ զյարդ անձին ,
 Թէ և մեծայորդ իցեն ահագին :
 Իսկ դո՛ւ վերանցեալ 'ի պատիւ կարգին ,
 Մի յաճախ նասիր 'ի ժողով առական .
 Կշռելով զանձինս զնօսս զտեղին ,
 Վէհնապանծ բաղմեաց առաջն նոցին :

ԳԱՅԼ ԾԵՐԱՅԵԱԼ

Բաղում ընկերք ճոխ մեծատան ,
 Ոչ որ մերձի յաղքատ սեղան :

Մեծ սեղանին շաք ընկեր իայ ,
 Աշտապին քով յարդ յը լերնայ :

մձի . Պայլ մը անանկ ծերացած էր , որ
 ոչ կերակուր կրնար գանել և ոչ մէկն իրեն
 բան կուտար . անանկ որ ամենքը զինքը կը
 հալածէին : Օր մը ելաւ անտառ դնաց , և
 հոն գտաւ մէկ մեռած եղ մը՝ վաղեց ուսե-
 լու : Բայց ուրիշ դայլերը մէկէն հոսն ա-
 ռին հոն թափեցան , որ ուտելով օգնեն ի-
 րեն . վան զի ընկեր ենք կրակին : Իսկ ծե-
 րը բարկանալով կրտէր . հինմ որ կերակուր
 ունիմ ամենքնիդ ինձի ընկեր եղաք . և եր-
 ըր բան չունէի , մէկերնիդ զիս ընկեր չէիք
 ճաննար ու միաբան զիս կը հալածէիք . ու-
 րեմն ունեցած իս ընկեր էք , չէ թէ ինձի :

Մեծ-նիլը աւելի բարեխոս ինքսանայ , քան
 թէ ինչպէ . և այս սոսք բարեխոսերը որւաք օ-
 գոսք քեանէն՝ ին յօքէնան . և երբոր խախու-
 րու-նեան հանդիպի մեծաբոսնը՝ դռնէն աչ լին
 անցնի , որ գիշեր ցրելի դռնէն լինի պախեր :

Ահա տարացոյց այժմեան վիճակին ,
 Որ տայ զյարգուի փառաց և պատուին .
 Ոչ որ բարեկամ բուն բանականին ,
 Այլ ամենքեան մեծութե նոցին :
 Չիք քեզ մերձաւոր թէ էս աղքատին ,
 Թէ և վեհապանծ և ճոխ յիմաստին .
 Թէ աղքատ մտօք և ճոխ 'ի գանձին ,
 Ի ծուռն իջանեն քեզ բոլորեքին :

ԳԱՌԵ ԵՒ ԳԱՅԼ

Որ կայ հնազանդ ձայնի վեհին ,
 Անգործ առնէ նեաղա չարնայ :

Ո՛ւ որ հրապար է իր մեծին ,
 Վնաս և շար էի գար անին :

մձի . Պայլը տեսաւ որ գառնուկ մը կեր-
 թար այժին հետ՝ սկսաւ անոյշ խօսքերով
 լսել թէ ինչո՞ւ համար թողուցիր մայրդ ,
 ու այս գարշահոտ այժին ետեւէն կերթաս .
 դարձիր մորդ քով , որուն ստինքը կաթով
 լեցուն են : Այս խօսքերով կը ջանար այ-
 ծէն զատել , որ զիւրաւ յափշտակէ զգառն :

Ան ալ պատասխան տըւաւ, թէ մայրս զիս
առ որ յանձնեց. ուստի աւելի կուզեմ հնա
զանդ ըլլալ մօրս քան քեզի, որ կեղծաւոր
խօսքերովդ կուզես զիս ասկէ հանել ու
պատուել:

Ով որ Բնօրհան խօսքին նայելով անհնազանդ
իւլեայ, հարեալ է ի որսւելի. խրատ ըլլայ ման
կանց, որ լաք ընկերներուն հասարակով իրենց
մեծին լի հեռանան:

Այսպէս փաղաքշէ նենգօղ թշնամին,
խորամանկ բանիւ զտիրա անմեղին.
Տքնի ճողտարեւ ի ձեռաց վեհին,
Զ ի ծախեսցէ զայն ի ժանիս հեշտին:
Մի լսեր զձայն կորուսիչ թովջին,
Կազելի բանիւ զքեզ խարդախողին.
Հնազանդ եւ հլու կայ մեծաւորին,
Հարեալ զքերան գազան բանասրկուին:

ԵԶԵԱՎԱՐ ԵՒ ԵԶԵՆԻ

Որում խնդր դք կարօտի,
Զայն երազէ ի գիշերի:

Ինչ բանի որ մարդ փոփոքի,
Երազին մէջ դայն իւր փեմի:

մ.Ճ. () որ մը եղնավարը կրմանէ եզներուն
գամը, կըտեսնէ որ բողբոն ուրախու թէ մէջ
են, կըհարցընէ թէ ինչ պատճառաւ ա
սանկ կուրախանար: Անոնք ալ պատասխան
տըւին, թէ այս գիշեր երազ տեսանք, որ
մեզ մէկ խիստ զըւարձալի գաշտի մը մէջ
տարեր խոտ կը կերցընէիր՝ անոր համար
